



Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի  
Վանաձորի գրասենյակ



ՁԵԿՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության դատական և  
իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների  
ռազմավարությունից բխող գործողությունների կատարման  
վերաբերյալ (2019-2020 թթ.)

Վանաձոր  
2021

- ❖ Հեղինակ՝ Անահիտ Ղազարյան
- ❖ Խմբագիրներ՝ Արթուր Մաքունց, Մարիամ Անտոնյան

Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ: Չեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ներածություն.....	4
1.1 Մեթոդաբանություն .....	7
1.2 ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող և 2019 և 2020 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման ընթացքում բացահայտված խնդիրներ .....	12
1.3 Գործադիր ամփոփում և առաջարկություններ.....	15
2. ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող և 2019-2020 թվականներին կատարման ենթակա գործողությունների վիճակի վերլուծություն ըստ նպատակների.....	21
Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրական ժողովրդավարության հաստատում և իրավունքի գերակայության ամրապնդում.....	21
Սահմանադրական բարեփոխումների անցկացում .....	22
Ընտրական օրենսդրության բարեփոխում .....	23
Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ .....	31
Իրավապահ համակարգի բարեփոխում.....	66
Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխում .....	79
Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում .....	85
Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում .....	88
Սնանկության համակարգի արդյունավետության բարձրացում.....	97
Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում .....	101
Փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացում .....	102
Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրում.....	106
Արդարադատության բնագավառի էլեկտրոնային համակարգերի և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում.....	112
Գործողությունները, որոնք չեն կատարվել կամ դրանց կատարումը հետաձգվել է ՀՀ-ում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով հայտարարված ռազմական դրության և նոր կորոնավիրուսային համավարակի հետևանքով.....	116

2019 թ. հոկտեմբերի 19-ին ընդունված [ՀՀ կառավարության թիվ 1441-Լ որոշմամբ](#) հաստատվել է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. ռազմավարությունը (N 1 հավելված) և դրանից բխող 2019-2020 թթ. (N 2 հավելված), 2021-2023 թթ. (N 3 հավելված) գործողությունների ծրագրերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. ռազմավարությունից բխող էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագիրը՝ (N 4 հավելված):

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, (այսուհետ նաև՝ ՀՔԱՎ գրասենյակ կամ Կազմակերպություն) կարևորելով Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. ռազմավարությունից (այսուհետ նաև՝ Ռազմավարություն) բխող գործողությունների պատշաճ և ժամանակին կատարումը, իրականացնում է մշտադիտարկման աշխատանքներ: 2020 թ. մայիսի 25-ին Կազմակերպությունը հրապարակել է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. Ռազմավարությունից բխող 2019-2020 թթ. գործողությունների ծրագրով (այսուհետ նաև՝ Ծրագիր) նախատեսված, 2019 թվականի ընթացքում և մինչև 2020 թ. առաջին եռամսյակը կատարման ենթակա միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ [տեղեկանք](#):

Շարունակելով Ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի մշտադիտարկումը՝ սույն զեկույցով Կազմակերպությունը ներկայացնում է 2019-2020 թթ.-ի ընթացքում կատարման ենթակա գործողությունների վերաբերյալ ամփոփ գնահատականը:

Ռազմավարության հիման վրա կազմվել են երեք գործողությունների ծրագրեր.

- կարճաժամկետ (2019 թ. 2-րդ կիսամյակից մինչև 2020 թ.),
- երկարաժամկետ (2021 թ. մինչև 2023 թ.),
- էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման վերաբերյալ առանձին գործողությունների ծրագիր (2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2023 թվականը):

Սույն զեկույցի ուսումնասիրության առարկա են դարձել Ռազմավարությունից բխող 2020թ. կատարման ենթակա թվով 69 կարճաժամկետ գործողությունները:

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ.-ի ռազմավարությունից բխող 2019-2020 թթ. կատարման ենթակա գործողությունները ներառված են N 2 Հավելվածում: Այն նախատեսում է 13 նպատակներով թվով 60 գործողություններ, որոնք ենթակա են վերջնական կատարման 2019-2020 թթ. ընթացքում:

N 4 Հավելվածով նախատեսվում է 2020 թվականին կատարել 9 գործողություն, որից թվով 4 գործողություն ենթակա է վերջնական կատարման 2020 թ. ընթացքում, իսկ 5 գործողությամբ մասնակի կատարում (կատարման մեկնարկ) է նախատեսվել 2020 թ. ընթացքում, սակայն վերջիններս ամբողջական ենթակա են կատարման 2021թ. ընթացքում:

Ձեկույցում ուսումնասիրվել են ռազմավարական գործողություններն ըստ ներքոնշյալ նպատակների.

Հավելված 2. Նպատակ 2. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրական ժողովրդավարության հաստատում և իրավունքի գերակայության ամրապնդում

Նպատակ 3. Սահմանադրական բարեփոխումների անցկացում

Նպատակ 4. Ընտրական օրենսդրության բարեփոխում

Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում

Նպատակ 6. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում

Նպատակ 7. Կոռուպցիայից և հովանավորչությունից գերծ դատական համակարգ

Նպատակ 10. Իրավապահ համակարգի բարեփոխում

Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխում

Նպատակ 12. Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում

Նպատակ 13. Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում

Նպատակ 14. Սնանկության համակարգի արդյունավետության բարձրացում


Նպատակ 15. Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում

Նպատակ 17. Փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացում

Հավելված 4. Նպատակ 1. Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրում

Նպատակ 2. Արդարադատության բնագավառի էլեկտրոնային համակարգերի և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում

**Գծապատկեր 1. 2019-2020 թթ. կատարման ենթակա գործողությունների թիվն ըստ նպատակների**



## 1.1 Մեթոդաբանություն

ՀՔԱՎ գրասենյակի գործունեության ուղղություններից է մարդու իրավունքների պաշտպանության և դատաիրավական համակարգի զարգացման ուղղությամբ պետության կողմից իրականացվող ազգային ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի մշտադիտարկումը:

Կազմակերպությունն ունի տարբեր պետական ծրագրերի, ռազմավարությունների մշտադիտարկման մեթոդոլոգիայի կիրառման հաջողված փորձ, որի հիման վրա էլ մշակվել և իրականացվել է սույն գնահատումը:

Մշտադիտարկումը իրականացվել է Կազմակերպության իրավական վերլուծությունների և նախաձեռնությունների բաժնի կողմից:

Ռազմավարությունից բխող գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով ուսումնասիրվել են պաշտոնական էլեկտրոնային աղբյուրները, մասնավորապես ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ նաև՝ ՀՀ ԱՆ) պաշտոնական կայքը ([www.moj.am](http://www.moj.am)), դրանում հրապարակվող կիսամյակային հաշվետվությունները:

- [«Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և 2020 թվականի դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրերի 2020 թվականի երկրորդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը,](#)
- [«Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի 1441-Լ որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրերի 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը:](#)

Տեղեկատվություն ստանալու նպատակով հարցումներ են ուղարկվել ծրագրով գործողությունների պատասխանատու ճանաչված պետական մարմիններին: Հարկ է նշել, որ որոշ գործողությունների կատարման վերաբերյալ հարցումներին ի պատասխան տրամադրվել են ընդհանրական պատասխաններ կամ այդ գործողության բովանդակությանը չհամապատասխանող տեղեկատվություն:

Ուսումնասիրվել են Ռազմավարության գործողությունների կատարման ցուցիչ հանդիսացող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում

հանրային քննարկման դրված օրենսդրական ակտերի նախագծերը և ՀՀ Ազգային ժողովում շրջանառված և ընդունված օրենսդրական փոփոխությունները:

Իրավական ակտերի նախագծերում նախատեսված կարգավորումները դիտարկվել են Ռազմավարության գործողությունների ծրագրի ցուցիչների լույսի ներքո, ստուգվել է կարգավորումների համապատասխանությունը ներպետական և միջազգային չափանիշներին:

Գործողությունների իրականացման մակարդակը գնահատվել է ըստ հետևյալ սանդղակի.

- ✚ իրականացված,
- ✚ մասնակի իրականացված,
- ✚ մեծամասամբ իրականացված,
- ✚ մեծամասամբ չիրականացված,
- ✚ չիրականացված,
- ✚ կրկնվող գործողություններ, ինչպես նաև գործողություններ, որոնց կատարումը չի բխում գործողությունների ծրագրից կամ գործողություններ, որոնք պարունակվում են այլ միջոցառումներում:

Գործողությունների կատարումը գնահատվել է ըստ Ռազմավարությամբ սահմանված ակնկալվող արդյունքի: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ թեև կարևորվել է մի շարք գործողությունների կատարման ուղղությամբ իրականացված լայնածավալ միջոցառումները, սակայն դրանք գնահատվել են չիրականացված, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ միջոցառումները չեն հանգեցրել գործողության համար սահմանված ակնկալվող արդյունքին:

Սույն զեկույցի իմաստով գործողությունը գնահատվել է ամբողջությամբ իրականացված այն դեպքում, երբ գործողության բոլոր բաղադրիչները կամ միաբաղադրիչ գործողության դեպքում գործողությունը ամբողջությամբ իրականացվել է՝ ապահովելով Ռազմավարությամբ սահմանված ակնկալվող արդյունքը: Այս գնահատականի դեպքում քննարկվում է նաև գործողության ժամանակին իրականացված լինելու հանգամանքը:

Գործողությունը գնահատվել է կիսով չափ իրականացված այն դեպքում, երբ ի կատարումն գործողության ձեռնարկվել են Ռազմավարությամբ նախատեսված արդյունքի ձեռքբերմանն ուղղված միջոցառումների կեսը:

Գործողությունը գնահատվել է որպես մեծամասամբ իրականացված նախատեսված միջոցառումների կեսից ավելիի կատարման դեպքում (50+1%):



Գործողությունը գնահատվել է որպես մեծամասամբ չիրականացված, երբ թեև ձեռնարկվել են որոշակի քայլեր գործողության կատարման ուղղությամբ, սակայն դրանք աննշան են ակնկալվող արդյունքի ձեռքբերման տեսանկյունից:

Գործողությունը գնահատվել է որպես չիրականացված ակնկալվող արդյունքի տեսանկյունից որևէ միջոցառում չձեռնարկելու կամ գործողության բովանդակությունից էապես շեղվող միջոցառումների կատարման դեպքում:

Գործողությունը սույն զեկույցի իմաստով գնահատվել է չկատարված նաև այն դեպքում, երբ գործողությունը կատարվել է, սակայն որոշ խոչընդոտների պատճառով անհրաժեշտություն է առաջացել կրկին կատարել գործողությունը, քանի որ գործողությունից բխող հետագա արդյունքի ձեռքբերումը անհնար է եղել առաջին կատարմամբ<sup>1</sup>:

Կրկնվող կամ Ռազմավարությունից չբխող են գնահատվել այն գործողությունները, որոնք Ռազմավարությունը նախատեսել է մեկից ավելի անգամ կամ առանձին կամ որպես մեկ այլ գործողության բաղադրիչ կամ գործողության կատարումը մեկնարկվել է նախքան Ռազմավարության ընդունումը:


Հարկ է նշել նաև, որ որոշ բազմաբաղադրիչ գործողություններ գնահատվել են ն՝ կատարման ցուցիչներով (իրականացված, մասնակի իրականացված, մեծամասամբ իրականացված, մեծամասամբ չիրականացված), ն՝ կրկնվող կամ Ռազմավարությունից չբխող ցուցիչով: Նշված գործողությունները Գծապատկերներում դրսևորված են մեկից ավելի ցուցիչների ներքո:

Այսպիսով, սույն զեկույցում կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝


- ամբողջությամբ իրականացվել են՝ 16 գործողություն (23,18%),
- մասնակի իրականացվել են՝ 12 գործողություն (17,39%),
- մեծամասամբ իրականացվել են՝ 5 գործողություն (7,24%),
- մեծամասամբ չեն իրականացվել՝ 6 գործողություն (8,69%),
- չեն իրականացվել՝ 24 գործողություն (34,78%),
- կրկնվող գործողություններ կամ գործողության կատարումը չի բխում Ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից 6 գործողություն (8,69%): (Տե՛ս Գծապատկեր 2):

<sup>1</sup> Սույն զեկույցում առկա է նման մեկ գործողություն՝ «Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կազմն ու աշխատակարգը սահմանող փաստաթղթի (կազմավորման կարգի) մշակում, ընդունում և հանձնաժողովի ձևավորում» գործողությունը:

**Գծապատկեր 2. 2019-2020թթ. կատարման ենթակա գործողությունների գնահատումը**



**Գծապատկեր 3. Գործողությունների կատարման վիճակը ըստ նպատակների**



Ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրերով նախատեսված միջոցառումները կոչված են ապահովելու անկախ, անաչառ և հանրության առջև հաշվետու դատական համակարգ, ինչը նաև բարձրացնելու է հանրության վստահությունը դատական համակարգի նկատմամբ: Դատական իշխանության և հանրության միջև համագործակցությունն ու արդյունավետ հաղորդակցությունը ապահովելու, ինչպես նաև բնակչության շրջանում դատական իշխանության դերի, առաքելության վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ Ռազմավարությամբ որպես առանձին գործողություն<sup>2</sup> ծրագրվել է կազմակերպել հանրային իրազեկման աշխատանքներ, որոնց շրջանակներում հանրությունը կիրազեկվի դատական բարեփոխումների ընթացքի, դրանց արդյունքում արձանագրված հաջողությունների, դատարանների գործունեության բարելավման, արդարադատության մատչելիության

<sup>2</sup> Գործողության կատարման ընթացքի վերաբերյալ գնահատականը ներկայացված է սույն զեկույցի համապատասխան բաժնում:

բարձրացման, դատարանի անկախության երաշխիքների գործնական կիրառման մասին, ինչի արդյունքում կբարձրանա վստահությունը դատական իշխանության նկատմամբ:

Այս միջոցառումների ցանկում չափազանց կարևոր է բարեփոխումների ընթացքի վերաբերյալ հանրության իրազեկումը, ինչն, ի թիվս այլնի, կատարվում է նաև Ռազմավարության գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ հրապարակվող հաշվետվությունների միջոցով: ՀՀ ԱՆ իր պաշտոնական կայքում հրապարակել է Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրերի 2020 թվականին կատարման ենթակա գործողությունների 2020 թվականի [առաջին](#) և [երկրորդ](#) կիսամյակների հաշվետվությունները (այսուհետ նաև՝ 2020 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների հաշվետվություն): Ըստ այդմ, գործողությունների մշտադիտարկումը իրականացվել է նաև հիմք ընդունելով հաշվետվություններում պարունակվող տվյալները և հիմնավորումները, ինչպես նաև պատասխանատու մարմիններից ստացված տեղեկատվությունը:

1.2 ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող և 2019 և 2020 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման ընթացքում բացահայտված խնդիրներ

Ռազմավարությամբ սահմանված գործողությունների ծրագրի և վերջինիս ընթացքի վերաբերյալ հրապարակված Հաշվետվությունների, Համակարգող Խորհրդի կիսամյակային հաշվետվությունների և տարեկան ամփոփ զեկույցի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ խնդիրները.

1. Ռազմավարության գործողությունների ծրագրի մի շարք գործողություններ իրենցից ըստ էության ենթադրում են ոչ թե գործողություն, այլ ռազմավարական ուղղություն, չունեն որոշակիության բավարար աստիճան, պարունակում են հոչակագրային ձևակերպումներ, ըստ այդմ պարզ չէ, թե կոնկրետ ի՞նչ իրավակարգավորումներն են փոփոխվելու: Նշված խնդրով պայմանավորված գործողությունները չեն կարող ունենալ կատարողականի գնահատման ցուցիչ, քանի որ չեն սահմանում կոնկրետ խնդիր և դրա լուծմանը միտված կոնկրետ միջոցառում: Նշված խնդիրն արձանագրվել է Ռազմավարության գործողությունների ծրագրի դիտարկված 69 գործողություններից 4 գործողություններում: Մի շարք գործողությունների դեպքում նախատեսված է օրենսդրական փոփոխությունների իրականացում, սակայն կոնկրետ նորմերի կամ ինստիտուտների ակնկալվող փոփոխությունները նշված չեն: Շատ քիչ դեպքերում օրենսդրական փոփոխության ակնկալվող բովանդակությունը բացահայտվում է Ռազմավարության միջոցով: Հարկ է նշել, սակայն, որ օրենսդրական բարեփոխման բովանդակությունը պետք է նախատեսված լինի հենց գործողությունների ծրագրում: Բացի այդ, Ռազմավարությունը պարունակում է այնպիսի ընդհանրական գործողություններ, ինչպիսին է, օրինակ, դատական իշխանության

դերի ընկալման և վստահության բարձրացման իրազեկման միջոցառումների անցկացումը, սակայն իրականացվելիք միջոցառումները նախատեսված չեն:

2. Որոշ գործողություններ ձևակերպված են համապատասխան ռազմավարական ուղղության դաշտի թվարկման մեջ, սակայն առկա չէ աղյուսակում դրանց վերաբերյալ տեղեկատվությունը: Խնդիրը նրանում է, որ աղյուսակում նախատեսված է յուրաքանչյուր գործողության պատասխանատու մարմին(ներ)ի, ելակետային դրության, թիրախային փուլերի, ստուգման միջոցի, ակնկալվող արդյունքի, ֆինանսավորման աղբյուրի վերաբերյալ տեղեկատվությունը, առանց որի անհնար է կատարել գործողությունը, ըստ այդմ և քննարկել գործողության կատարման վիճակը: Ընդ որում, ՀՀ ԱՆ հաշվետվություններում նման գործողությունները նույնպես չեն ներառվում: Մասնավորապես, Նպատակ 10-ի «Դատախազության համակարգի բարեփոխում» ռազմավարական ուղղությունն ըստ Ռազմավարության 2-րդ հավելվածի պարունակում է 4 գործողություն, որից մեկը, սակայն, տեղ չի գտել անմիջապես գործողությունների աղյուսակի մեջ:
3. Գործողությունների ծրագրով սահմանված գործողություններից թվով 15 գործողություն չի կատարվել կամ կատարումը հետաձգվել է ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության և ստեղծված նոր կորոնավիրուսային համավարակի հետևանքով<sup>3</sup>: Ռազմավարության գործողությունների կատարման ժամկետների փոփոխություն չի կատարվել, հաշվետվություններում հետաձգված գործողությունների կատարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Կազմակերպության՝ գործողությունների կատարման վերանայված ժամկետների պարզմանը ի պատասխան՝ ՀՀ ԱՆ նշել է, որ հետաձգված գործողությունների կատարման ժամկետների վերանայումը կարող է իրականացվել դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. ռազմավարության վերանայման շրջանակներում՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալուց և ՀՀ կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրի հաստատումից հետո: Նշված իրավիճակը խիստ մտահոգիչ է, քանի որ ստացվում է, որ թվով 15 գործողություններ չեն կատարվել և անհայտ է, թե երբ կկատարվեն, ընդ որում խոսքը կարճաժամկետ (2019թ. 2-րդ կիսամյակից մինչև 2020թ.) գործողությունների մասին է, որոնք, ինչպես նշվում է Ռազմավարության 1-ին հավելվածում, պահանջում են հրատապ լուծում: Այսպիսով, չիրականացված կամ հետաձգված գործողությունների իրականացման նոր ժամկետների բացակայությունը կասկածի տակ է դնում նշված գործողությունների և դատաիրավական բարեփոխումների իրականացման փաստը ընդհանուր առմամբ:
4. Նախորդ ծրագրերի գնահատում չի իրականացվել, վեր չեն հանվել ձեռքբերումները, ձախողումների պատճառները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն Ռազմավարությունը մի շարք դեպքերում նույնությամբ կրկնում է նախորդ տարիների ռազմավարությունների գործողությունները՝ նշված պահանջի կատարումը հրամայական է: Իրավական և դատական

<sup>3</sup> Տե՛ս սույն Ձեկույցի Հավելված 1-ը::

բարեփոխումների նախորդ՝ 2012-2017 թթ. ռազմավարական [ծրագրում](#) և դրանից բխող միջոցառումների ցանկում նախատեսված են միջոցառումներ, մասնավորապես, հանրային պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ բարեփոխման, վարչական իրավախախտումների, քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ընդունման վերաբերյալ գործողություններ, որոնք ներառվել են նաև գործող ծրագրում: ՀՀ ԱՆ կայքէջում հրապարակվող հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործողությունների կատարման վիճակի գնահատման չափանիշները և մեթոդաբանությունը պարզ չեն, անհասկանալի է, թե ինչ հիմնավորմամբ է գործողությունը նշվում որպես «մասնակի կատարված» կամ «կատարված»:

5. Մի շարք գործողությունների կարգավիճակը նշված է որպես կատարված, սակայն հստակ ներկայացված չեն այն գործողությունները, որոնք իրականացվել են ի կատարումն նշված միջոցառման, ընդ որում, մի քանի բաղադրիչներից կազմված գործողությունների դեպքում Հաշվետվությունում պետք է նշվեն յուրաքանչյուր բաղադրիչի կապակցությամբ կատարված միջոցառումները:
6. Հաշվետվություններում մի շարք չիրականացված գործողություններով անգամ չի նշվել գործողությունների չկատարման պատճառը, ինչը հակասում է հանրության առջև հաշվետվողականության սկզբունքին:
7. Մասնակի կատարված գործողությունների կապակցությամբ Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն չկատարված մասի և վերջինիս իրականացման ժամկետների վերաբերյալ:
8. Վերացական, ոչ ամբողջական և ոչ բովանդակային տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ, ընդ որում խոսքը վերաբերում է ոչ միայն Հաշվետվություններին, այլ նաև Ռազմավարության գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ ի պատասխան իրականացրած հարցումների:
9. Գործողության իրականացնելու և վերջինիս վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու փոխարեն Հաշվետվությունում քննարկման առարկա է դարձվել գործողության կատարման նպատակահարմարությունը:
10. Դասընթացների/սեմինարների, վերապատրաստումների և/կամ այլ իրազեկման միջոցառումների իրականացումը չի ուսումնասիրվել պատասխանատու մարմինների կողմից դրանց ազդեցության գնահատման տեսանկյունից:
11. Արձանագրվել է խնդիր նաև Համակարգող խորհրդի գործունեության հետ կապված: Մասնավորապես 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 14-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Կառավարություն իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունը, իսկ տարեվերջին՝ տարեկան ամփոփ զեկույց: Համաձայն տարեկան ամփոփ զեկույցի՝ արտակարգ և ռազմական դրությունների պատճառով՝ դիտարկվող ժամանակահատվածի համար Ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրերով նախատեսված աշխատանքների մի մասը չեն կատարվել, կատարվել են մասնակի կամ դրանց կատարումը կասեցվել է: Ձեկույցում նշվել է, որ անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ՝

սահմանելով Ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրերով նախատեսված աշխատանքների կատարման համար առավել երկար ժամկետներ, ինչպես նաև կատարել այլ փոփոխություններ: Խորհրդի կողմից տրամադրված ամփոփ զեկույցում, որպես Խորհրդի գործունեություն, նշվում է միայն խորհրդի աշխատակարգի հաստատումը, Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի ընթացքի մշտադիտարկման և գնահատման մեթոդոլոգիական ուղեցույցի մշակումը:

Այսպիսով, առանց Ռազմավարության, գործողությունների ծրագրի և վերջինիս կատարման վերաբերյալ հաշվետվությունների առնչությամբ վեր հանված խնդիրների լուծման, ինչպես նաև ստորև մշտադիտարկված և «կատարված» կարգավիճակ չստացած գործողությունների անհնար է պատշաճ իրականացնել դատական և իրավական բարեփոխումները:

### 1.3 Գործադիր ամփոփում և առաջարկություններ

Մշտադիտարկված և սույն զեկույցում ամփոփված տեղեկատվությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. Ռազմավարությունից բխող այն գործողությունները, որոնք ենթակա էին կատարման 2019-2020 թթ. ընթացքում չեն իրականացվել ամբողջությամբ և արդյունավետորեն: Ամբողջությամբ իրականացվել է 2019-2020 թթ. կատարման ենթակա գործողությունների ընդամենը 23%:

Ռազմավարության կատարումը բարելավելու նպատակով Կազմակերպության կողմից մշակվել են ընդհանուր առաջարկություններ:

1. Հստակեցնել այն գործողությունները, որոնք չունեն որոշակիության բավարար աստիճան և չեն նախատեսում, թե ի՞նչ ինտիտուտներ և ի՞նչ իրավակարգավորումներն են փոփոխվելու՝ նախատեսելով կոնկրետ խնդիր և դրա լուծմանը միտված կոնկրետ միջոցառում:
2. Համապատասխան ռազմավարական ուղղության դաշտում առկա բոլոր գործողությունները ներառել գործողությունների աղյուսակում՝ նախատեսելով աղյուսակից դուրս մնացած գործողության պատասխանատու մարմինների, ելակետային դրության, թիրախային փուլերի, ստուգման միջոցի, ակնկալվող արդյունքի, ֆինանսավորման աղբյուրի վերաբերյալ տեղեկատվությունը:
3. Ռազմավարությունում կատարել փոփոխություն՝ նախատեսելով կատարման նոր ժամկետներ սույն զեկույցի Հավելված 1-ով սահմանված 15 գործողությունների համար, որոնք չեն կատարվել կամ որոնց կատարումը հետաձգվել է:
4. Կատարել նախորդ ռազմավարությունների ծրագրերի գնահատում, վեր հանել ձեռքբերումները, ձախողումների պատճառները՝ հաշվի առնելով նաև այն

հանգամանքը, որ սույն Ռազմավարությունը մի շարք դեպքերում նույնությամբ կրկնում է նախորդ տարիների ռազմավարությունների գործողությունները:

5. Մշակել գործողությունների կատարման վիճակի գնահատման չափանիշները և մեթոդաբանությունը:
6. Բարելավել Ռազմավարության գործողությունների կատարման կապակցությամբ հրապարակվող հաշվետվությունների որակը՝ հաշվի առնելով հետևյալ նկատառումները.
  - «կատարված» գնահատված գործողությունների դեպքում ներկայացնել այն միջոցառումները, որոնք իրականացվել են ի կատարումն գործողության, մի քանի բաղադրիչներից կազմված գործողությունների դեպքում Հաշվետվությունում հստակ նշել յուրաքանչյուր բաղադրիչի կապակցությամբ կատարված միջոցառումները,
  - «չկատարված» գնահատված բոլոր գործողությունների դեպքում նշել գործողության չիրականացման պատճառները,
  - «մասնակի կատարված» գնահատված գործողությունների կապակցությամբ գետեղել տեղեկատվություն չկատարված մասի և վերջինիս իրականացման ժամկետների վերաբերյալ:
7. Ուսումնասիրել դասընթացների/սեմինարների, վերապատրաստումների և/կամ այլ իրազեկման միջոցառումների իրականացումը դրանց ազդեցության գնահատման տեսանկյունից և մշակել վերջինիս գնահատման մեթոդաբանություն:
8. Բարձրացնել հաշվետվողականությունը վերապատրաստումների, դասընթացների և սեմինարների (այդ թվում՝ դասավանդողների և դասավանդման թեմաների) վերաբերյալ:
9. Հրապարակել 2021 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը:

Ռազմավարությամբ նախատեսված գործողությունների վերաբերյալ առաջարկությունները հետևյալներն են.

1. «Ընտրական օրենսդրության բարեփոխում» նպատակի շրջանակներում.
  - 1.1. բարձրացնել ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողության հնարավորությունները՝ վերանայելով ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման ընթացակարգը՝ որպես հիմք ընդունելով ընտրական հարցերով մասնագիտացած միջազգային կառույցների, մասնավորապես՝ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ եզրակացություններում ու հանձնարարականներում արտահայտված մոտեցումները:
  - 1.2. Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով. «6) դիտորդական առաքելություն իրականացրած Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունը, եթե գտնում է, որ խախտվել են Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքի սկզբունքները կամ դիտորդի աշխատանքի խոչընդոտման



պատճառով խախտվել է դիտորդական առաքելության իրավունքը, 12-րդ մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով. «4) դիտորդը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին»

10. «Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում» նպատակի շրջանակներում.

2.1 Ուժը կորցրած ճանաչել « ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, որը որպես դատավորի աշխատանքի որակի և արհեստավարժության գնահատման չափանիշ նախատեսում է դատական ակտը հիմնավորելու կարողությունը՝ փոխարենը սահմանելով չափանիշներ, որոնք առավելապես կկենտրոնանան դատավորի կողմից իր ընդհանուր աշխատանքի ընթացքում կիրառվող մեթոդաբանության վրա՝ փոխանակ գնահատելու առանձին դատական ակտերի էությունը:

2.2 Նախատեսել դատավորի գործունեության գնահատման արդյունքների վերաբերյալ որոշումը բողոքարկելու կարգավորում և ընթացակարգ:

2.3 ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված «Դատավորի գործունեության գնահատման կարգը և ժամկետները, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը, մեթոդաբանությունը, սանդղակները և գնահատման թերթի ձևը սահմանելու մասին» ԲԴԽ-53-Ն-9 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ Հավելված 3-ի «Դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատման բաժնի աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակության և աշխատանքի պլանավորման ցուցիչներ»-ից ուժը կորցրած ճանաչել բողոքարկված և բեկանված (վերացված) դատական ակտերի հարաբերակցության և բեկանման անվերապահ հիմքերով բեկանված (վերացված) դատական ակտերի քանակի ցուցիչը:

2.4 «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105.1 հոդվածի 5-րդ մասում կատարել փոփոխություն՝ սահմանելով գրավոր արդյունքների դատական կարգով բողոքարկման ոչ միայն ընթացակարգային, այլ նաև բովանդակային բողոքարկման իրավունք՝ միաժամանակ վերացնելով գրավոր քննության արդյունքը բողոքարկման հանձնաժողով պարտադիր բողոքարկելու օրենսդրական արգելքը:

2.5 «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություն՝ նախատեսելով ոչ միայն հակակոռուպցիոն, այլ նաև դատավորների բոլոր թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության պահանջը:

2.6 «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություն՝ նախատեսելով, որ հրապարակման ենթակա են նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումները:

- 2.7 Կատարել օրենսդրական փոփոխություններ ուղղված դատավորների աշխատակազմի թվաքանակի ավելացմանը, ընդգրկելով բացի օգնականներից և գործավարներից նաև բարձր որակավորում ունեցող փորձագետների: Ավելացնել ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարաններում (Երևան քաղաքում և մարզերում) քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թվակազմը:
- 2.8 «Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրանկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ձեռնարկում» գործողության կապակցությամբ նախատեսել այն միջոցառումները, որոնք ենթակա են իրականացման, դրանց իրականացման ձևաչափը, ինչպես նաև ծավալները:
- 2.9 Հրապարակայնացնել դատավորի թեկնածուների և թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունները՝ փոփոխելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ սահմանելով. «օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա են հրապարակման»:
- 2.10 Հստակեցնել դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի կարգապահական պատասխանատվության հիմքերն իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքին համահունչ՝ բացառելով այնպիսի գնահատողական հասկացություններ, ինչպիսիք են «արդարադատության շահի կոպիտ ոտնահարում», «անդառնալի հետևանքներ», «դատական իշխանության հեղինակազրկում» եզրույթները:
- 2.11 Փոփոխություն կատարել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 6-րդ և 10-րդ մասերում՝ նախատեսելով Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր հանդիսացող և չհանդիսացող անդամների պաշտոնավարման 2 տարվա ժամկետ:
- 2.12 Կարողությունների զարգացման և ներդրված նոր մեխանիզմների կիրառման բնագավառում վերապատրաստվելու գործողությունը նախատեսել ոչ միայն ԲԴԽ անդամների և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների համար, այլ նաև Բարձրագույն դատական խորհրդի և Կոռուպցիայի կանխարգելման աշխատակազմի համար:

### 3. Իրավապահ համակարգի բարեփոխում.

- 3.1 Ուժը կորցրած ճանաչել հետևյալ գործողությունը կրկնվող լինելու հիմքով. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություն՝ նպատակ ունենալով Կարգապահական

հարցերի հանձնաժողովի փոխարեն ստեղծել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, որի անդամները կընտրվեն ոչ թե հինգ, այլ երկու տարով և որը կընդգրկի ոչ միայն դատավորներին, այլև Մարդու իրավունքների պաշտպանի մեկ և այն հասարակական կազմակերպությունների երկու ներկայացուցիչներ, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ դատական իշխանության հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն»:

3.2 Հավելված 2-ի գործողությունների աղյուսակի մեջ ներառել «Ապահովել դատախազների ընտրության մրցույթի թափանցիկությունը» գործողությունը՝ նախատեսելով նշված գործողության կատարման տարրերը, այն է՝ պատասխանատու մարմինների, էլակետային դրության, թիրախային փուլերի, ստուգման միջոցի, ակնկալվող արդյունքի, ֆինանսավորման աղբյուրի վերաբերյալ տեղեկատվությունը:

3.3 «Իրականացնել դատախազության կառուցվածքային փոփոխություններ և կարողությունների զարգացում պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանության բնագավառում, ինչպես նաև կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում» գործողության կապակցությամբ փոփոխություն կատարել Ռազմավարության Հավելված 2-ում գլխավոր դատախազությանը ներառելով ոչ թե «համաձայնությամբ», այլ որպես պատասխանատու մարմին, քանի որ վերջինս է իրավասու և պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների փոփոխության հարցում: Միաժամանակ քանի որ գործողությունը հստակ և որոշակի չէ և գործողության սահմանումից չի բխում, թե կոնկրետ ի՞նչ կառուցվածքային փոփոխության մասին է խոսքը՝ անհրաժեշտ է պարզել փոփոխության բովանդակությունը:

4. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխում.

4.1 «ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի մշակում», «ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի հանրային քննարկման կազմակերպում», «ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարության, ապա՝ ՀՀ ԱԺ քննարկմանը» գործողությունները միավորել մեկ գործողության մեջ:

4.2 Ուժը կորցրած ճանաչել «Օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն տրամադրել քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին» գործողությունը՝ կրկնվող լինելու հիմքով:

5. Սնանկության համակարգի արդյունավետության բարձրացում.

5.1 «Մշակել գույքի հայտարարագրման ձևանմուշներ, ներդնել գույքագրման և գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ» գործողության շրջանակներում ներդնել նաև արտաքին մարմնի (օրինակ՝ Արդարադատության նախարարություն) կողմից աուդիտի (ընտրովի ստուգումներ) իրականացումը, ինչպես նաև գույքը գնահատող անձի ընտրության հատուկ ընթացակարգ՝ դատարանի ներգրավմամբ:

6. Արդարադատության բնագավառի էլեկտրոնային համակարգերի և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում.

6.1 Նախատեսել «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգի արդիականացման և դատական ակտերի ապաստանվորման վերաբերյալ գործողություն:

➤ «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգի արդիականացումը կապահովի դատական գործերի և նիստերի ժամանակացույցերի որոնողական համակարգի արդիականացմանը, «Խելացի որոնման» հնարավորությունը նաև քաղաքացիական և վարչական գործերի համար և մի շարք այլ հնարավորությունների զարգացմանը:

➤ «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգում ներդնել ապաստանվորման ծրագիր՝ այդ թվում ապահովելով արդեն իսկ առկա անձնական տվյալների հեռացումը:

7. Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում.

7.1 «Պետական տուրքի մասին» օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածներում համապատասխանաբար նոտարական գործողություններ և քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնություն նախատեսել նաև դատապարտյալների համար:

7.2 Անձին անգործունակ ճանաչելու, ոչ հոժարակամ հոսպիտալացման և ոչ հոժարակամ հետազոտության և/կամ բուժման ենթարկելու վերաբերյալ վերջնական դատական ակտերն այդ անձի կամ վերջինիս ներկայացուցչի միջոցով բողոքարկելու իրավունքի պատշաճ իրացման նպատակով այդ ֆիզիկական անձանց վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար ազատել պետական տուրք վճարելու պարտականությունից՝ «Պետական տուրքի մասին» օրենքի 22- րդ հոդվածում արտոնություն նախատեսելով:

8. Քննչական մարմինների բարեփոխում .

8.1 Վերանայել գործող օրենսդրությամբ նախատեսված ԱԱԾ մանդատը, գործառույթները և հաշվետվողականությունը՝ բացառելով Ազգային անվտանգության ծառայության կողմից իրավապահ գործունեությամբ զբաղվելու գործառույթը:

- 8.2 Հստակեցնել այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կարող են քննվել և՛ ԱԱԾ, և՛ մաքսային մարմինների ու այլ քննչական մարմինների կողմից:
- 8.3 Վերականգնել ՀՔԾ գործունեությունը որպես բարձրաստիճան պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների և պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ կատարած հանցագործությունների (բացառությամբ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների) քննություն իրականացնող անկախ մարմին:

2. ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող և 2019-2020 թվականներին կատարման ենթակա գործողությունների վիճակի վերլուծություն ըստ նպատակների	
Նպատակ 2.	Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրական ժողովրդավարության հաստատում և իրավունքի գերակայության ամրապնդում:
Գործողություն 1.	«Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթի) մշակում:
Արդյունք	«Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթը) ներկայացվել է ՀՀ ԱԺ և պարունակում է սույն ռազմավարությամբ մատնանշված կարգավորումները:

«Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթը) նախատեսված էր մշակել 2019 թ. 2-րդ կիսամյակում և ներկայացնել ՀՀ ԱԺ 2020 թ. 2-րդ կիսամյակում: ՀՔԱՎ գրասենյակը հրապարակեց տեղական 2020 թվականի մայիսի 25-ին Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված գործողությունների կատարման ընթացքի մասին, որով արձանագրեց, որ «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը 2020 թվականի մայիսի 25-ի դրությամբ դեռևս չէր դրվել հանրային քննարկման: Հրապարակումից մեկ օր անց՝ մայիսի 26-ին, ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Լենա Նազարյանը իր ֆեյսբուքյան էջում տեղեկացրեց, որ [edraft.am](https://www.e-draft.am)-ում հանրային քննարկման են դրվել «Հայաստանի Հանրապետության փաստահավաք հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքների նախագծերը<sup>4</sup>:

<sup>4</sup> <https://www.e-draft.am/projects/2512/about>

2020 թվականի հունիսի 10-ին Կազմակերպությունը մի շարք այլ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ ներկայացրել է իր առաջարկությունները նշված օրենքների նախագծերի վերաբերյալ<sup>5</sup>:

Հարկ է նշել, որ Գործողությունների ծրագրում թեև նշված չէ «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագծի ակնկալվող բովանդակությունը, այնուամենայնիվ Ռազմավարության 1-ին Հավելվածում այն բացահայտված է:

«Փաստահավաք հանձնաժողովի մասին» օրենքի նախագիծը դրվել է միայն հանրային քննարկման, սակայն չի ներկայացվել ԱԾ, ուստի գործողությունը գնահատվում է մասնակի իրականացված՝ ընդ որում ժամկետի խախտմամբ:

Նպատակ 3.	Սահմանադրական բարեփոխումների անցկացում:
Գործողություն 1.	Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կազմն ու աշխատակարգը սահմանող փաստաթղթի (կազմավորման կարգի) մշակում և ընդունում և հանձնաժողովի ձևավորում:
Արդյունք	Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը ձևավորված է և մշակում է սահմանադրական բարեփոխումների փաթեթը:

2019 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսված է մշակել և հրապարակել Հանձնաժողովի կազմավորման կարգի նախագիծ, իսկ 2020 թվականին քննարկել շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ, ընդունել և ձևավորել Հանձնաժողովը:

2020 թվականի փետրվարի 12-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ ստեղծվեց Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով, հաստատվեց սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով և դրանից հետո Հայաստանի Հանրապետությունում ստեղծված քաղաքական լարվածության պատճառով Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքները փաստացի կասեցվել են: Հանձնաժողովի անդամների մոտ բացակայում է ընդհանուր համաձայնություն շարունակելու աշխատանքները: 2021 թվականի փետրվարին նոր հանձնաժողով ստեղծելու հարցը ներկայացվել է ՀՀ վարչապետին:

<sup>5</sup> Տե՛ս ներկայացված առաջարկությունները հետևյալ հղումով՝ <https://hcav.am/pastahavaq-orenq/> :

Հարկ է նկատել, որ քննարկվող գործողության ակնկալվող արդյունքը ոչ միայն Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի ձևավորումն է, այլ նաև սահմանադրական բարեփոխումների փաթեթի մշակման աշխատանքների մեկնարկը: Ինչպես նշեցինք 2020 թվականի փետրվարի 12-ին ձևավորված հանձնաժողովը չի գործում և անհրաժեշտություն էր առաջացել ձևավորել նոր հանձնաժողով: ՀՀ վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1442-Ս որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1986-Ս որոշումը և սահմվել Սահմանադրական բարեփոխումների խորհրդի ձևավորման կարգը:

Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը ձևավորված չէ, ուստի և սահմանադրական բարեփոխումների փաթեթի մշակման աշխատանքների մեկնարկի մասին ևս խոսել չենք կարող:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գործողությունը գնահատվում է որպես չկատարված:

Նպատակ 4.	Ընտրական օրենսդրության բարեփոխում:
Գործողություն 1.	ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում:
Արդյունք	ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի նախագիծը և հարակից նախագծերի փաթեթը մշակված է, ներկայացվել է ՀՀ ԱԺ և ապահովում է ռազմավարությամբ ամրագրված համապատասխան նպատակների իրականացումը:

2020 թվականի ընթացքում նախատեսված էր մշակել և հրապարակել ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, քննարկել շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ և հաստատել ՀՀ կառավարության կողմից:

Նշված գործողությունը պատկանում է այն գործողությունների շարքին, որը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, չի բացահայտում բարեփոխումների հստակ բովանդակությունը: Ռազմավարության ուսումնասիրությամբ փորձել ենք վեր հանել գործողության ենթադրվող բովանդակությունը, սակայն Ռազմավարությունը բացահայտում է ոչ թե իրականացվելիք կոնկրետ միջոցառումները, այլ բարեփոխումների ռազմավարական ուղղությունները: Մասնավորապես համաձայն Ռազմավարության 1-ին

Հավելվածի՝ Ընտրական օրենսդրության բարեփոխումն, ի թիվս այլնի, ընդգրկելու է հետևյալ ուղղությունները.

- թեկնածուների տարածքային ցուցակների վերացում, պարզ համամասնական ընտրակարգի ընդունում,
- կուսակցական բազմակարծության ապահովման նպատակով ընտրվելու նվազագույն շեմի իջեցում,
- կռալիցիաների ձևավորման կարգի բարեփոխում,
- ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողության հնարավորությունների բարձրացում, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման ընթացակարգի վերանայում,
- ընտրագրավի գումարի չափի վերանայում,
- հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի մատչելիության ապահովում,
- ընտրողների ցուցակների կազմման և վարման գործընթացի արդյունավետության բարձրացում,
- բանավեճի և լուսաբանման վերաբերյալ կարգավորումների բարեփոխում,
- դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության բարեփոխում:

Ռեզուլտատները օգտագործում է «ի թիվս այլնի» արտահատությունը, ինչը նշանակում է, որ ընտրական օրենսդրության բարեփոխումները չեն սահմանափակվում միայն նշված ուղղություններով, ինչը նաև բխում է Ռեզուլտատների տրամաբանությունից, քանի որ Ընտրական օրենսդրության բարեփոխումների առաջնային նպատակը ընտրական օրենսդրությամբ սահմանված ժողովրդավարական համակարգի ինստիտուցիոնալ կայացումն է, որը հնարավոր է իրականացնել ոչ միայն վերը նշված ուղղություններով, այլ նաև բոլոր օղակներում ընտրական վարչարարությունը բարելավելու, քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետությունն ու թափանցիկությունը բարձրացնելու, ընտրակաշառքի և ընտրողների նկատմամբ ճշումները բացառելու համար անհրաժեշտ գործուն մեխանիզմներ ներդնելու, բազմակի քվեարկությունը բացառող երաշխիքներն ավելացնելու և քվեարկության գործընթացների մատչելիությունն ապահովելու, ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դերակատարների պատշաճ գործունեությունը երաշխավորելու, ընտրական վեճերի գործընթացները հստակեցնելու, դրանց արդյունավետությունը բարձրացնելու միջոցով<sup>6</sup>: Այսպիսով, վերը նշված ուղղություններում հարկ է ավելացնել նաև հետևյալ կետերը:

- Քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետության ու թափանցիկության բարձրացումը:
- Ընտրակաշառքի և ընտրողների նկատմամբ ճշումները բացառելու համար անհրաժեշտ գործուն մեխանիզմների ներդրումը:

<sup>6</sup> Տե՛ս Ռեզուլտատների 1-ին հավելվածը, էջ 23:



- Բազմակի քվեարկությունը բացառող երաշխիքների ավելացումը և քվեարկության գործընթացների մատչելիությունն ապահովումը:
- Ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դերակատարների պատշաճ գործունեությունը երաշխավորումը:

Թեև սույն գործողությունը հստակ չէ, և Ընտրական օրենսգրքի կոնկրետ ինստիտուտների և իրավակարգավորումների փոփոխության, վերջինիս բովանդակության վերաբերյալ կարգավորում Ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով նախատեսված չէ, այնուամենայնիվ փորձենք կատարված օրենսդրական փոփոխությունները ներկայացնել վերը նշված ռազմավարական ուղղությունների տեսանկյունից:

«Ճայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է թեկնածուների տարածքային ցուցակների վերացումը և պարզ համամասնական ընտրակարգի ընդունումը, 2021 թվականի ապրիլի 1-ին ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ<sup>7</sup>: Հարկ է նշել, որ վերջինս նախատեսում էր վերը նշված ուղղություններից միայն ընտրակարգի փոփոխությունը. փոփոխված կարգը գործեց 2021 թվականի հունիսի 20-ին կայացած Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների ժամանակ: Ընտրական օրենսգրքի մյուս փոփոխություններն Ազգային ժողովի կողմից ամբողջությամբ ընդունվեցին 2021թ. մայիսի 7-ին<sup>8</sup>: Օրենսդրական փոփոխությունների այս փաթեթով նախատեսված իրավակարգավորումներն ուժի մեջ են մտնում աստիճանաբար և կիրառելի չէին Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների ժամանակ:

Կուսակցությունների համար ընտրական շեմը Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածով սահմանվել է 4 % (նախկինում գործող կարգավորմամբ՝ 5 տոկոս): Այլ մոտեցում է սահմանվել կուսակցությունների դաշինքների դեպքում: Նախքան 07.05.2021թ. ընդունված փոփոխությունները՝ կուսակցությունների դաշինքի դեպքում գործում էր 7 % շեմը, փոփոխություններով բարձրացվել է շեմը. մասնավորապես, մինչև երեք կուսակցություններից կազմված կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 8 %, իսկ 4 և ավելի կուսակցություններից կազմված դաշինքի դեպքում՝ 10 %: Փաստորեն, կուսակցությունների դաշինքների դեպքում ընտրական շեմը բարձրացվել է, իսկ կուսակցությունների դեպքում՝ նվազեցվել:

Բացի այդ, Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածում 18.06.2020 թ. կատարված փոփոխություններով սահմանվել է, որ Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների դեպքում ավագանու անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ 4, իսկ կուսակցությունների

<sup>7</sup> [http://parliament.am/draft\\_history.php?id=12376](http://parliament.am/draft_history.php?id=12376)

<sup>8</sup> [http://parliament.am/draft\\_history.php?id=12510](http://parliament.am/draft_history.php?id=12510)

դաշինքի դեպքում՝ 6 % կողմ քվեարկված քվեաթերթիկներ նախկին համապատասխանաբար 6 և 8 % փոխարեն:

Սույն ռազմավարական ուղղությունը չի հստակեցնում, թե կոալիցիաների ձևավորման կարգի ո՞ր իրավակարգավորումն է նախատեսվել փոփոխել, չի բացահայտում «բարեփոխման» բովանդակությունը: Այնուամենայիվ, իրավահամեմատական վերլուծություն կատարելով մինչև 07.05.2021թ. օրենսդրական փոփոխությունները և դրանից առաջ գործող կարգավորումների միջև՝ կարող ենք նշել հետևյալը:

07.05.2021թ. կատարված փոփոխություններով ավելացվել է կոալիցիա կազմելու համար նախատեսված ժամանակահատվածի տևողությունը՝ 6 օրից դարձվել է 9 օր, ինչպես նաև վերացվել է կոալիցիաներ կազմելու կուսակցությունների թվի սահմանափակումը: Նախատեսվել է, որ Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունվելուց հետո՝ 9 օրվա ընթացքում, օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի հարաբերական մեծամասնությունն ստացած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) կարող է քաղաքական կոալիցիա կազմել մանդատների բաշխմանը մասնակցած մյուս կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ, եթե նրանց օգտին տրված ձայների գումարը բավարար է օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի 52 տոկոսը ստանալու համար, և նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ:

Եթե օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունվելուց հետո՝ 9 օրվա ընթացքում, օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի հարաբերական մեծամասնությունն ստացած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) սույն հոդվածով սահմանված կարգով քաղաքական կոալիցիա չի ձևավորում, ապա օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով սահմանված կարգով մանդատների բաշխմանը մասնակցած ցանկացած կուսակցություն (կուսակցությունների դաշինք) հնգօրյա ժամկետում կարող է քաղաքական կոալիցիա կազմել մանդատների բաշխմանը մասնակցած մյուս կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) հետ, եթե նրանց օգտին տրված ձայների գումարը բավարար է օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի 52 տոկոսը ստանալու համար, և նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ:

Ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման ընթացակարգի փոփոխություններ չեն կատարվել, մինչդեռ նշված ընթացակարգի վերանայման անհրաժեշտությունը տարիներ շարունակ շեշտվել է ընտրական հարցերով մասնագիտացած միջազգային կառույցների, մասնավորապես՝ Վենետիկյի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ եզրակացություններում ու հանձնարարականներում: Մասնավորապես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության

զեկույցում արձանագրվել է, որ ՏՀՀ-ներին ներկայացվող բողոքների ներկայացման և լուծման, ինչպես նաև ընտրությունների օրվանից հետո ՏՀՀ որոշումների բողոքարկման ժամկետները պետք է փոփոխվեն արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի ապահովման համար<sup>9</sup>:

Բողոքարկման ընթացակարգի միակ փոփոխությունը վերաբերում է դիմումների էլեկտրոնային ներկայացման հնարավորությանը: Օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը լրացվել է հետևյալ բովանդակությամբ առաջին նախադասությունով. «Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով», ինչպես նաև հետևյալ բովանդակությամբ երրորդ նախադասությունով. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացման կարգը»:

2021 թվականի մայիսի 7-ի փոփոխությամբ սահմանվել են ընտրագրավի հետևյալ վերանայված չափերը՝ կուսակցությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 7 500-ապատիկը, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 15 000-ապատիկը: Նշենք, որ նախկին կարգավորմամբ գործում էր նվազագույն աշխատավարձի 10 000-ապատիկի չափը: Այսպիսով, կուսակցությունների դեպքում ընտրական գրավի չափը նվազեցվել է, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ բարձրացվել:

Հարկ է նշել, որ կուսակցությունների դաշինքների համար շեմի ու ընտրագրավի ավելացումը բխում է կուսակցական բազմակարծության խթանման տրամաբանությունից:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի մատչելիության ապահովման մասով իրականացվել են հետևյալ փոփոխությունները. Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 3.1 կետով. «3.1. Ընտրությունների ժամանակ իրենց տեղամասային կենտրոնում քվեարկելու անհնարինության դեպքում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, կարող են լիազոր մարմին դիմում ներկայացնել՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ իրենց նախընտրած վայրի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին՝ նշելով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի ընտրական տեղամասի համարը: Լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և լրացնում ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Լիազոր մարմինը դիմողին տրամադրում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանելու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում

<sup>9</sup> Տե՛ս ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելություն Վերջնական զեկույց, 2018թ. դեկտեմբերի 9, էջ 29, հասանելի է՝ <https://res.elections.am/images/doc/OSCE09.12.18.pdf>,

լրացնելու մասին տեղեկանք: Դիմումի և տեղեկանքի ձևերը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Այլ անձի անունից դիմում ներկայացվելու դեպքում անձը պարտավոր է ներկայացնել լիազորագիր: Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների համար մատչելի ընտրական տեղամասերի ցանկը հրապարակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»

Ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի «սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ» բառերը փոխարինվել են «տեղաշարժման դժվարություններ և տեսողության խնդիրներ» բառերով. 6-րդ մասով նախատեսվել է. «6. Տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի մատչելիության, լուսավորության և հանձնաժողովի բնականոն աշխատանքի ապահովման լրացուցիչ պահանջները սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանվել է, որ հանրային հեռուստաընկերության անվճար եթերաժամերի և նախընտրական բանավեճերի ժամանակ ապահովվում է հայերեն ժեստերի լեզվով թարգմանություն: Հայաստանի հանրային հեռուստաընկերության եթերով նախընտրական քարոզչության հետ կապված տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ապահովվում են հայերեն ենթագրերով:

Բացի այս, հարկ է նշել, որ ինքնին քվեաթերթիկի ձևը և քվեարկության կարգն ավելի մատչելի են դարձվել:

Ընտրողների ցուցակների կազմման կապակցությամբ միակ էական փոփոխությունը այն է, որ ընտրացուցակներում չեն ընդգրկվում այն անձինք, ովքեր վերջին 6 ամսվա ընթացքում անձը հաստատող վավեր փաստաթուղթ չեն ունեցել:

Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածում կատարվել է փոփոխություն, համաձայն որի. «Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի, որում ընդգրկվում են սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք, որոնք քվեարկության օրվան նախորդող 6 ամսվա ընթացքում ունեցել են անձը հաստատող վավեր փաստաթուղթ»:

Հարկ է նշել, որ քվեարկության օրվան նախորդող 6 ամսվա ընթացքում անձը հաստատող վավեր փաստաթուղթ չունեցող անձինք կարող են ուստիկանության տեղեկանքով գրանցվել քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակում:

Բանավեճի և լուսաբանման վերաբերյալ կարգավորումները էապես վերանայվել են: Ընտրական օրենսգրքի՝ զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչությունը նախատեսող 20-րդ հոդվածը վերաշարադրվել է, նախատեսվել է, որ «Ազգային ժողովի և 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու

ընտրությունների ժամանակ հանրային ռադիոն և հանրային հեռուստատեսությունը պարտավոր են հեռարձակել ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերի մասին հաղորդումներ կամ թողարկումներ՝ ապահովելով անկողմնակալություն, հավասարակշռվածություն, գնահատականներից զերծ տեղեկատվություն և հավասար պայմաններ:

Ազգային ժողովի և 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կազմակերպում է նախընտրական բանավեճեր՝ ապահովելով մասնակցության հավասար պայմաններ բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Նախընտրական բանավեճերի թեման, ձևաչափը և կանոնները որոշում է Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը: Նախընտրական բանավեճերը հեռարձակվում են ուղիղ եթերով:

Ազգային ժողովի ընտրությունների դեպքում նախընտրական բանավեճերի քանակը չպետք է պակաս լինի երեքից՝ յուրաքանչյուրն առնվազն 90 րոպե տևողությամբ, իսկ բանավեճերից առնվազն մեկին պետք է հրավիրվեն միայն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների առաջին համարի թեկնածուները: Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն (կուսակցությունների դաշինք) պետք է հնարավորություն ունենա մասնակցելու հավասար թվով նախընտրական բանավեճերի:

70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը կազմակերպում է առնվազն մեկական, իսկ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ առնվազն երկու նախընտրական բանավեճ, որոնց մասնակցության հավասար պայմաններ են ապահովվում ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Նախընտրական բանավեճի տևողությունը պետք է լինի ոչ պակաս, քան 90 րոպե»:

Դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության բարեփոխման ուղղությամբ նույնպես էական քայլեր չեն ձեռնարկվել: Ավելին, Ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի առաջին ընթերցման ներկայացված [խմբագրությունում](#) եղել է կարգավորում՝ ուղղված դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության բարեփոխմանը: Մասնավորապես նախատեսվել էր Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով. «6) դիտորդական առաքելություն իրականացրած Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունը, եթե գտնում է, որ խախտվել են Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքի սկզբունքները կամ դիտորդի աշխատանքի խոչընդոտման

պատճառով խախտվել է դիտորդական առաքելության իրավունքը, իսկ 12-րդ մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով. «4) դիտորդը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին»:

Սակայն փոփոխությունների վերջնական և 07.05.2021 թվականին ընդունված տարբերակում նշված կարգավորումները դուրս են թողնվել: Հարկ է նշել, որ ընտրական գործընթացի կեղծման ու խեղաթյուրման պայմաններում դիտորդական առաքելությունները հանրային ընկալման մեջ ամրապնդվել են որպես ընտրական գործընթացների օրինականության ապահովման երաշխավորներ և ոչ թե պարզապես արձանագրողներ, ուստի վերը նշված կարգավորումների տեղ չգտնելը Ընտրական օրենսգրքում էական հետընթաց է և շեղում սահմանված ռազմավարական ուղղությունից:

Միաժամանակ նշենք, որ գործընկեր հասարակական կազմակերպությունները՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը և «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունները Սահմանադրական դատարան են ներկայացրել անհատական դիմում, որով վիճարկում են Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը այն հիմքով, որ ընտրական հանձնաժողովների որոշումներն ու գործողությունները բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտներին և հիմքերը, պարունակում է օրենսդրական բաց՝ կապված դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ ընտրական իրավունքների խախտումները վարչական և դատական կարգով բողոքարկելու հնարավորության բացակայության հետ<sup>10</sup>:

Հարկ է նշել նաև, որ Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 9-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «9. Դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման կարգը, հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի էլեկտրոնային ձևերը և Հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով դրանց ներկայացման կարգը, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այցելուների վկայականների ձևերը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը»:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը շրջանառության մեջ է դրվել 05.03.2021 թվականին<sup>11</sup>: Նախագիծը ընդունվել է 07.05.2021 թվականին: Ինչպես նշվեց վերը, Նախագիծը ենթակա էր մշակման և հրապարակման 2020 թվականի ընթացքում:

<sup>10</sup> <https://concourt.am/armenian/decisions/judicial/2021/pdf/sddkv-30.pdf>

<sup>11</sup> [http://parliament.am/draft\\_docs7/KH-894\\_khmbakcutyan\\_voroshum.pdf](http://parliament.am/draft_docs7/KH-894_khmbakcutyan_voroshum.pdf)

Միաժամանակ, հաշվի առնելով, որ մի շարք փոփոխություններ դեռևս չեն կատարվել և տեղ չեն գտել ընդունված Նախագծում, գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ իրականացված, սակայն, սահմանված ժամկետի խախտմամբ:

Առաջարկություններ.

- Բարձրացնել ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողության հնարավորությունները՝ վերանայելով ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման ընթացակարգը որպես հիմք ընդունելով ընտրական հարցերով մասնագիտացած միջազգային կառույցների, մասնավորապես՝ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ եզրակացություններում ու հանձնարարականներում արտահայտված մոտեցումները:
- Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով. «6) դիտորդական առաքելություն իրականացրած Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունը, եթե գտնում է, որ խախտվել են Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքի սկզբունքները կամ դիտորդի աշխատանքի խոչընդոտման պատճառով խախտվել է դիտորդական առաքելության իրավունքը, իսկ 12-րդ մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով. «4) դիտորդը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին»:

Նպատակներ 5, 6 և 7.	Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ:
Գործողություն 1.	Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան կարգի ներդրում, որը, ի թիվս այլնի, պետք է նախատեսի՝ 1. կատարելագործել դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման օրենսդրական կանոնակարգումները. 2. ապահովել դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման գործընթացների թափանցիկությունը:
Արդյունք	Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նոր կարգը ներդրված է, դատավորների թեկնածուների հավակնորդները ընտրվում են ավելի թափանցիկ ընթացակարգերով, ապահովված է քննության արդյունքների

բողոքարկման կառուցակարգը, ինչպես նաև դատավորների, այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածությունը:

2019 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսված էր ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակել և քննարկել շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկել ՀՀ վարչապետի աշխատակազմ, իսկ 2020 թվականին նախատեսված էր օրենքի նախագիծը հաստատել Կառավարության կողմից և ներկայացնել ԱԺ:

Նախագիծը քննարկվել է 2019 թվականին և 2020 թվականի մարտի 25-ին ընդունվել է [««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:](#)

- ա) գնահատման հանձնաժողովի կազմավորման կարգի փոփոխություն
- բ) գնահատման պատճառաբանվածության ապահովում

Մինչև 25.03.2021 թ. «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում իրականացված փոփոխությունները՝ Դատավորների գործունեության գնահատումն իրականացնում էր Բարձրագույն դատական խորհուրդը՝ «ՀՀ դատական օրենսգրքով» սահմանված չափանիշների հիման վրա:

25.03.2021 թ. ընդունված օրենքով «ՀՀ դատական օրենսգրքի» 77-րդ հոդվածով նախատեսվեց, որ Դատավորների ընդհանուր ժողովը ձևավորում է (...) Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով: Նույն հոդվածի 13-ից 18-րդ մասերով նախատեսվեց Գնահատման հանձնաժողովի կազմավորման կարգը: Մասնավորապես. «Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը կազմված է հինգ անդամից, որոնցից երեքը՝ դատավոր անդամներ, երկուսը՝ իրավաբան գիտնականներ: Դատավոր անդամներից մեկն ընտրվում է Վճռաբեկ դատարանի դատավորներից, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ առաջին ատյանի դատարաններից: Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի անդամներին, Ընդհանուր ժողովի հաստատած գործունեության կարգին համապատասխան, ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով (...):»:

«Դատական օրենսգրքի» 78-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվել է, որ Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝

1. իրականացնում է դատավորների գործունեության գնահատումը.



2. սույն օրենսգրքի 142-րդ հոդվածով սահմանված՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում կամ դատավորի վարքագծի կանոնների խախտում (այդ թվում՝ էական կարգապահական խախտում) հայտնաբերելու դեպքում դիմում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:
3. իրականացնում է սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ գործառույթներ:

«Դատական օրենսգրքի» 138-րդ հոդվածի համաձայն՝ 1. Դատավորի գործունեությունը գնահատվում է դատավորի աշխատանքի որակն ու արդյունավետությունը, ինչպես նաև դատավորի արհեստավարժությունն ու վարքագիծը բնութագրող՝ սույն հոդվածով սահմանված կիրառելի չափանիշների հիման վրա: 2. Դատավորի աշխատանքի որակի և արհեստավարժության գնահատման չափանիշներն են՝ 1) դատական ակտը հիմնավորելու կարողությունը: 2) դատական նիստը կառավարելու և օրենքով սահմանված կարգով անցկացնելու կարողությունը: 3. Դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշներն են՝ 1) աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակությունը և աշխատանքի պլանավորումը: 2) ողջամիտ ժամկետում գործեր քննելն ու դատական ակտեր կայացնելը: 3) դատավորի կողմից առանձին դատավարական գործողությունների կատարման համար օրենքով սահմանված ժամկետների պահպանումը: 4) արդյունավետ աշխատամիջավայր ապահովելու կարողությունը: 4. Դատավորի էթիկայի և վարքագծի կանոնի գնահատման չափանիշներն են՝ 1) վարքագծի և էթիկայի կանոնների պահպանումը: 2) դատարանի հանրային ընկալմանն ու դատարանի նկատմամբ վստահությանը նպաստելը, այլ դատավորների և դատարանի աշխատակազմի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը:

Անդրադառնալով առաջին՝ դատական ակտը հիմնավորելու կարողությանը՝ նշենք, որ նշված չափանիշի կիրառումը ՀՔԱՎ գրասենյակը դիտում է խնդրահարույց և, ի թիվս այլ կազմակերպությունների, իր նկատառումները ներկայացրել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ հրապարակված կարծիքում, համաձայն որի՝ «Չբացառելով առանձին դատական ակտերում հիմնավորվածության չափանիշի հետ կապված դատավորների կողմից թույլ տրվող միտումնավոր կամ անփույթ խախտումները՝ նշված չափանիշի սահմանումը որպես աշխատանքի արդյունավետության գնահատում անթույլատրելի և խիստ ռիսկային է: Դատական ակտի հիմնավորվածության գնահատումը ենթադրում է դատավարական առումով բողոքարկման իրավական ընթացակարգերի սահմանում, ինչը դրված է դատական համակարգերի կառուցման հիմքում: Նման չափանիշի սահմանումը հակասում է դատավորի անկախության կարևորագույն սկզբունքին և հիմքեր ստեղծում դատավորների նկատմամբ ազդեցության լծակներ ապահովելու համար: Պետք է փաստել նաև, որ դատական ակտի հիմնավորվածության չափանիշի տեսանկյունից դատավորի կողմից միտումնավոր կամ անփութությամբ որոշ դեպքերում խախտումներ կատարելու

իրավական որակման խնդիրն իր լուծումը ստացել է քրեական օրենսդրությամբ համապատասխան հոդվածներով՝ ինչպես օրինակ ՀՀ քրեական օրենսգրքի 352 հոդվածում՝ ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը հանցակազմի սահմանմամբ»<sup>12</sup>:

Թիվ 11 (2008) կարծիքում ԵԴԽԽ-ն քննարկել է դատական ակտերի բարձր որակի կարևորության հարցը: Դատավորի կողմից ընդունված դատական ակտերի որակը գնահատելու համար գնահատողները պետք է կենտրոնացնեն ուշադրությունը դատավորի կողմից իր ընդհանուր աշխատանքի ընթացքում կիրառվող մեթոդաբանության վրա՝ փոխանակ գնահատելու առանձին դատական ակտերի էությունը: Վերջինս պետք է որոշվի զուտ բողոքարկման ընթացակարգով: Գնահատողները պետք է հաշվի առնեն այն բոլոր գործոնները, որոնց միասնությունը բերում է դատավորի լավագույն գործունեության, մասնավորապես՝ իրավունքի վերաբերյալ գիտելիքները, հաղորդակցման հմտությունները, ջանասիրությունը, արդյունավետությունը և բարեվարքությունը: Նման գնահատում իրականացնելու համար գնահատողները պետք է դիտարկեն դատավորի աշխատանքի ամբողջ խորությունն այն համատեքստում, որտեղ այդ աշխատանքը կատարվում է<sup>13</sup>:

Վենետիկի հանձնաժողովն արձանագրել է, որ դատավորի գործունեության գնահատման կարգավորումները պետք է հստակ սահմանեն, որ դատավորի՝ արդարադատությունը կառավարելու, կարգավորելու կարողությունների գնահատումը, օրինակ՝ առավելագույն ժամկետները պահելը, ժամանակացույցին հետևելը, և այլ պայմաններ, պետք է հաշվի առնվեն ծանրաբեռնվածության և համանման այլ հանգամանքների հետ միասին <sup>14</sup>: Կարևոր է, որ գնահատումը լինի մեծապես որակական և կենտրոնանա դատավորի մասնագիտական կարողությունների վրա: Դատավորի գնահատումը չպետք է հիմնված լինի դատավորի կայացրած վճիռների կամ որոշումների բովանդակության վրա: Ավելին, որպես գնահատման չափանիշ պետք է խուսափել այնպիսի քանակական ցուցանիշների կիրառումից, ինչպիսիք են հայցերի վերադարձնելը և արդարացումները<sup>15</sup>: Վենետիկի հանձնաժողովը սահմանել է, որ դատավորի հերթական գնահատման նպատակն է պարզել դատավորի անհատական կարիքները՝ ապահովելու նրա որակավորման զարգացումն ու խթանումը<sup>16</sup>: Պարբերական գնահատումները դատավորի գործունեության կարևոր գործիքներ են, որպեսզի վերջինս բարելավի իր աշխատանքը և կարող են նաև

<sup>12</sup> «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ հրապարակված կարծիքը տե՛ս հետևյալ հղումով՝ [https://www.osf.am/wp-content/uploads/2020/03/%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A3%D6%80%D6%84%D5%AB-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80-%D5%A4%D5%AB%D6%80%D6%84%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4\\_1\\_02%E2%80%A403%E2%80%A42020.pdf](https://www.osf.am/wp-content/uploads/2020/03/%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A3%D6%80%D6%84%D5%AB-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80-%D5%A4%D5%AB%D6%80%D6%84%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4_1_02%E2%80%A403%E2%80%A42020.pdf)

<sup>13</sup> Տե՛ս ԵԴԽԽ թիվ 11 (2008) կարծիքը, պարբերություն 57:

<sup>14</sup> Տե՛ս CDL-AD(2017)018, Bulgaria - Opinion on the Judicial System Act

<sup>15</sup> Տե՛ս CDL-AD(2014)007, Joint opinion on the draft law amending and supplementing the judicial code (evaluation system for judges) of Armenia

<sup>16</sup> Տե՛ս CDL-AD(2015)007-e :

ծառայել որպես առաջխաղացման հիմք: Կիևի հանձնարարականի համաձայն՝ դատավորների գնահատումը կարող է օգտագործվել՝ ի ապահովումն դատավորի աշխատանքային գործունեության տարբեր ասպեկտների բարելավման, ինչպես նաև հնարավոր առաջխաղացման համար: Դատավորների պարբերական գնահատումները, որոնք կարող են հանգեցնել աշխատանքից հեռացման կամ այլ սանկցիաների, չեն համապատասխանում դատավորների ցմահ պաշտոնավարմանը<sup>17</sup>:

Միաժամանակ հարկ է նշել, որ կատարված օրենսդրական փոփոխությունները չեն նախատեսում գնահատման արդյունքների վերաբերյալ որոշումը բողոքարկելու կարգավորում և ընթացակարգ, ինչը նույնպես խնդրահարույց է:

ԵԴԽԽ-ն նշել է, որ պետք է նախատեսվի նաև ընթացակարգ, որը թույլ կտա վիճարկել գնահատումներն անկախ մարմնի կամ դատարանի առջև: Ուստի՝ գնահատվող դատավորը հնարավորություն պետք է ունենա իր ներդրումը կատարելու գնահատման գործընթացում այնպես, որ նման ներդրումն օգտակար լինի: (...) Գնահատվող դատավորը պետք է իրավունք ունենա արդյունավետորեն վիճարկելու ոչ բարենպաստ գնահատումը, հատկապես, երբ դա վերաբերում է դատավորի «քաղաքացիական իրավունքներին»՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով: Արդյունավետ վերանայման՝ նման իրավունքները հատկապես կարևոր են, երբ գնահատումը կարող է լուրջ հետևանքներ ունենալ դատավորի համար<sup>18</sup>:

«Դատական օրենսգրքի» 139-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ 1. Դատավորի գործունեության գնահատումն իրականացնում է Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝ սույն օրենսգրքով սահմանված չափանիշների հիման վրա: 2. Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորի գործունեության գնահատման մեթոդաբանությունը, ներառյալ՝ սույն օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատման ցուցիչները, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորի գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասներ:

2020 թվականի օգոստոսին ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունվել է «Դատավորի գործունեության գնահատման կարգը և ժամկետները, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը, մեթոդաբանությունը, սանդղակները և գնահատման թերթի ձևը սահմանելու մասին» ԲԴԽ-53-Ն-9 որոշումը: Վերջինիս համաձայն սահմանվել են Դատական օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատման ցուցիչները: Հարկ է նկատել, որ ցուցիչները որոշ դեպքերում շեղվում են սահմանված չափանիշներից և ԵԴԽԽ կողմից արտահայտված դիրքորոշումներից, մասնավորապես, որոշմամբ սահմանվել են Դատավորի աշխատանքի

<sup>17</sup> Տե՛ս OSCE/ Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe :

<sup>18</sup> Տե՛ս ԵԴԽԽ թիվ 17 (2014) կարծիքը, պարբերություն 4, հասանելի է՝ <https://rm.coe.int/no17-in-armenian-17-2014-/16808e6529> :

արդյունավետության գնահատման բաժնի աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակության և աշխատանքի պլանավորման ցուցիչները, որոնցում, ի թիվս այլնի նախատեսվել են բողոքարկված և բեկանված (վերացված) դատական ակտերի հարաբերակցությունը և բեկանման անվերապահ հիմքերով բեկանված (վերացված) դատական ակտերի քանակը և ըստ դրա սահմանվել են միավորներ: Նախ անհասկանալի է, թե բեկանված դատական ակտերի քանակը և բողոքարկումների նկատմամբ վերջիններիս հարաբերակցությունը ի՞նչ առնչություն ունի աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակության և աշխատանքի պլանավորման հետ: Բացի այդ, Թիվ 11 (2008) և Թիվ 17 (2014) կարծիքներում ԵԴԽԽ-ն խնդրահարույց է համարել գնահատումը բեկանված կամ բողոքարկված դատական ակտերի թվի կամ տոկոսի վրա հիմնելը<sup>19</sup>:

Այսպիսով, գնահատման հանձնաժողովի գործունեության և դատավորի գործունեության գնահատման կարգերը փոփոխվել են, սակայն սույն ենթակետում արտահայտված և միջազգային չափանիշների հիման վրա առաջ քաշված դիրքորոշումների (գնահատման արդյունքների բողոքարկման ընթացակարգի ներդրման, «դատական ակտը հիմնավորելու կարողության» չափանիշի փոփոխման և բեկանված դատական ակտերը որպես գնահատման ցուցիչ չհամարելու) հաշվառման դեպքում միայն կապահովվի դատավորների գործունեության գնահատման և դատավորների անկախության և կամայական միջամտությունների անթույլատրելիության չափանիշների միջև ողջամիտ հարաբերակցությունը:

*զ) հարցազրույցի փուլում միջազգային առաջատար հոգեբանական ինստիտուտների կողմից կազմված հոգեբանական թեստի անցկացում*

25.03.2021 թ. «ՀՀ դատական օրենսգրքում» կատարված փոփոխություններով և լրացումներով նախատեսվեց հարցազրույցի փուլում միջազգային առաջատար հոգեբանական ինստիտուտների կողմից կազմված հոգեբանական թեստավորման ինստիտուտը: Համաձայն «ՀՀ դատական օրենսգրքի» 108-րդ հոդվածի 1.1 մասի՝ «Հարցազրույցից առաջ՝ հինգ օրվա ընթացքում, հավակնորդներն անցնում են հոգեբանական թեստավորում: Հոգեբանական թեստը կազմվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հատկանիշները գնահատելու նպատակով, և դրա արդյունքը ստացվում է ըստ նախապես մշակված էլեկտրոնային համակարգի: Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման [կարգը](#), որի հիման վրա թեստավորման անցկացման համար անհրաժեշտ պայմաններն ապահովում է Լիազոր մարմինը»:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.08.2021 թվականին տրամադրված տեղեկատվության համաձայն՝ դատավորների թեկնածուների հոգեբանական թեստավորման իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրման գործում իր

<sup>19</sup> Տե՛ս ԵԴԽԽ թիվ 11 (2008) կարծիքը, պարբերություն 57 և Թիվ 17 (2014) կարծիք պարբերություն 35 :

աջակցությունն է ցուցաբերել ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (UNDP), որի արդյունքներով 2021թ. մարտին առաջին անգամ անցկացվեց պիլոտային հոգեբանական թեստավորումը՝ առցանց պլատֆորմի միջոցով: Հոգեբանական թեստերի, դրանց անցկացման համար անհրաժեշտ պլատֆորմի և համապատասխան իրավական ակտերի մշակումն իրականացվել է տեղական և միջազգային փորձագետների աջակցությամբ, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի փորձագետների աջակցությամբ: Արդյունքում ադապտացվել և ներդրվել են 4 հոգեբանական առցանց թեստեր՝ «Մեծ հնգյակը» («Big five») (մշակվել է «LPT Business Psychologist» կազմակերպության կողմից), «Աշխատանքային արժեքները» («Work Values») (մշակվել է ամերիկյան «VIA Institute on character» կազմակերպության կողմից), «Գործող արժեքները» («Values in Action») և «Կենսակերպի առաջնահերթությունների հետազոտությունը» («Lifestyle Priorities Survey») (տրամադրվել են ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի փորձագետների կողմից):

Այսպիսով, միջազգային առաջատար հոգեբանական ինստիտուտների կողմից կազմված հոգեբանական թեստի ներդրման պահանջն ապահովվել է:

*դ) քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգի ներդրում և Բարձրագույն դատական խորհրդի որոշման ընդունման թափանցիկության ապահովում*

««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.03.2020 թվականին ընդունված օրենքի 31-րդ հոդվածով նախատեսվեց օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 105.1-ին հոդվածով. «1. Գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել բողոքարկման հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: 2. Համապատասխան մասնագիտացմամբ բողոքարկման հանձնաժողովը կազմավորվում է տվյալ մասնագիտացմամբ քննության արդյունքների դեմ առաջին բողոքն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, երկու դատավորի և մեկ իրավաբան գիտնականի կազմով, որոնք վիճակահանությամբ ընտրվում են Ուսումնական հարցերի հանձնաժողովի կողմից առաջարկված տվյալ մասնագիտացման հինգ և Լիազոր մարմնի կողմից առաջարկված իրավունքի համապատասխան բնագավառի առնվազն երեք իրավաբան գիտնականի թեկնածուների կազմից՝ նրանց համաձայնությամբ: Գնահատման հանձնաժողովի անդամները չեն կարող ընդգրկվել բողոքարկման հանձնաժողովի կազմում: 3. Բողոքարկման հանձնաժողովի կազմում ընդգրկվելու, հանձնաժողովի աշխատանքն իրականացնելու կարգի, հանձնաժողովի անդամների վարձատրության, նրանց լիազորությունների դադարեցման, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության դադարման նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով, իսկ բողոքարկման արդյունքների վերանայման նկատմամբ՝ 105-րդ հոդվածով սահմանված դրույթները: 4. Բողոքարկման հանձնաժողովը բողոքը քննում և դրա վերաբերյալ կայացնում է որոշում բողոքարկման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Բողոքարկման հանձնաժողովը կարող է քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել կամ բավարարել՝ մասնակի կամ ամբողջությամբ: 5. Գրավոր

քննության արդյունքները դատական կարգով կարող են բողոքարկվել ընթացակարգային խախտումների հիմքով, եթե դրանք բողոքարկվել են բողոքարկման հանձնաժողով»:

Այսպիսով, թեև ներդրվել է քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգ, սակայն հարկ է նշել, որ այն սահմանափակում է քննության արդյունքների դատական կարգով բողոքարկման հնարավորությունը: Մասնավորապես 105.1 հոդվածի 5-րդ մասը իրավունք է վերապահում քննության արդյունքները բողոքարկել դատական կարգով միայն ընթացակարգային խախտումների մասով և ոչ թե ըստ էության, այն էլ բողոքարկման հանձնաժողով բողոքարկելուց հետո: Քննության արդյունքները վիճարկելու հիմքերի սահմանափակումն այնքանով, որքանով չի նախատեսում այդ արդյունքները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է Սահմանադրության 61-րդ հոդվածով սահմանված իրավունքի իրացման արգելափակմանը:

Անդրադառնալով այն հարցին, որ որպես քննության արդյունքների բողոքարկման այլընտրանքային հնարավորություն, նախատեսվել է բողոքարկման հանձնաժողովը, նշենք, որ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1571 որոշմամբ քննարկելով վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառմամբ դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման և/կամ այլ իրավաչափ նպատակ հետապնդող նկատառումներից ելնելով տարբեր արտադատական ինստիտուտների և ընթացակարգերի ներդրմանը՝ հայտնել է, որ «այն պետք է իրականացվի դատարանի մատչելիության և արդար դատաքննության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո: Մասնավորապես, պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել, որ կիրառված սահմանափակումներն այն աստիճանի չսահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Իսկ դրա համար անհրաժեշտ է ապահովել սահմանափակման նպատակի իրավաչափությունը, կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցությունը»<sup>20</sup>:

Բացի այդ, չի սահմանվել գնահատման հանձնաժողովի անդամների պարտականությունը հիմնավորել և պատճառաբանել հավակնորդի պատասխանին նշանակված կոնկրետ գնահատականը, ինչը պրակտիկայում կարող է հանգեցնել հավակնորդի աշխատանքի կամայական գնահատման:

««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.03.2020 թվականին ընդունված օրենքով փոփոխվել է Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման կարգը, մասնավորապես, օրենքի 23-րդ հոդվածով փոփոխություն կատարվեց Օրենսգրքի 94-րդ հոդվածում՝ սահմանելով, որ «Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ,

<sup>20</sup> <https://concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1571.pdf>

բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի»: Նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսվեց, որ «Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ (...):

«Դատական օրենսգրքի» 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բարձրագույն դատական խորհրդում հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման ավարտից հետո անցկացվում է բաց քվեարկություն՝ խորհրդակցական սենյակում քվեարկություն, որի ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»»:

«Դատական օրենսգրքի» 108-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի համաձայն. «6. Հարցազրույցի ժամանակ Բարձրագույն դատական խորհրդի անդամներին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են սույն հոդվածով և Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ սահմանված գնահատման ենթակա հատկանիշները: Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ գնահատում է յուրաքանչյուր հավակնորդի՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ: 8. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը»:

Այսպիսով, թեև «ՀՀ դատական օրենսգրքով» սահմանվել է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը, այնուամենայնիվ, Օրենսգրքով գնահատման պատճառաբանվածության օրենսդրական պահանջի բացակայության պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից դատավորների թեկնածուների հավակնորդների գնահատումը թողնված է յուրաքանչյուր անդամի ներքին համոզմանը: Արդյունքում, գնահատումն անկանխատեսելի է, հավակնորդի համար անհստակ և չպատճառաբանված:

Հարկ է նշել, որ սույն գործողությունը նախատեսել է նաև դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման գործընթացների թափանցիկությունը: Այս տեսանկյունից խնդրահարույց ենք համարում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նախատեսված կարգավորումը, համաձայն որի՝ «7) օրենքով սահմանված դեպքերում ու կարգով

Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման»:

Այսպիսով, դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ ներկայացված եզրակացությունները հրապարակային չեն, ինչը խոչընդոտում է այդ գործընթացի թափանցիկ իրականացմանը: Բացի այդ, եզրակացությունը Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից հաշվի է առնվում դատավորների հավակնորդների ցուցակի կազմման համար, մասնավորապես Դատական օրենսգրքի 108-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «8. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը»: Այսպիսով, Բարձրագույն դատական խորհուրդը պարտավոր է հաշվի է առնել մի փաստաթուղթ, որը հրապարակային չէ, ինչը նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից կայացվող որոշումների թափանցիկության սկզբունքի խախտում է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք փոփոխել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նախատեսված կարգավորումը՝ սահմանելով, որ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա են հրապարակման:

*ե) դատավորների այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության ապահովում*

Նշենք, որ սույն գործողությունը վերաբերում է անխտիր բոլոր դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության ապահովմանը, մինչդեռ կատարված օրենսդրական փոփոխությունները կրել են հատվածական բնույթ՝ նախատեսել են միջազգային փորձագետների ներգրավվածություն միայն հակակոռուպցիոն դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում, այն էլ ըստ անհրաժեշտության:



Նշված գործողության կապակցությամբ ՀՔԱՎ գրասենյակը հարցում էր ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն, սակայն վերջինս միայն ծավալուն ներկայացրել էր Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության հարցը, մինչդեռ մյուս դատավորների, այսինքն ընդհանուր առմամբ դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության հարցը թողնվել է անպատասխան:

Միաժամանակ 2020 թվականի 2-րդ կիսամյակային Հաշվետվությունում սույն գործողության կատարման վերաբերյալ «նշումներ» առկա է հետևյալ տեղեկատվությունը. ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ: Այնուամենայնիվ, դատավորների այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության ապահովմանը ուղղված նախատեսվում է համապատասխան փոփոխություններն իրականանել այլ նախագծերի փաթեթով»: Կազմակերպության այն հարցին, թե ո՞ր իրավական ակտում է նախատեսվում կատարել փոփոխություն՝ ՀՀ արդարադատության նախարարությունը թողել է անպատասխան:

Ազային ժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները<sup>21</sup>, որոնցով նախատեսվում է Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծումը: Նշված օրենքների փաթեթի սահմանադրականությունը ՀՀ Նախագահի կողմից ներկայումս վիճարկվում է Սահմանադրական դատարանում:

««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 11-րդ հոդվածի համաձայն. «44.1) դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների մասնակցության անհրաժեշտության դեպքում սահմանում է փորձագետների ներգրավման կարգը և նրանց ներկայացվող պահանջները.»:

Օրենքի 19-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է հակակոռուպցիոն դատարանի դատավորների և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների համապատասխան մասնագիտացման առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների ներգրավման կարգը՝ սույն

<sup>21</sup> [http://www.parliament.am/draftreading\\_docs7/K-785\\_DR2.pdf](http://www.parliament.am/draftreading_docs7/K-785_DR2.pdf)

հողվածի 11-15-րդ մասերով սահմանված կարգին համապատասխան: Հակակոռուպցիոն դատարանի և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների առաջխաղացման ենթակա համապատասխան մասնագիտացման դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի համալրման նպատակով հարցազրույց անցկացնելու օրվան նախորդող տասն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան հարցազրույցից հինգ օր առաջ Դատական Դեպարտամենտը կազմակերպում է հավակնորդների նախնական հարցազրույցը Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ներգրավված փորձագետների հետ»:

Նույն հողվածի 11-րդ մասի համաձայն. «Որպես փորձագետ կարող են ընտրվել հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող երեք անձ: Փորձագետներից մեկը պետք է լինի ազգային փորձագետ, իսկ երկուսը՝ առաջադրվեն վերջին երկու տարում հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունների կամ միավորումների կողմից»:

Այսպիսով անհրաժեշտ է ապահովել անխտիր բոլոր դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածությունը:

Հաշվի առնելով վերոգրյալ դիտարկումները գործողության բաղադրիչների կատարման կապացությամբ՝ Գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ իրականացված:

Միաժամանակ ըստ վերը քննարկված դիտարկումների՝ գործողությունը ամբողջությամբ կատարելու նպատակով ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները:

1. Ուժը կորցրած ճանաչել «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 138-րդ հողվածի 2-րդ մասի 1-ին կետը, որը որպես դատավորի աշխատանքի որակի և արհեստավարժության գնահատման չափանիշ նախատեսում է դատական ակտը հիմնավորելու կարողությունը՝ փոխարենը սահմանելով չափանիշներ, որոնք առավելապես կկենտրոնանան դատավորի կողմից իր ընդհանուր աշխատանքի ընթացքում կիրառվող մեթոդաբանության վրա՝ փոխանակ գնահատելու առանձին դատական ակտերի էությունը:
2. Նախատեսել դատավորի գործունեության գնահատման արդյունքների վերաբերյալ որոշումը բողոքարկելու կարգավորում և ընթացակարգ:
3. ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված «Դատավորի գործունեության գնահատման կարգը և ժամկետները, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը, մեթոդաբանությունը, սանդղակները և գնահատման թերթի ձևը սահմանելու մասին» ԲԴԽ-53-Ն-9 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ Հավելված 3-ի «Դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատման բաժնի աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակության և աշխատանքի պլանավորման ցուցիչներ»-ից ուժը կորցրած ճանաչել բողոքարկված և բեկանված (վերացված) դատական ակտերի

հարաբերակցության և բեկանման անվերապահ հիմքերով բեկանված (վերացված) դատական ակտերի քանակի ցուցիչը:

4. «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105.1 հոդվածի 5-րդ մասում կատարել փոփոխություն՝ սահմանելով գրավոր արդյունքների ոչ միայն ընթացակարգային, այլ նաև բովանդակային բողոքարկման իրավունք՝ միաժամանակ վերացնելով գրավոր քննության արդյունքը դատական կարգով բողոքարկելու համար բողոքարկման հանձնաժողով պարտադիր բողոքարկելու օրենսդրական արգելքը:
5. «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություն՝ նախատեսելով ոչ միայն հակակոռուպցիոն, այլ նաև ատավորների բոլոր թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության պարտադիրությունը:
6. Հրապարակայնացնել դատավորի թեկնածուների և թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունները՝ փոփոխելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ սահմանելով, որ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա են հրապարակման:

Գործողություն 2.	Բարձրագույն դատական խորհրդի կողմից քվեարկության կարգի թափանցիկության և որոշումներ կայացնելու պատճառաբանվածության պահանջի ամրագրում, ինչպես նաև որոշումներ ընդունելիս ձայների հարաբերակցության վերաբերյալ կարգավորումների վերանայում:
Արդյունք	Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունվող որոշումների թափանցիկության և պատճառաբանվածության ապահովում, որոշումներ ընդունելու կառուցակարգերի կատարելագործում:

««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.03.2020 թվականին ընդունված օրենքով փոփոխվել է Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման կարգը, մասնավորապես, օրենքի 23-րդ հոդվածով փոփոխություն կատարվեց Օրենսգրքի 94-րդ հոդվածում՝ սահմանելով, որ «Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի»: Նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսվեց, որ «Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին

կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումները՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Եթե քվեարկության արդյունքով որևէ որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով Բարձրագույն դատական խորհուրդը որոշում չի ընդունում, ապա համապատասխան միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված, իսկ որոշումը կազմում և ստորագրում են Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությունը մերժելու օգտին:»

«Դատական օրենսգրքի» 94-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի համաձայն. «9. Բարձրագույն դատական խորհրդի որոշումները ենթակա են հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումները ենթակա են հրապարակման նույն կարգով՝ ապանձնավորած: 10. Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանի ընդունած որոշումները ենթակա են հրապարակման նաև Հայաստանի Հանրապետության ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի հրապարակման համար նախատեսված կարգով:»

Այսպիսով, վերանայվել է Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումների ընդունման կարգը և որոշակի առումով ապահովվել է թափանցիկություն, սակայն հարկ է նշել, որ «ՀՀ դատական օրենսգրքի» 154-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը. 1) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ. 2) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ:

Կարգապահական վարույթ հարուցելու մերժումները հրապարակային չեն և կատարվում են ոչ պատճառաբանված որոշման տեսքով, ինչը խնդրահարույց է: Հատկանշական է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 19.03.2021 թվականին ընդունված [օրենքի](#) հիմնավորման մեջ նշվել է, որ «վարույթ հարուցելու մերժումները հրապարակային չեն և կատարվում են ոչ պատճառաբանված որոշման տեսքով, խախտումների ենթադրյալ զոհերին անմիջապես ԲԴԽ դիմելու իրավունք վերապահելը կնպաստի նաև գործընթացի թափանցիկության ապահովմանը», սակայն վարույթ

հարուցելը մերժելու որոշումների հրապարակայնացման ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել: Ուստի, անհրաժեշտ է սահմանել, որ հրապարակման ենթակա են նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումները:

Գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ իրականացված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումների ոչ հրապարակային լինելու պատճառով:

Առաջարկություն.

- «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություն՝ նախատեսելով, որ հրապարակման ենթակա են նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումները:

Գործողություն 3.	Դատավորին տրամադրվող աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացում և կարողությունների զարգացում:
Արդյունք	Բարձրացել է դատավորին տրամադրվող աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների չափը, դատավորների կարողությունները զարգացել են:

2019 թ. 2-րդ կիսամյակում նախատեսված էր մշակել «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, իսկ 2020 թ.՝ նախագիծը պետք է դրվեր քննարկման՝ շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, և հաստատվեր Կառավարության կողմից:

ՀՀ ԱՆ 2020 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվության մեջ նշել որ, որ գործողությունը կատարված է մասնակի և «դատավորի աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացման վերաբերյալ իրականացվում են քննարկումներ, մասնավորապես, քննարկվում է 2021 թվականից դատավորների աշխատավարձը 50%-ով բարձրացնելու հարցը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա չէ վերջնական որոշում, վերջնական նախագիծը դեռևս պատրաստ չէ»: Նշենք, որ 2020 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվության մեջ Գործողությունը նշվում է որպես կատարված:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ

կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին փաթեթը ներառում է նաև ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը: Նշված օրենքով նախատեսվել է, որ Հակակոռուպցիոն դատարանի դատավորին օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի յոթանասուն տոկոսի չափով: Նույն օրենքով նախատեսվել է նաև, որ Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներին և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներին օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի վաթսուն տոկոսի չափով:

Հարկ է նշել, որ սոցիալական նշված երաշխիքը վերաբերում է միայն որոշ խումբ դատավորների աշխատավարձերի բարձրացմանը, մինչդեռ գործողությունը վերաբերում է ոչ միայն հակակոռուպցիոն, Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներին, այլ բոլոր դատական աստիճանների դատավորներին, քանի որ պարունակում է «դատավոր» և ոչ թե «հակակոռուպցիոն դատարանի դատավոր» կամ ««Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող դատավոր» եզրույթը:

Գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ չիրականացված:

<p>Գործողություն 4.</p>	<p>Իրականացնել դատավորների վերապատրաստումներ, այդ թվում միջազգային փորձագետների մասնակցությամբ և միջազգային և եվրոպական առաջադեմ փորձի ներկայացմամբ, հետևյալ բնագավառներում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>ա) կոռուպցիոն, տնտեսական և պաշտոնեական հանցագործությունների քննություն,</li> <li>բ) էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանը զուգահեռ կարևորվում է դատավորների՝ էլեկտրոնային կրիչների վրա գտնվող ապացույցների հետ աշխատելու հմտությունների զարգացումը,</li> <li>գ) մասնագիտական վարքագծի կանոններ և էթիկա,</li> </ul>
-------------------------	--

	<p>դ) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի կոնկրետ հոդվածների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք:</p> <p>ե) դատավորի դերի, դատական ակտի պատճառաբանվածության, դատավորի անկախության գործնական մարտահրավերների հետ կապված հարցեր:</p>
Արդյունք	Բարելավվել են դատավորների կարողությունները մատնանշված բնագավառներում, դատավորներն իրենց գործունեության ընթացքում դրսևորում են էթիկայի կանոններին համապատասխան վարքագիծ:

ՀՀ ԱՆ 2020 թվականի 2-րդ կիսամյակի Հաշվետվության համաձայն՝ նշված գործողությունը կատարվել է մասնակի: Ըստ Հաշվետվության՝ «մշակվել են համապատասխան վերապատրաստման ծրագրերը, մշակված ծրագրի հիման վրա իրականացվել են դատավորների վերապատրաստումները: Նշված թեմաներով վերապատրաստման դասընթացներ մշակվել և իրականացվում են նաև միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի HELP հեռավար հարթակի շրջանակներում: Դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման 2020թ. ծրագրով համապատասխան բնագավառներով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները»:

Հաշվետվությունում որպես գործողության մասնակի կատարման հիմնավորում նշված է համավարակը և համապատասխան դասընթացներով վերապատրաստումների իրականացման ժամանակացույցը: Յուրաքանչյուր բնագավառով վերապատրաստված դատավորների թվի և թեմաների վերաբերյալ Կազմակերպության հարցմանը ի պատասխան՝ 12.08.2021 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ 2020 թվականի երկրորդ կիսամյակում իրականացվել են դատավորների հետևյալ վերապատրաստումները.

Հ/Հ	Դասընթաց	Վերապատրաստված դատավորների քանակը
1.	Կոռուպցիոն դեպքերի քննություն	19
2.	Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար	19
3.	Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն	42

4.	Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	59
5.	Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	21, որից 2-ը դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք
6.	Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	26, որից 1-ը դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձ
7.	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	42

2021 թվականի 1-ին կիսամյակում իրականացվել են դատավորների հետևյալ վերապատրաստումները.

Հ/Հ	Դասընթաց	Վերապատրաստված դատավորների քանակը
1.	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում	147, որից 17-ը դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք
2.	Դատական իշխանության անկախություն և թափանցիկություն	92, որից 16-ը դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք
3.	Դատական ակտերի մշակման հմտություններ	92, որից 16-ը դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք

Նշենք, որ «Դատական օրենսգրքի» 23-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում Երևան քաղաքում և մարզերում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների նվազագույն թվակազմը 147 է: Վարչական դատարանում դատավորների նվազագույն թվակազմը 24 է, սնանկության դատարանում՝ 12, Վերաքննիչ դատարաններում՝ 44, Վճռաբեկ դատարանում՝ 17:

Ընդհանուր դատավորների թվակազմի և վերապատրաստված դատավորների թվաքանակի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դատավորների միայն մի մասն է մասնակցել վերապատրաստումներին:

Գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ իրականացված:



Գործողություն 5.	Փոփոխություններ կատարել համապատասխան իրավական ակտերում՝ ուղղված դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացմանը:
Արդյունք	Դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և նախատեսում են դատավորի աշխատակազմի թվաքանակի աճ:

2019 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսված էր դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերի մշակումը, քննարկումը շահագրգիռ կողմերի հետ, հանրային քննարկումը և ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ, իսկ 2020 թվականին՝ նախագծի հաստատումը Կառավարության կողմից և ներկայացումը ԱԺ:

2021 թվականի հունիսի 3-ին Կառավարությունը համաձայնություն է տվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի դատավորների թվակազմը 3 դատավորով, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների թվակազմը 3 դատավորով և Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի դատավորների թվակազմը 4 դատավորով ավելացնելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի մայիսի 11-ի առաջարկությանը:

2021 թվականի հուլիսի 8-ին Կառավարությունը համաձայնություն է տվել Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների և Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավորների թվակազմն ավելացնելու վերաբերյալ առաջարկությանը և հաստատել «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը, որով նախատեսվել է ավելացնել քրեական մասնագիտացման 17 դատավոր ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում (Երևան քաղաքում և մարզերում) և 3 դատավոր ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում:

Նշենք, որ ԱՆ 2020 թվականի 2-րդ կիսամյակի Հաշվետվության մեջ նշվել էր, որ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկության հիման վրա կազմվել է վերաքննիչ վարչական դատարանը *6 դատավորով* և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը *6 դատավորով* ավելացնելուն համաձայնություն տալու մասին Կառավարության որոշման նախագիծ, սակայն ինչպես նշվեց վերը, Նախագիծը

սահմանել է վերաքննիչ վարչական դատարանի դատավորների թվակազմը *3 դատավորով*, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների թվակազմը *3 դատավորով* և Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի դատավորների թվակազմը *4 դատավորով* ավելացնելու կարգավորում:

Անորոշ է ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարաններում (Երևան քաղաքում և մարզերում) քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թվակազմի ավելացման հարցը, քանի որ այս կապակցությամբ Նախագիծ դրված չէ հանրային քննարկման, իսկ ԱՆ կողմից հրապարակված հաշվետվություններն այս մասով հստակ տեղեկատվություն չեն պարունակում, մինչդեռ ակնհայտն է, որ դատավորների ծանրաբեռնվածության և թվակազմի ավելացման հիմնախնդիրն առկա է նաև ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության քաղաքացիական մասնագիտացմամբ դատարաններում: Ընդ որում, Ռազմավարության ուղենիշային հանդիսացող 1-ին Հավելվածում նշված գործողության կապակցությամբ ներկայացված է քաղաքացիական գործերով դատավորի ծանրաբեռնվածության օրինակը, մասնավորապես. «Երևան քաղաքում քաղաքացիական գործերով մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը 2013 թվականին կազմել է 632 գործ, այնինչ՝ 2018 թվականին 1290 գործ, իսկ մարզերում՝ 2013 թվականին՝ 469 գործ, այնինչ՝ 2018 թվականին 1447 գործ: Երևան քաղաքում քրեական գործերով մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը 2013 թվականին կազմել է 66 գործ, իսկ 2018 թվականին՝ 81 գործ, մարզերում՝ 2013 թվականին՝ 74 գործ, 2018 թվականին՝ 84 գործ<sup>22</sup>»:

Հարկ է նշել, որ քննարկվող գործողությունը բաղկացած է 2 բաղադրիչից՝ 1. դատավորների թվաքանակի ավելացում, 2. դատավորների աշխատակազմի թվաքանակի ավելացում:

Դատավորների աշխատակազմի թվաքանակի մասով որևէ նախագիծ Կազմակերպությանը հայտնի չէ, մինչդեռ դատավորների աշխատակազմի թվակազմի ավելացումը՝ այդ թվում բացի օգնականներից և գործավարներից նաև բարձր որակավորում ունեցող փորձագետների ընդգրկումը նշված գործողության կարևոր մասն է:

Նշենք նաև, որ սույն գործողությունը դեռևս 2012-2016թթ. ռազմավարությունում նախատեսված և չիրականացված գործողությունների թվին է դասվում<sup>23</sup>:

Գործողությունը գնահատվում է որպես մասնակի իրականացված:

<sup>22</sup> Դատավորի ծանրաբեռնվածության վերաբերյալ ավելի մանրամասն տես Բարձրագույն դատական խորհրդի 2019թ. Տարեկան հաղորդումը [http://court.am/arm/left/annual\\_report/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4.pdf](http://court.am/arm/left/annual_report/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4.pdf) :

<sup>23</sup> <https://www.president.am/files/legislation/753.pdf> էջ 14:

Գործողություն 6.	Փոփոխությունների կատարում համապատասխան իրավական ակտերում՝ ուղղված դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացմանը:
Արդյունք	Դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և նախատեսում են դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացում:

2019թ. երկրորդ կիսամյակում նախատեսվել էր դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների նախագծեր մշակել, քննարկել շահագրգիռ կողմերի հետ, դնել հանրային քննարկման և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ, իսկ 2020թ.՝ Նախագծերը հաստատել Կառավարության կողմից և ներկայացնել ԱԺ: Նախագծերը չեն դրվել հանրային քննարկման:

ԱՆ 2020 թվականի 2-րդ կիսամյակի Հաշվետվությամբ նշվել է, որ «Ներկայումս քննարկումներ են իրականացվում դատավորի աշխատակազմի աշխատավարձի բարձրացման հարցի նպատակահարմարության վերաբերյալ»:

Հաշվետվության նշված ձևակերպումից ստացվում է, որ քննարկումներ են ընթանում գործողության իրականացման «նպատակահարմարության», այսինքն առհասարակ իրականացնելու կամ չիրականացնելու հարցի շուրջ, ինչի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ դատավորներին և նրանց աշխատակազմին առաջարկվող վարձատրությունը համարժեք չէ նրանց ծանրաբեռնվածությանը, ինչի հետևանքով ոչ միայն վտանգվում է դատարանների անաչառությունը և ստեղծվում են կոռուպցիոն ռիսկեր, այլև առաջատար իրավաբանների համար դատական համակարգը մնում է ոչ գրավիչ: Նշված հանգամանքը հաստատվել է Ռեզոլուցիայի 1-ին Հավելվածում և նշված փաստը հիմք է հանդիսացել «դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացում» գործողությունը որպես դատաիրավական բարեփոխումների մաս սահմանելու համար, ուստի անընդունելի և անհասական է գործողության «նպատակահարմարության» քննարկումը:

Գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 7.	Դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով:
------------------	--

Արդյունք	Դատարաններն ապահովված են իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով:
----------	---

2019 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսված էր իրականացնել դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատումը, իսկ 2020 թվականին նախատեսված էր կատարել դատարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատում, դատարաններին իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով ապահովում՝ ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի:

2020 թվականի 2-րդ կիսամյակի Հաշվետվության համաձայն՝ գործողությունը գնահատվել է որպես մասնակի կատարված: Մասնավորապես նշվել է, որ իրականացվել է դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների նախնական գնահատում: Կարիքների գնատահատման արդյունքում Հայաստանի Հանրապետության 2021-2023 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում նախատեսվել են հակակոռուպցիոն դատարանների կառուցմանն ուղղված ծախսեր:

Նշված փուլային գործողության իրականացման ժամկետը 2019 թվականի 2-րդ կիսամյակն էր, մինչդեռ 2020 թվականից արդեն ենթադրվում էր դատարաններին շենքային պայմաններով ապահովումը:

Գնահատելով նշված գործողությունը ըստ ակնկալվող արդյունքի՝ այն է. Դատարանների ապահովումն իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով, գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ չիրականացված:

Գործողություն 8.	Դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:
------------------	--

Արդյունք	Դատարաններն ապահովված են իրենց արդյունավետ գործունեության համար նյութատեխնիկական բազայով:
----------	---

2019 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսվում էր սկսել դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկի մշակումը, իսկ 2020 թվականին՝ ավարտել դատարաններին արդյունավետ

գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկի մշակումը, սահմանել առաջնահերթությունները և տրամադրման ժամանակացույցը և սկսել ապահովել դատարաններին իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով՝ ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի:

ԱՆ կողմից հրապարակված՝ 2020 թվականի 2-րդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների Հաշվետվության համաձայն՝ գործողությունը կատարված է մասնակի և որպես գործողության կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացված է հետևյալը. «Դատարանների տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով ՀՀ 2020 թ պետական բյուջեով նախատեսվել է 629.5 մլն դրամ, որից շուրջ 314.8 մլն դրամը 2020 թ 1-ին կիսամյակում: Միաժամանակ, հակակոռուպցիոն դատարանների նյութատեխնիկական կարիքների գնահատման արդյունքում Հայաստանի Հանրապետության 2021-2023 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի «Նոր նախաձեռնություններ» հավելվածում նախատեսվել են հակակոռուպցիոն դատարանների կարիքների համար անհրաժեշտ միջոցներ»:

Հաշվետվությունը միայն պարունակում է հակակոռուպցիոն դատարանների կարիքների գնահատման վերաբերյալ տեղեկատվություն, մինչդեռ այլ դատարանների կարիքների մասով իրականացված քայլերի վերաբերյալ տեղեկատվություն չի պարունակում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ չիրականացված:

Գործողություն 9.	Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ձեռնարկում:
Արդյունք	Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումները ձեռնարկված են, բարձրացել է հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ:

Քննարկվող գործողությունը հստակ չէ, մասնավորապես հստակ նշված չեն այն միջոցառումները, որոնք ենթակա են իրականացման, դրանց իրականացման ձևաչափը, ինչպես նաև նախատեսված չեն միջոցառումների ծավալները: Թեև 2020 թվականի երկրորդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների Հաշվետվությունում գործողությունը նշված է որպես կատարված, սակայն ներկայացված չեն իրազեկման միջոցառումների, դրանց ծավալների և իրազեկման միջոցառումների գնահատման չափանիշները, մասնավորապես նշված գործողության ակնկալվող արդյունքը դատական

իշխանության նկատմամբ վստահության բարձրացումն է, մինչդեռ վստահության առկայության վերաբերյալ որևէ վիճակագրական տվյալ կամ ստույգ տեղեկատվություն Հաշվետվությունը չի պարունակում: Միայն նշվում է, որ ՄԱԿի-ի Զարգացման ծրագրի (UNDP) շրջանակներում սկսվել են դատախիրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված բարեփոխումների ազդեցության մասով իրազեկման արշավներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ չիրականացված:

Առաջարկություններ.

- Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ձեռնարկում» գործողության կապակցությամբ նախատեսել այն միջոցառումները, որոնք ենթակա են իրականացման, դրանց իրականացման ձևաչափը, ինչպես նաև ծավալները:

Գործողություն 10.	Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրական հիմքերի մշակում:
Արդյունք	Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրական հիմքերը մշակված են, համապատասխանում են կոռուպցիայի հաղթահարման նպատակին և եվրոպական (այդ թվում՝ Վենետիկի հանձնաժողովի և ԵԴԽԽ-ի) չափորոշիչներին:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի կատարելագործմանը, որոնք, ի թիվս այլնի, ներառում են. 1. հստակեցնել դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամին լիազորությունների դադարեցման համար հիմք հանդիսացող էական կարգապահական խախտումների ցանկը. 2. հստակեցնել դատական սխալը դատավորի կողմից իր մասնագիտական գործունեության ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար

խախտումից տարանջատելու հիմքերը. 3. հստակեցնել դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի վարքագծի կանոնները՝ դրանցից հանելով այն կանոնները, որոնք ձևակերպված են ոչ հստակ կամ որոնք բնույթով ոչ թե կարգապահական, այլ էթիկայի կանոններ են:

25.03.2020 թ. ընդունված ««ՀՀ դատական օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով փոփոխության ենթարկվեցին դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, մասնավորապես նախատեսվեց, որ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ 1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ. 2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Նախատեսվեց, որ էական կարգապահական խախտում է՝ 1) 142 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակազրկման. 2) 142 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խախտումը, որը դրսևորվել է 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-րդ և 9-րդ, 11-րդ և 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-րդ և 8-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ և պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ. 3) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը:

Նախքան կատարված օրենսդրական փոփոխությունները՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածը նախատեսել է կարգապահական պատասխանատվության 4 հիմք՝ 1. նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը. 2. դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ. 3. պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունը չկատարելը. 4. լիազորությունների իրականացմանը միջամտության մասին Բարձրագույն դատական խորհրդին չհայտնելը:

Կոպիտ խախտում (1-ին և 2-րդ հիմքերի դեպքերում) է համարվել այն խախտումը, որը հեղինակազրկում է դատական իշխանությունը՝ խախտման բնույթով (լրջությամբ), կամ խախտման պարբերականությամբ: Էական կարգապահական խախտում է համարվել՝

- երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը կամ

- դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:

Այսպիսով, նյութական և դատավարական իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտումները փոխարինվել են նյութական և դատավարական իրավունքի՝ դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ կատարված խախտմամբ: Հարկ է նշել, որ նշված փոփոխություններով կարգապահական պատասխանատվության հիմքերը ոչ թե կատարելագործվել են, այլ դարձել են ավելի անհստակ, հանվել է այնպիսի կարևոր չափանիշ, ինչպիսին կարգապահական խախտման ակնհայտությունն է: Նշված փոփոխությունները չեն արտացոլում նաև լավագույն միջազգային չափանիշները: Այս առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը 14.10.2019թ. CDL-AD(2019)024 կարծիքի 48-րդ կետում փաստել է, որ «Այնուամենայնիվ, «կոպիտ անփութության» սահմանումը ամբողջովին գոհացուցիչ չէ: Ավելի լավ կլինի արձանագրել, որ նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտումը ոչ միայն պետք է ողջամտորեն ենթադրվի, այլ նաև լինի ակնհայտ: Հիրավի, սովորական խախտման և կոպիտ անփութության միջև տարբերությունն էական է, սակայն օրենքը պետք է ձևակերպված լինի այնպես, որ ցանկացած իրավաբանի համար ակնհայտ սխալները լինեն կարգապահական պատասխանատվության ենթակա»<sup>24</sup>:

Բացի այդ, «ՀՀ դատական օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առավել ուշ՝ [19.03.2021 թ. ընդունված օրենքով](#) կարգապահական պատասխանատվության հիմքերը ենթարկվել են փոփոխությունների, որոնք նույնպես խնդրահարույց են<sup>25</sup>:

Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսվել է որ էական կարգապահական խախտում է « ՀՀ դատական օրենսգրքի» 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է՝ ա. արդարադատության շահի կոպիտ ոտնահարման՝ առաջացնելով անդառնալի հետեւանքներ. բ. կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի կամ դատապարտյալի քրեական վարույթից կամ քրեական պատասխանատվությունից խուսափելուն»:

«ա» կետում նշված հիմքը անորոշ է և անհստակ, մասնավորապես «արդարադատության շահի կոպիտ ոտնահարում» և «անդառնալի հետեւանքներ» եզրույթները չեն բավարարում իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքներին: Այս կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ այն օրենսդրությունը, որը կարգավորում է դատավորի կարգապահական պատասխանատվության և կարգապահական որոշում կայացնող մարմինների հետ կապված իրավահարաբերությունները, պետք է ձևակերպվի հստակ: Երկրները հաճախ դժվարությունների են հանդիպում, երբ կարգապահական գործողությունների հիմքերը

<sup>24</sup> [CDL-AD\(2019\)024 \(coe.int\)](#)

<sup>25</sup> Օրենքի սահմանադրականությունը վիճարկվել է Սահմանադրական դատարանում ՀՀ Նախագահի կողմից:



բավարար չափով մանրամասնված չեն: Հստակ սահմանված կանոնների բացակայությունը վտանգավոր է, քանի որ կարգապահական իրավախախտումների դեպքում հնարավոր է սկսվի կամայական հետապնդում դատավորների նկատմամբ: Այդ իսկ պատճառով Եվրոպայի խորհրդի շրջանակներում գործող Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽՄ) դատական համակարգի անկախության մասին իր՝ 2001 թվականի թիվ 1 եզրակացության մեջ առաջարկել է սահմանել այնպիսի չափորոշիչներ, որոնք կսահմանեն ոչ միայն այն վարքագիծը, որը կարող է հանգեցնել դատավորի պաշտոնից հեռացմանը, այլև՝ բոլոր այն արարքները, որոնք կարող են հանգեցնել կարգապահական տույժի կամ կարգավիճակի փոփոխության (CDL-AD(2007)009, կետ 6-րդ):

Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ կանխատեսելիության առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տարիների ընթացքում մշակել է չափանիշներ՝ որոշելու, թե արդյո՞ք իրավունքին միջամտելը նախատեսված է օրենքով, և եկել է այն եզրակացության, որ իրավական կարգավորումների առկայությունը բավարար չէ, դրանք պետք է ճշգրիտ լինեն, և դրանց հետևանքները պետք է լինեն կանխատեսելի բոլոր շահագրգիռ կողմերի համար: Այս պահանջները կիրառելի են կարգապահական վարույթի դեպքում, քանի որ այդ վարույթում նույնպես պետք է պարզ լինի, թե ո՞ր գործողություններն են ենթակա կարգապահական պատասխանատվության (CDL-AD(2007) 009, կետ 15):

«բ» կետում նշված հիմքը՝ կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի կամ դատապարտյալի քրեական վարույթից կամ քրեական պատասխանատվությունից խուսափելուն հանգեցնող խախտումը էական կարգապահական խախտում համարելը ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցներ չկիրառելու «հիմնավոր» և կաշկանդող դրդապատճառ կարող է հանդիսանալ դատավորների համար:

Հարկ է նշել, որ խնդրահարույց և միաժամանակ իրավական որոշակիության սկզբունքին չբավարարող է նաև խախտումն էական կարգապահական դարձնող այնպիսի հատկանիշի նախատեսումը, ինչպիսին «դատական իշխանության հեղինակագրկումն է», քանի որ անհնար է պատկերացնել որևէ կարգապահական խախտում, որը պատվաբեր լինի դատական իշխանության հեղինակության համար և չհեղինակագրկի այն:

Ինչ վերաբերում է դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի վարքագծի կանոններից այնպիսի կանոնները հանելուն, որոնք բնույթով ոչ թե կարգապահական, այլ էթիկայի կանոններ են, ապա հայտնում ենք, որ «Դատական օրենսգրքի»՝ վարքագծի կանոնները ամրագրող 69-րդ և 70-րդ հոդվածներից որևէ կանոն չի հանվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գործողությունը գնահատվում է որպես մասնակի իրականացված:

Առաջարկություններ.

- Հստակեցնել դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի կարգապահական պատասխանատվության հիմքերն իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքին համահունչ՝ բացառելով այնպիսի գնահատողական հասկացություններ, ինչպիսիք են «արդարադատության շահի կոպիտ ոտնահարում», «անդառնալի հետևանքներ», «դատական իշխանության հեղինակազրկում» եզրույթները:

Գործողություն 11.	Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ կառուցակարգերի ներդրում:
Արդյունք	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և հստակեցնում է կարգապահական վարույթի և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի, ինչպես նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման ընթացակարգերը:

1-ին կետի հետ կապված հայտնում ենք, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների թվին ավելացել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերում խնդիրներ հայտնաբերելու փաստերով: Որոշակի ընթացակարգային փոփոխություններ են կատարվել նաև Բարձրագույն դատական խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացակարգում:

2-րդ կետի հետ կապված հայտնում ենք, որ ինչպես նախքան «ՀՀ դատական օրենսգրքում» կատարված ծավալային փոփոխությունները, այնպես էլ ներկայումս դատավորին, Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների դատական կարգով ըստ էության բողոքարկման իրավունք վերապահված չէ:

Փորձ է արվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը բողոքարկելու կառուցակարգ ներդնել «Դատական օրենսգրքի» 156.1 հոդվածով, համաձայն որի՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու

միջնորդությունը մերժելու որոշման դեմ համապատասխանաբար դատավորի կամ կարգապահական վարույթ հարուցած մարմնի բողոքը քննում է Բարձրագույն դատական խորհուրդը, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա»:

Վերոգրյալ նորմից բխում է, որ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ բողոքը քննում է կրկին Բարձրագույն դատական խորհուրդը, այն էլ միայն նոր կամ նոր երևան եկած հանգամանքների դեպքում: «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծի հիմնավորումներում նշվում է, որ « (...) առկա են սահմանադրական խոչընդոտներ: Մասնավորապես, բողոքարկման կառուցակարգ մշակելիս քննարկման առարկա են դարձել հետևյալ տարբերակները՝

- դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկումը վերապահել Բարձրագույն դատական խորհրդի երեք անդամից բաղկացած կազմին, իսկ բողոքարկումը՝ յոթ անդամից բաղկացած կազմին, որը չէր ներառի առաջին անգամ հարցը քննած երեք անդամին: Այս տարբերակի հետ կապված մտավախությունն այն էր, որ սահմանադրությունը, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհրդին վերապահելով, ի նկատի ունի խորհրդի կազմն ամբողջությամբ, և երեք կամ յոթ անդամի կազմով հարցի քննությունը կարող է հանգեցնել ընտրված մոդելի հակասահմանադրականության:
- դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքի քննությունը վերապահել Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատին: Այս տարբերակը ևս ունի սահմանադրական խոչընդոտ, քանի որ սահմանադրությունը վճռաբեկ դատարանի համար նախատեսել է իրավասության խիստ սահմանափակ շրջանակ՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների վերացումը: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման դեմ բողոք քննելը ոչ միշտ է տեղավորվում վերոգրյալ լիազորությունների շրջանակներում:
- դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքի քննությունը վերապահել վարչական կամ վարչական վերաքննիչ դատարաններին: Այս պարագայում կխախտվեր մատնանշված դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանների անկախության երաշխավորի միջև դերերի բաշխման և աստիճանակարգության անհրաժեշտ և ողջամիտ հավասարակշռությունը:

Հաշվի առնելով վերը նկարագրված խոչընդոտները՝ նախատեսվել է բողոքարկման հետևյալ մոդելը. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքի քննությունը ևս իրականացնելու է Բարձրագույն դատական խորհուրդը, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը դատավորը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով և որը ողջամտորեն կարող է ազդել որոշման վրա: Ներկայացված մոդելն ակնհայտորեն ամենաարդյունավետը չէ, սակայն ավելի արդյունավետ և ողջամիտ կարգավորում հնարավոր կլինի սահմանել միայն սահմանադրական փոփոխություններից հետո: Այսպիսով, խնդիրը շարունակում է մնալ չլուծված, ինչը արձանագրել է նաև Վենետիկի հանձնաժողովը:

3-րդ կետի հետ կապված նշենք, որ Բարձրագույն դատական խորհրդին վերապահվել են մի շարք այնպիսի իրավունքներ, որոնք մինչ փոփոխությունները Բարձրագույն դատական խորհուրդն իրացնում էր միայն դատարանի որոշմամբ, մասնավորապես Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սեփական նախաձեռնությամբ հրավիրել վկաներ, նշանակել փորձաքննություն և պահանջել ապացույցներ: «ՀՀ դատական օրենսգրքի» 151-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 4. Հարցի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի՝ 1) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատավորից, կարգապահական վարույթը հարուցած մարմնից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու ներկայացնել հարցի քննության համար նշանակություն ունեցող ապացույցներ, որոնք տվյալ անձանց ազդեցության ոլորտում են՝ սահմանելով ժամկետ դրանք Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու համար, իսկ որոշումը կամովին չկատարելու դեպքում այն ներկայացնել կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով. 2) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ հրավիրելու վկաներ. 3) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ նշանակելու փորձաքննություն՝ քննության համար նշանակություն ունեցող հարցերի պարզաբանման նպատակով:

Գործողությունը գնահատվում է որպես մասնակի իրականացված:

Գործողություն 12.	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք նախատեսում են՝ ա. դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների ցանկը համալրել Կոռուպցիայի կանխարգելման
-------------------	--

	<p>հանձնաժողովով. բ. Կարգապահական հարցերի հանձնաժողովի փոխարեն ստեղծել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, որի անդամները կընտրվեն ոչ թե հինգ, այլ երկու տարով և որը կընդգրկի ոչ միայն դատավորներին, այլև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:</p>
Արդյունք	<p>«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին օժտում է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությամբ, ինչպես նաև փոփոխում է Կարգապահական հանձնաժողովի կազմավորման կարգը և գործունեության ժամկետը:</p>

Նախագիծը քննարկվել է 2019 թվականին և ընդունվել է 2020 թվականի մարտի 25-ին:

Ընդունված [«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը](#) շեղվել է Օրագրով սահմանված ժամկետներից և անդամների ընտրության համար սահմանել 4 տարվա ժամկետ, 2 տարվա փոխարեն: Որպես Ռազմավարությունից շեղում Հաշվետվությունում նշվում է. «Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների վերակազմավորման իրավական հիմքերը նախատեսվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, սակայն որոշ *առանձնահատկություններով (տարբերություններով)*: Մասնավորապես, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամների նախատեսված 2 տարվա պաշտոնավարման ժամկետի փոխարեն սահմանվել է պաշտոնավարման 4 տարվա ժամկետ»: Հատկանշական է, որ Ռազմավարությունից շեղումը բնորոշվում է ոչ թե շեղում կամ հակասություն, այլ «առանձնահատկություն», իսկ վերջինիս վերաբերյալ պատճառաբանությունը Հաշվետվությունում բացակայում է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործողությունը որպես Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի անդամների համար նախատեսել է ոչ թե 4 տարվա, այլ 2 տարվա պաշտոնավարման ժամկետ՝ գործողությունը գնահատվում է որպես մասնակի իրականացված:

Առաջարկություն.

- Փոփոխություն կատարել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 6-րդ և 10-րդ մասերում՝ նախատեսելով Էթիկայի և կարգապահական

հարցերի հանձնաժողովի դատավոր հանդիսացող և չհանդիսացող անդամների պաշտոնավարման 2 տարվա ժամկետ:

<p>Գործողություն 13.</p>	<p>«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում հստակեցնել դատավորի վարքագծի կանոնները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, ավելացնել այնպիսի վարքագծի կանոններ, որոնց խախտումը կասկածի տակ է դնում դատավորի անկախությունը, անկողմնակալությունը և անկաշառությունը, սահմանել դատավորների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ կառուցակարգեր՝ ուղղված.</p> <p>1. ՀՀ բոլոր դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից օրենքով սահմանված ժամկետում իրենց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնելուն.</p> <p>2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ՀՀ-ում գործող բոլոր դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրությանը.</p> <p>3. Բարձրագույն դատական խորհրդի անդամների՝ բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման համար համապատասխան նյութերը ԲԴԽ ներկայացնելուն.</p> <p>4. Դատավորների՝ բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական վարույթի հարուցմանը և ԲԴԽ ներկայացնելուն.</p> <p>6. ԲԴԽ կողմից վերոգրյալ հայտարարագրերի արդյունավետ քննությանը:</p>
<p>Արդյունք</p>	<p>«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և ներառում են կառուցակարգեր</p>

ուղղված ՀՀ բոլոր դատավորների կողմից օրենքով սահմանված ժամկետում իրենց և փոխկապակցված անձանց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնելուն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ՀՀ-ում գործող բոլոր դատավորների կողմից ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրությանը, բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական վարույթի հարուցմանը և ԲԴԽ ներկայացնելուն, ԲԴԽ կողմից վերոգրյալ հայտարարագրերի արդյունավետ քննությանը (ըստ անհրաժեշտության):

2019 թ. 2-րդ կիսամյակում նախատեսված է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերի մշակման, քննարկման և ՀՀ վարչապետի աշխատակազմ ուղարկելու փուլային գործողությունը, իսկ 2020 թվականին՝ նախագծերի հաստատումը ՀՀ կառավարության կողմից և ՀՀ ԱԺ ներկայացնելը:

25.03.2020 թ. կատարված փոփոխություններով «Դատական օրենսգրքի»՝ դատավորի վարքագծի ընդհանուր կանոնները սահմանող 69-րդ հոդվածը 15-րդ և 16-րդ կետերով «15) ներկայացնել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ. 16) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ»:

25.03.2020 թ. ընդունվել է նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը:

19.01.2021 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքում «Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրում» նախատեսող Գլուխ 6-ը ենթարկվել է էական փոփոխությունների:

Բացի այդ, 2020 թ. ապրիլից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացրել է Բարձրագույն դատական խորհրդի անդամների հայտարարագրերի վերլուծություն, որի արդյունքների հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործողությունների կատարումն ընթացքի մեջ է:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ուսումնասիրել է ԲԴԽ 9 անդամների, նրանց ընտանիքի անդամների և համատեղ բնակվող անձանց 105 հայտարարագիր: 2020 թ. մայիսից Հանձնաժողովը վերլուծել է Սահմանադրական դատարանի անդամ/դատավորների, նրանց ընտանիքի անդամների և համատեղ բնակվող անձանց 105 հայտարարագիր:

2020 թ. հունիսին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը մշակել է գործող դատավորների հայտարարագրերի վերլուծության ընտրանքի սկզբունքները, որի հիման վրա ընթացքի մեջ է գործող դատավորների հայտարարագրերի վերլուծության գործընթացը:

Գործողությունը գնահատվում է որպես իրականացված:

<p>Գործողություն 14.</p>	<p>«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություն՝ նպատակ ունենալով Կարգապահական հարցերի հանձնաժողովի փոխարեն ստեղծել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, որի անդամները կընտրվեն ոչ թե հինգ, այլ երկու տարով և որը կընդգրկի ոչ միայն դատավորներին, այլև Մարդու իրավունքների պաշտպանի մեկ և այն հասարակական կազմակերպությունների երկու ներկայացուցիչներ, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ դատական իշխանության հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն:</p>
<p>Արդյունք</p>	<p>«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը նախատեսում է Կարգապահական հարցերի հանձնաժողովի փոխարեն Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ստեղծում՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:</p>



Նշված գործողությունը նույնությամբ կրկնվում է Նպատակներ 5, 6 և 7 «Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ»-ում առկա վերը հիշատակված Գործողություն 3-ում, որի վերաբերյալ գնահատականը ներկայացվել է: Ուստի, անհրաժեշտ է նշված գործողությունը ուժը կորցրած ճանաչել, քանի որ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով ստեղծելու և վերջինիս պայմանների վերաբերյալ գործողություն արդեն իսկ առկա է:

Գործողության գնահատվում է որպես կրկնվող:

Գործողություն 15.	<p>Վերապատրաստել</p> <p>1.ԲԴԽ անդամներին (անհրաժեշտության դեպքում այդ նպատակով կատարելով օրենսդրական փոփոխություններ)՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց կարողությունները կատարված օրենսդրական փոփոխությունների և ներդրված նոր մեխանիզմների կիրառման բնագավառում.</p> <p>2.Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներին՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց կարողությունները կատարված օրենսդրական փոփոխությունների և ներդրված նոր մեխանիզմների կիրառման բնագավառում:</p>
Արդյունք	<p>ԲԴԽ և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների վերապատրաստվել են և ապահովում են օրենսդրության պահանջների արդյունավետ կատարումը:</p>

2020 թ. նախատեսված է կազմել վերապատրաստումների ձեռնարկներ, ընտրել վերապատրաստումներն անցկացնող դասընթացավարներ, իրականացնել ԲԴԽ և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների վերապատրաստումներ:

ԱՆ կողմից 12.08.2021 թ. տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Նշված ժամանակահատվածում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների համար անցկացվել են քննարկման ձևաչափով երեք վերապատրաստումներ: Առաջին և երկրորդ վերապատրաստումներին մասնակցել են ԿԿՀ երկու անդամներ: Երրորդ վերապատրաստմանը մասնակցել է ԿԿՀ մեկ անդամ:

ԲԴԽ անդամների վերապատրաստման կազմակերպման վերաբերյալ տեղեկացվել է, որ ներկայումս ընթանում են մասնագիտական քննարկումներ վերոնշյալ միջոցառման իրականացման նպատակով, և նշված գործողությունը նախատեսվում է իրականացնել

ԵՄ կողմից ֆինանսավորվող և Միջազգային իրավունքի զարգացման հիմնադրամի (IRZ) կողմից իրականացվող «Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդում» («Consolidation of the Justice System») ծրագրի շրջանակներում:

Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ կարևոր է ոչ միայն Բարձրագույն դատական խորհրդի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների, այլ նաև ողջ աշխատակազմի վերապատրաստումը, քանի որ վերջինիս միջոցով է ապահովվում նշված մարմինների գործառույթների պատշաճ և բնականոն իրականացումը, ուստի կարևոր է նաև աշխատակազմի անդամների մասնագիտական որակների շարունակական և պարբերական բարձրացումը:

Գործողությունը գնահատվում է որպես մասնակի իրականացված:

Առաջարկություն.

- Կարողությունների զարգացման և ներդրված նոր մեխանիզմների կիրառման բնագավառում վերապատրաստվելու գործողությունը նախատեսել ոչ միայն ԲԴԽ անդամների և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների համար, այլ նաև Բարձրագույն դատական խորհրդի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակազմի համար:



Նպատակ 10.	Իրավապահ համակարգի բարեփոխում:
Ռազմավարական ուղղություն	Դատախազության համակարգի բարեփոխում:

Նպատակ 10-ի «Դատախազության համակարգի բարեփոխում» ռազմավարական ուղղությունն ըստ Ռազմավարության 2-րդ հավելվածի պարունակում է 4 գործողություն, որից մեկը, սակայն, տեղ չի գտել անմիջապես գործողությունների աղյուսակի մեջ, մասնավորապես՝ Գործողություն 3-ը, որի բովանդակությունն է. «Ապահովել դատախազների ընտրության մրցույթի թափանցիկությունը, իսկ արդյունքը՝ «Ապահովվել է դատախազների ընտրության մրցույթի թափանցիկությունը»:

Նշված գործողությունը «Դատախազության համակարգի բարեփոխում» ռազմավարական ուղղության գործողությունների թվարկման դաշտում առկա է, սակայն աղյուսակում նախատեսված չլինելու պատճառով նշված գործողության պատասխանատու մարմինների, ելակետային դրության, թիրախային փուլերի, ստուգման միջոցի, ակնկալվող արդյունքի, ֆինանսավորման աղբյուրի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: ՀՀ ԱՆ հաշվետվություններում գործողության կատարման վերաբերյալ տեղեկատվություն նույնպես առկա չէ:

Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք գործողությունը ներառել համապատասխան ուղղության աղյուսակում՝ սահմանելով վերը վկայակոչված չափանիշներն:

Գործողություն 1.	Ներդնել դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգ՝ գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները, փոփոխել դատախազների բարեվարքության գնահատում իրականացնող Էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը:
Արդյունք	Դատախազները շարունակաբար անցնում են բարեվարքության ստուգման միջով, ինչը նվազեցնում է համակարգում կոռուպցիան և ապահովում իրենց գործունեության մեջ դատախազների մասնագիտական վարքագծի կանոնների պահպանումը:

2020 թ. առաջին կիսամյակում նախատեսվել էր մշակել դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգը, այդ թվում՝ փոփոխել դատախազների բարեվարքության գնահատում իրականացնող Էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը՝ ընդլայնելով ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը և սահմանափակելով Գլխավոր դատախազի դերը հանձնաժողովի ձևավորման գործընթացում: 2020 թվականի երկրորդ կիսամյակում՝ իրականացնել Դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգի և Էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգի քննարկում շահագրգիռ մարմինների քաղաքացիական հասարակության հետ, հաստատում Կառավարության կողմից և ներկայացում ԱԺ:

Նախ նշենք, որ սույն գործողության բովանդակությունը դատախազների բարեվարքության գնահատման համակարգում, այդ թվում էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգում, այն նույն սկզբունքների գործադրումն է, որոնք գործում են դատավորների բարեվարքության գնահատման համակարգում, մինչդեռ էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը չի համապատասխանեցվել Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմավորման՝ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին, այդ թվում, հասարակական կազմակերպություններից թեկնածուների ներգրավման մասով:

2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով հստակեցվել են բարեվարքության ուսումնասիրությանն առնչվող կարգավորումները, այնուամենայնիվ դատախազների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության անհրաժեշտությունը ենթակա է սահմանման «Դատախազության մասին» ՀՀ օրենքում, ինչը փաստել է նաև 23.07.2020 թվականին հրապարակված [հաշվետվության](#) մեջ:

Գործողություն 1-ի արդյունքը Դատախազների շարունակաբար անցումն է բարեվարքության ստուգման միջով, ինչը նվազեցնում է համակարգում կոռուպցիան և ապահովում իրենց գործունեության մեջ դատախազների մասնագիտական վարքագծի կանոնների պահպանումը:

Բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պահանջը և Ծրագրով նախատեսված գործողությունը սահմանված է բոլոր դատախազների համար, մինչդեռ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարվել է միայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող ստորաբաժանման դատախազների համար:

ԱՆ 2020 թվականի 2-րդ կիսամյակային հաշվետվության համաձայն՝ գործողությունը կատարված է մասնակի: Որպես հավելյալ տեղեկատվություն նշված է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասին համաձայն՝ էթիկայի հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև դատախազ անդամների ընտրության կարգը սահմանվում է ՀՀ գլխավոր դատախազի հրամանով: ՀՀ գլխավոր դատախազի հրամանով լրացում է կատարվել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի դատախազ անդամների ընտրության կարգը սահմանելու մասին» 2018 թվականի ապրիլի 9-ի N 20 հրամանում, որի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովի 3 դատախազ անդամներից առնվազն մեկի պաշտոնը պետք է նախատեսված լինի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով: Ընդ որում, ներկայումս արդեն էթիկայի հանձնաժողովի դատախազ անդամներից մեկը զբաղեցնում է նման պաշտոն:

Նաև նշվել է, որ ԵՄ կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության դատական համակարգի հզորացում» (Consolidation of the Justice system in Armenia) ծրագրի շրջանակներում Միջազգային իրավունքի զարգացման հիմնադրամի (IRZ) և ՀՀ արդարադատության նախարարության հետ համագործակցությամբ աշխատանքային կարգով հաստատվել է «Կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում բարեվարքության համակարգի և կարողությունների ուժեղացում» (Action plan on strenghtening framework and capacity in the fight against corruption) ծրագիրը: Վերջինիս շրջանակներում, ի թիվս այլնի, նախատեսված է 2021 թվականի հունվար-մարտ ամիսներին համապատասխան հետազոտությունների իրականացում և ռեկոմենդացիաների ներկայացում շահառու գերատեսչություններին, այդ թվում նաև՝ դատախազների թեկնածուների բարեվարքության ստուգման, ինչպես նաև դատախազների վարքագծի կանոնների մեկնաբանման ուղենիշների սահմանման նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գործողությունը գնահատվում է չիրականացված:

Գործողություն 2.	Փոփոխել Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները, որպեսզի դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի գլխավոր դատախազի
------------------	---

	մասնակցությունը չներառող գործընթացով և ընդլայնել ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում:
Արդյունք	Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները փոփոխված են, դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվում է գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող գործընթացով, ընդլայնված է ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում:

2020 թ. առաջին կիսամյակում նախատեսված է մշակել «Դատախազության մասին» օրենքում փոփոխություն նախատեսող օրենքի նախագիծ, 2020 թվականի երկրորդ կիսամյակում՝ իրականացնել քննարկում շահագրգիռ մարմինների քաղաքացիական հասարակության հետ և ներկայացնել ԱԾ:

«Դատախազության մասին» օրենքում փոփոխություն և լրացում նախատեսող օրենքի նախագիծ չի դրվել հանրային քննարկման: 2020 թվականի երկրորդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունում գործողությունը գնահտվել է որպես մասնակի կատարված՝ նշելով, որ նախագիծը մշակվել է և ներկայումս ենթարկվում է վերջնական լրամշակման ՀՀ դատախազության տարբեր ստորաբաժանումներից ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Այնուամենայնիվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թ. երկրորդ կիսամյակում արդեն իսկ Նախագիծը պետք է ներկայացված լիներ ՀՀ ԱԾ, մինչդեռ Նախագիծը անգամ չի դրվել հանրային քննարկման՝ գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 3.	Իրականացնել դատախազության կառուցվածքային փոփոխություններ և կարողությունների զարգացում պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանության բնագավառում, ինչպես նաև կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում:
Արդյունք	Դատախազության կառուցվածքային փոփոխություններն իրականացված են, իրականացվել են դատախազների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

2020 թվականի առաջին կիսամյակում նախատեսվել էր մշակել «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ և համապատասխան բնագավառերում դատախազների վերապատրաստումների ծրագրեր: 2020 թվականի երկրորդ կիսամյակում՝ կատարել Նախագծի քննարկում շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, հաստատել ՀՀ կառավարության կողմից և ներկայացնել ԱԺ:

Նախագիծը չի դրվել հանրային քննարկման: Այս կապակցությամբ 2020 թվականի երկրորդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների հաշվետվությունում նշվում է, որ «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ նոր կառուցվածքային ստորաբաժանումներ կարող են ստեղծվել ՀՀ գլխավոր դատախազի հրամանով: Համաձայնելով նշված հիմնավորման հետ այն հիմքով, որ «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազը հաստատում է գլխավոր դատախազության և զինվորական դատախազության կառուցվածքը:

Նշվածը հաշվի առնելով անհրաժեշտություն է ծագում փոփոխություն կատարել Ռազմավարության Հավելված 2-ում, քանի որ ներկայիս կարգավորմամբ գլխավոր դատախազությունը համաձայնությամբ է ներգրավված, մինչդեռ հենց ինքն է իրավասու և պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների փոփոխության հարցում:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ գործողությունը հստակ և որոշակի չէ, գործողության սահմանումից չի բխում, թե կոնկրետ ի՞նչ կառուցվածքային փոփոխության մասին է խոսքը:

ԱՆ 2020 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն. «ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 39 հրամանով հաստատվել է ՀՀ դատախազության կանոնադրությունը, ներառյալ ՀՀ գլխավոր դատախազության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ցանկը, որում ընդգրկված են, ի թիվս այլնի, կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանվագործությունների գործերով վարչությունը, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը: Նման մոտեցումը բարձրացնում է դատախազների առավելագույն մասնագիտացումը՝ նպաստելով դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման գործառույթների առավել պատշաճ իրականացմանը»:

Փաստորեն, որպես փոփոխություն վկայակոչվում է ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 39 հրամանը, որով հաստատվել է դատախազության

կանոնադրությունը: Ռազմավարությունը ընդունվել է 2019 թվականի հոկտեմբերի 10-ին, ուստի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի փոփոխությունը չի կարող վերագրվել Ռազմավարությանը:

Ինչ վերաբերում է դատախազների կարողությունների զարգացմանը, ապա Կազմակերպության հարցմանն ի պատասխան ԱՆ հայտնել է, որ 2020 թվականի երկրորդ կիսամյակում իրականացվել են դատախազների հետևյալ վերապատրաստումները.

Հ/Հ	Դասընթաց	Վերապատրաստված դատախազների քանակ
	Տնտեսական հանցագործությունների որակման հիմնահարցեր	53
	Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն	80
	Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդր ազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար	53

2021 թվականի առաջին կիսամյակում իրականացվել են դատախազների հետևյալ վերապատրաստումները.

Հ/Հ	Դասընթաց	Վերապատրաստված դատախազների քանակը
1.	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր	72

Առկա չէ տեղեկատվություն էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու բնագավառում իրականացված վերապատրաստումների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գործողությունը դատախազության կառուցվածքային փոփոխությունների բաղադրիչով գնահատվում է որպես Ռազմավարությունից չբխող, իսկ վերապատրաստումների բաղադրիչով՝ մասնակի իրականացված:

Առաջարկություններ.

- Ուժը կորցրած ճանաչել հետևյալ գործողությունը կրկնվող լինելու հիմքով. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություն՝ նպատակ ունենալով Կարգապահական հարցերի հանձնաժողովի փոխարեն ստեղծել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, որի անդամները կընտրվեն ոչ թե հինգ, այլ երկու տարով

և որը կընդգրկի ոչ միայն դատավորներին, այլև Մարդու իրավունքների պաշտպանի մեկ և այն հասարակական կազմակերպությունների երկու ներկայացուցիչներ, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ դատական իշխանության հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն»:

- Հավելված 2-ի գործողությունների աղյուսակի մեջ ներառել «Ապահովել դատախազների ընտրության մրցույթի թափանցիկությունը» գործողությունը՝ նախատեսելով նշված գործողության կատարման տարրերը, այն է՝ պատասխանատու մարմինների, ելակետային դրության, թիրախային փուլերի, ստուգման միջոցի, ակնկալվող արդյունքի, ֆինանսավորման աղբյուրի վերաբերյալ տեղեկատվությունը:
- «Իրականացնել դատախազության կառուցվածքային փոփոխություններ և կարողությունների զարգացում պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանության բնագավառում, ինչպես նաև կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում» գործողության կապակցությամբ փոփոխություն կատարել Ռազմավարության Հավելված 2-ում գլխավոր դատախազությանը ներառելով ոչ թե «համաձայնությամբ», այլ որպես պատասխանատու մարմին, քանի որ վերջինս է իրավասու և պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների փոփոխության հարցում: Միաժամանակ քանի որ գործողությունը հստակ և որոշակի չէ և գործողության սահմանումից չի բխում, թե կոնկրետ ի՞նչ կառուցվածքային փոփոխության մասին է խոսքը՝ հստակեցնել կառուցվածքային փոփոխությունների բնույթը:

Նպատակ 10.	Իրավապահ համակարգի բարեփոխում:
Ռազմավարական ուղղություն	Քննչական մարմինների բարեփոխում:
Գործողություն 4.	Համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի կատարելագործմանը:



## Արդյունք

Քննիչները շարունակաբար անցնում են բարեվարքության ստուգման միջով, ինչը նվազեցնում է համակարգում կոռուպցիան և ապահովում իրենց գործունեության մեջ քննիչների մասնագիտական վարքագծի կանոնների պահպանումը:

Նախ և առաջ նշենք, որ սույն գործողությունը հստակ ձևակերպված չէ, մասնավորապես Ռազմավարությունը նախատեսել է վերացական գործողություն՝ «քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի կատարելագործում»: Ինքնին Ռազմավարության բոլոր գործողություններն ուղղված են դատական և իրավական համակարգի գրեթե բոլոր ոլորտների բարեփոխմանը և կատարելագործմանը, սակայն կոնկրետ գործողություններն ենթադրում են ոլորտային կոնկրետ բարեփոխման բովանդակության բացահայտումը և կոնկրետ միջոցառման նախատեսումը: Քննարկվող գործողության դեպքում բարեփոխման ուղղվածությունը և բովանդակությունը հայտնի չէ, հետևաբար նաև անհնար է գնահատել գործողության կատարման հանգամանքը: 2020 թվականի 2-րդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների Հաշվետվության համաձայն գործողության կատարման ընթացքը ներկայացվել է որպես մասնակի կատարված: Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ «ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2014 թվականից գործում է Հատուկ քննչական ծառայության ծառայողների վարքագծի կանոնագիրքը և Հատուկ քննչական ծառայության ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու կարգը, որոնք համապատասխանեցվել են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրված պահանջներին»:

Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն «25) *քննիչ*՝ քննչական կոմիտեի, հակակոռուպցիոն կոմիտեի, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձ, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով կատարում է նախաքննություն»:

Հարկ է նշել, որ ինչպես քննարկվող այնպես էլ «քննչական մարմինների բարեփոխում» ռազմավարական ուղղության բոլոր գործողությունները վերաբերում են բոլոր քննիչներին, բոլոր քննիչների կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի կատարելագործմանը, ըստ այդմ բոլոր քննիչների վարքագծի կանոնների բարեփոխմանը, ուստի Հատուկ քննչական ծառայության ծառայողների վարքագծի կանոնագրքի վերանայումը նշված գործողության միայն մի փոքր մասն է կազմում: Բացի այդ Հաշվետվությունում ներկայացված է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2014 թվականից գործում է Հատուկ քննչական ծառայության ծառայողների վարքագծի կանոնագիրքը, սակայն այդ կանոնագիրքը հանրությանը հասանելի չէ: Միաժամանակ հարկ է նշել, որ գործողության ձևակերպումից բխում է, որ փոփոխության ենթակա են ոչ միայն վարքագծի կանոնները, այլ նաև քննիչների

կարգապահական պատասխանատվության հիմքերը և ընթացակարգը: Նշվածը հիմնավորվում է նաև գործողության ակնկալվող արդյունքով, այն է. «Քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի փոփոխությունն նախատեսող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի փաթեթը ներկայացվել է ԱԺ և պարունակում է քննիչների բարեվարքության արդյունավետ գնահատման համար անհրաժեշտ կարգավորումներ»: Մինչդեռ համապատասխան օրենսդրական նախագծերի վերաբերյալ տեղեկատվություն Հաշվետվությունը վերստին չի պարունակում:

Գործողության կատարողականի վերաբերյալ Կազմակերպությանը հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ուսումնասիրվել է համապատասխան միջազգային փորձ, որի արդյունքում մշակվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նշված Նախագիծով սահմանվում են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները, որոնք Կոմիտեի ծառայողի վարվելակերպի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են՝ ուղղված Կոմիտեի ծառայողի պատշաճ վարքագծի ապահովմանը, բացառելու հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդելու հասարակության վստահությունը Կոմիտեի նկատմամբ:

Այսպիսով, նշված գործողության կապակցությամբ արձանագրում ենք, որ 1. Գործողությունը հստակ չէ, 2. Գործողությունը կատարված չէ:

Գործողություն 5.	Իրականացնել քննիչների կարողությունների զարգացում կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում:
Արդյունք	Իրականացվել են քննիչների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

2020 թվականի 1-ին կիսամյակում նախատեսվում էր մշակել համապատասխան բնագավառներում քննիչների վերապատրաստումների ծրագրերը, իսկ 2020 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում՝ սկսել համապատասխան ծրագրերով վերապատրաստումները:

2020 թվականի 2-րդ կիսամյակի Հաշվետվության համաձայն՝ գործողություններ կայացված է որպես կատարված, սակայն առկա չէ տեղեկատվություն վերապատրաստված քննիչների թվի վերաբերյալ յուրաքանչյուր բնագավառում:

Միաժամանակ նշվում է, որ «Իրականացվել են քննիչների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ», սակայն բացահայտված չեն այդ միջոցառումների բովանդակությունը և ծավալները:

Կազմակերպության հարցմանն ի պատասխան՝ ԱՆ հայտնել է, որ 2020 թվականի առաջին կիսամյակում իրականացվել են քննիչների հետևյալ վերապատրաստումները.

Հ/Հ	Դասընթաց	Վերապատրաստված քննիչների քանակ
1.	Կոռուպցիոն դեպքերի քննություն	45
2.	Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն	124
3.	Կիրեռհանցագործությունների որակումն ու քննության առանձնահատկություններ	53
4.	Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար	38
5.	Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան	45
6.	Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքար	17
7.	Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	88

2021 թվականի առաջին կիսամյակում իրականացվել են քննիչների հետևյալ վերապատրաստումները.

Հ/Հ	Դասընթաց	Վերապատրաստված քննիչների քանակ
1.	Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդր ազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար	31

2020 թվականի առաջին կիսամյակում իրականացվել են Հատուկ քննչական ծառայության քննիչների հետևյալ վերապատրաստումները.

Հ/Հ	Դասընթաց	Վերապատրաստված քննիչների քանակ
1.	Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան	5
2.	Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան	5
3.	Հանցավոր ճանապարհով ձեռք բերված և արտասահմանում գտնվող գույքի, ակտիվների և այլ արժեքների վերադարձման հիմնախնդիրներ	5

2021 թվականի առաջին կիսամյակում իրականացվել են Հատուկ քննչական ծառայության քննիչների հետևյալ վերապատրաստումները.

Հ/Հ	Դասընթաց	Վերապատրաստված քննիչների քանակ
1.	Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան	7
2.	Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան	7
3.	Հանցավոր ճանապարհով ձեռք բերված և արտասահմանում գտնվող գույքի, ակտիվների և այլ արժեքների վերադարձման հիմնախնդիրներ	7

Գործողությունը գնահատվում է որպես իրականացված:

Հարկ է նշել, որ «Քննչական մարմինների բարեփոխում» ռազմավարական նպատակը վերաբերում է նաև ԱԱԾ քննչական դեպարտամենտին: ՀՔԱՎ գարսենյակը բազմիցս անդրադարձ կատարել է ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) համակարգային փոփոխության, այն ժողովրդավարական և իրավական պետության պահանջներին

համափատասխանեցնելու և այդ մարմնի քննչական դեպարտամենտի քննիչների ոչ թափանցիկ և հակաիրավական աշխատանքների<sup>26</sup>:

Ոստիկանական/քննչական ծառայությունների տարանջատումը անվտանգության/հետախուզական ծառայություններից ընդունված սկզբունք է<sup>27</sup>: Անվտանգության ծառայության մարմինները պետք է պատասխանատու լինեն միայն ներքին և արտաքին հետախուզության համար:

Ազգային անվտանգության ծառայության մանդատում ներառված են և՛ քննչական, և՛ հետախուզական գործառույթները: «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Ազգային անվտանգության մարմինների գործունեությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- ա) հետախուզական գործունեություն.
- բ) հակահետախուզական գործունեություն.
- գ) ռազմական հակահետախուզական գործունեություն.
- դ) պետական սահմանի պահպանություն.
- ե) պայքար հանցագործությունների դեմ:

Այսպիսով, անհրաժեշտ է վերանայել գործող օրենսդրությամբ գծված ԱԱԾ մանդատը, գործառույթները և հաշվետվողականությունը: Ազգային անվտանգության ծառայությունը պետք է հստակորեն նույնականացվի որպես անվտանգության ծառայություն, որը պետք է սահմանափակվի հետախուզական տվյալների հավաքագրմամբ, այլ ոչ թե զբաղվի իրավապահ գործունեությամբ:

Բացի այդ, հարկ է ուշադրություն դարձնել, որ այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կարող են քննվել և՛ ԱԱԾ, և՛ մաքսային մարմինների ու այլ քննչական մարմինների կողմից՝ չունեն հստակ դասակարգում, թե ի՞նչքանով են իրենցից ներկայացնում հստակ և իրական վտանգ ազգային անվտանգության տեսակետից:

Մեկ այլ խնդիր քննչական ենթակայության օրենսդրական կարգավորումների հետ կապված արձանագրվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), որը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ի թիվս այլնի, փոփոխություններ են նախատեսվել նաև քննչական ենթակայությունը սահմանող դրույթներում, որոնք ուժի մեջ են մտնելու 2022 թվականի հուլիսի 1-ից: Օրենսգրքով ոչ թե միջոցներ են ձեռնարկվել բարձրացնելու մարդու իրավունքների, և մասնավորապես, խոշտանգումներից զերծ մնալու բացարձակ իրավունքի պաշտպանության արդյունավետությունը, այլև փաստացի

<sup>26</sup> <https://hcav.am/15-01-19/> <https://hcav.am/13-5-19-lragir/> <https://hcav.am/mamul-29-11-19/> <https://hcav.am/azatutyun-12-12-19/> <https://hcav.am/sashik-sultanyan-30-07-21/>

<sup>27</sup> <https://redress.org/wp-content/uploads/2018/01/January-Security-Briefing-Paper-26-Jan-English-2-.pdf>

ինստիտուցիոնալ առումով ավելի է նվազեցվել այն՝ խոշտանգման գործերի քննչական ենթակայությունը վերապահելով ազգային անվտանգության ծառայության քննիչներին<sup>28</sup>:

Համանման իրավիճակ է ստեղծվել նաև մեկ այլ օրենսդրական նախաձեռնությամբ: 2021 թվականի մարտի 24-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը, որով նախատեսվել է ձևավորել կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող հատուկ մասնագիտացված մարմին՝ Հակակոռուպցիոն կոմիտե: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից ուժի մեջ կմտնի նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունված օրենքը, որը նույնպես փոփոխություններ է նախատեսում քննչական ենթակայության վերաբերյալ կարգավորումներում, այդ թվում՝ խոշտանգման գործերով քննության իրավասության վերաբերյալ:

Ընդունված օրենքով ՀԲԾ-ն, որպես բարձրաստիճան պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների և պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի հետ կապված հանցագործությունների, այդ թվում նաև՝ խոշտանգումների, քննություն իրականացնող անկախ մարմին դադարել է գոյություն ունենալ, իսկ խոշտանգման գործերի քննության քննչական ենթակայությունը վերապահվել է ազգային անվտանգության ծառայությանը: Հարկ է ընդգծել, որ ընդունված օրենքը բովանդակային առումով լրիվ այլ կարգավորումներ է նախատեսել, քան ի սկզբանե քննարկման դրված տարբերակը, ուստի՝ նշված խնդրի կապակցությամբ ևս չի ապահովվել խոշտանգման գործերի քննչական ենթակայության բովանդակային և պատշաճ հանրային և մասնագիտական քննարկումը: Նշված փոփոխությունների վերաբերյալ ՀԲԱՎ գրասենյակը հրապարակել է դիրքորոշում<sup>29</sup>:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք.

- Վերանայել գործող օրենսդրությամբ նախատեսված ԱԱԾ մանդատը, գործառույթները և հաշվետվողականությունը՝ բացառելով Ազգային անվտանգության ծառայության կողմից իրավապահ գործունեությամբ զբաղվելու գործառույթը,
- Հստակեցնել այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կարող են քննվել և՛ ԱԱԾ, և՛ մաքսային մարմինների ու այլ քննչական մարմինների կողմից,
- Վերականգնել ՀԲԾ գործունեությունը որպես բարձրաստիճան պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների և պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ կատարած հանցագործությունների (բացառությամբ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների) քննություն իրականացնող անկախ մարմին:

<sup>28</sup> [https://hcav.am/torture-analysis-01-10-2021/#\\_ftn2](https://hcav.am/torture-analysis-01-10-2021/#_ftn2)

<sup>29</sup> <https://hcav.am/torture-analysis-01-10-2021/>

## Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխում

Սույն նպատակի շրջանակներում նախատեսվել են մի շարք գործողություններ, որոնք այլ գործողությունների մաս են կազմում, մասնավորապես, որպես առանձին գործողություններ նախատեսվել են.

- մշակել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ.
- կազմակերպել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի հանրային քննարկումը.
- ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության, ապա՝ ՀՀ ԱԺ քննարկմանը:

2019 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսված էր մշակել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը և կազմակերպել հանրային քննարկումը, ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ և հաստատել ՀՀ կառավարության կողմից: 2020 թվականի 1-ին կիսամյակում՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

Նշված 3 գործողությունները թվով 1 գործողության՝ «ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունման» արհեստականորեն բաժանված մասերն են, որոնք Ռազմավարության տրամաբանությամբ որպես առանձին գործողություններ որակվել չեն կարող, քանի որ համանման այլ գործողությունների դեպքում, երբ ենթադրվում է որոշակի օրենսդրական նախագծի կամ փաթեթի մշակում, նախագծերի կամ փաթեթի հանրային քննարկումը և կառավարություն, ապա՝ ԱԺ ներկայացումը կազմում են տվյալ գործողության մասը: Գործողությունների առանձին սահմանումը միգուցե հնարավոր լիներ պայմանավորել նրանով, որ խոսքը ամբողջական օրենսգրքի մասին է, սակայն այս հիմնավորումը նույնպես տեղին չէ, քանի որ սույն Ռազմավարությամբ նախատեսվում է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» նոր օրենսգրքի ընդունում, որում օրենսգրքի նախագծի հանրային քննարկումը և Կառավարություն, ապա ԱԺ ներկայացնելը միավորված են մեկ գործողության մեջ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ վերը նշված 3 գործողությունները հարկ է միավորել մեկ գործողության մեջ և համապատասխանաբար դիտարկել որպես մեկ գործողություն:

19.11.2019 թ. ՀՀ Քրեական օրենսգրքի նախագիծը դրվել է հանրային քննարկման<sup>30</sup>: Քրեական օրենսգիրքը Կառավարության կողմից ԱԺ է ներկայացվել 27.05.2020 թ.<sup>31</sup>: Քրեական օրենսգիրքը ընդունվել է 05.05.2021 թվականին և ուժի մեջ կմտնի 01.07.2022 թվականին<sup>32</sup>:

<sup>30</sup> <https://www.e-draft.am/projects/2115/about>

<sup>31</sup> [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11680](http://www.parliament.am/draft_history.php?id=11680)

<sup>32</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080>

Գործողությունները գնահատվում են որպես իրականացված:

Գործողություն 4.	ՀՀ քրեական նոր օրենսգրքի վերաբերյալ քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումներ:
Արդյունք	Քրեական վարույթի հանրային մասնակիցները և դատավորները իրագեկված են քրեական նոր օրենսգրքի կարգավորումներին:

Հաշվետվությունը նշված գործողության վերաբերյալ պարունակում է հակասական տեղեկատվություն, մի պարբերությամբ նշվում է, որ իրականացվել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումներ և իրականացվել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների իրագեկմանն ուղղված աշխատանքները՝ քրեական նոր օրենսգրքի կարգավորումների վերաբերյալ, հաջորդ պարբերությամբ նշվում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքը դեռևս ամբողջությամբ ընդունված չէ՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի վերաբերյալ քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումների իրականացմանն ուղղված աշխատանքները չեն սկսվել:

2020 թ. առաջին կիսամյակում նախատեսված էր մշակել վերապատրաստման ծրագրերը և անցկացնել վերապատրաստումներ: Վերապատրաստումներ չեն իրականացվել այն պատճառաբանությամբ, որ օրենսգրքերը դեռևս ԱԺ կողմից ընդունված չեն եղել: Միաժամանակ ԱՆ հայտնել է, որ դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման 2020 թ. ծրագրում ներառված ՀՀ Քրեական դատավարության և քրեական նոր օրենսգրքերի նախագծերին առնչվող «ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր» դասընթացի շրջանակներում վերապատրաստվել են 16 դատավորներ, իսկ «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» դասընթացի շրջանակներում՝ 19 դատավորներ:

ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի համագործակցության շրջանակներում 2021 թ. հունիս ամսին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի արդյունավետ կիրառումն ապահովելու համար գիտագործնական մեկնաբանություններ մշակելու և պրակտիկ աշխատողների, այդ թվում՝ դատավորների, դատախազների, փաստաբանների վերապատրաստման համար: Ըստ այդմ, մրցույթի արդյունքներով կանցկացվեն բուն վերապատրաստումները:

Հարկ է նաև նշել, որ ներկայումս առաջնայինը գիտագործնական մեկնաբանություններ մշակելն է, որից հետո նախատեսվում է, որ մինչև ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ուժի մեջ մտնելը (2022 թվականի հուլիսի 1) քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցները և դատավորները պետք է վերապատրաստված լինեն:



Գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ չիրականացված:

Գործողություն 5.	Օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն տրամադրել քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին:
Արդյունք	Քրեական վարույթն իրականացնող մարմինները, այդ թվում՝ դատարանները հագեցված են օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

2019 թ. 2-րդ կիսամյակում նախատեսված էր մշակել քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթությունները և ժամանակացույցը, իսկ 2020 թվականի 1-ին կիսամյակում՝ Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին տրամադրել օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները՝ ըստ առաջնահերթությունների և ժամանակացույցի:

2020 թ. 1-ին և 2-րդ կիսամյակների Հաշվետվությունները սույն գործողության կապակցությամբ պարունակում են հակասական տեղեկություններ, մասնավորապես 1-ին կիսամյակում կատարման ենթակա գործողությունների Հաշվետվությամբ գործողության կարգավիճակը նշվել է որպես ժամանակավորապես կասեցված, և որպես հավելյալ տեղեկատվություն նշվել է, որ «Հաշվի առնելով այն, որ ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերը կրկին դրվել են շրջանառության մեջ, հանրային մեծ քննարկումների փուլ անցել և բավական լրամշակվել՝ անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրական որոշարկված կարգավորումների բացակայության պայմաններում հնարավոր չի եղել ամբողջությամբ տրամադրել: Մասնակի կատարումը պայմանավորված է անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների սպառիչ ցանկ կազմելու անհրաժեշտությամբ: Իրականացված ուսումնասիրություններով վեր են հանվել օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար ՀՀ ոստիկանությանն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների շրջանակը: Դրանք են՝ գաղտնի քննչական գործողությունների կատարման, քրեական վարույթի համար նշանակություն ունեցող առարկաների և փաստաթղթերի, ինչպես նաև դեպքի վայրի պահպանության, ձերբակալում դատավարական հարկադրանքի միջոցի պատշաճ իրականացման համար համապատասխան ստորաբաժանումներին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները, որոնց կոնկրետ ցանկը, առաջնահերթություններն ու նախնական ֆինանսական գնահատականները

կներկայացվեն մինչև սույն թվականի օգոստոսի 15-ը: Բացի այդ, կասեցումը պայմանավորված է եղել COVID-19 համավարակով»:

2020 թվականի 2-րդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների Հաշվետվության համաձայն գործողությունը ներկայացված է որպես չկատարված և որպես տեղեկատվություն նշվում է, որ «Նախատեսված օրենսդրական փոփոխությունները չեն հանգեցնում ՀՀ ոստիկանության գործառույթների այնպիսի փոփոխության, որը կարող է առաջացնել լրացուցիչ նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման անհրաժեշտություն»:

1-ին Հաշվետվությունից պարզ է դառնում, որ վեր է հանվել օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար ՀՀ ոստիկանության անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների շրջանակը, մինչդեռ 2-րդ Հաշվետվությամբ նշվում է, որ լրացուցիչ նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման անհրաժեշտությունը բացակայում է: Միաժամանակ 2-րդ Հաշվետվությունում բացակայում է քրեական վարույթն իրականացնող այլ մարմինների, այդ թվում դատարանների նյութատեխնիկական աջակցության վերաբերյալ տեղեկատվությունը և ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ սույն գործողությունը վերաբերում է միայն ոստիկանության նյութատեխնիկական աջակցությանը:

Նշված գործողության կատարման վերաբերյալ Կազմակերպության հարցմանն ի պատասխան ԱՆ հայտնել է. «Կառավարության 03.06.2021թ. N 911-Ն որոշմամբ Կառավարությունը համաձայնություն է տվել վերաքննիչ վարչական, վերաքննիչ քաղաքացիական, սնանկության դատարանների դատավորների թվակազմը ավելացնել համապատասխանաբար՝ 3, 3 և 4 դատավորներով, ինչպես նաև Կառավարության 08.07.2021թ. N 1119-Ն որոշմամբ Կառավարությունը համաձայնություն է տվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորների թվակազմը ավելացնել 3, իսկ առաջին ատյանի դատարանների դատավորների թվակազմը՝ 17 դատավորներով: Ընդհանուր առմամբ Կառավարությունը համաձայնություն է տվել դատավորների թվակազմը ավելացնելու 30 դատավորներով, որոնց համար ՀՀ արդարադատության նախարարությունը ապահովելու է անհրաժեշտ շենքային պայմաններով և սարքավորումներով:

ԱՆ նաև նշել է, որ համապատասխան տեղեկատվությունը ներկայացված է «Դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով» և «Դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով» գործողությունների բաժնում: Սակայն, հարկ է նշել, որ սույն գործողությունը ոչ թե միտված է առհասարակ դատարանների նյութատեխնիկական հագեցմանը, որի վերաբերյալ առկա է առանձին գործողություն, այլ քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ

թվում՝ դատարաններին այնպիսի նյութատեխնիկական աջակցության տրամադրմանը, որի անհրաժեշտությունը ծագել է օրենսդրական փոփոխություններից:

Գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 6.	Մշակել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ:
Գործողություն 7.	Կազմակերպել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հանրային քննարկումը:
Գործողություն 8.	ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության, ապա՝ ՀՀ ԱԺ քննարկմանը:

2019 թ. 2-րդ կիսամյակում նախատեսված էր մշակել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը և կազմակերպել հանրային քննարկումը, ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ և հաստատել ՀՀ կառավարության կողմից: 2020 թվականի 1-ին կիսամյակում՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

08.11.2019 թ. ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը դրվել է հանրային քննարման<sup>33</sup>: Քրեական օրենսգիրքը Կառավարության կողմից ԱԺ է ներկայացվել 03.06.2020 թվականին<sup>34</sup>: Քրեական օրենսգիրքը ընդունվել է 30.06.2021 թ. և ուժի մեջ կմտնի 01.07.2022 թ.<sup>35</sup>:

Ինչպես արդեն նշվեց ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունման վերաբերյալ, այնպես էլ այս դեպքում նշված 3 գործողությունները փուլային են, որոնք Ռազմավարության տրամաբանությամբ որպես առանձին գործողություններ որակվել չեն կարող:

Գործողությունները գնահատվում են որպես իրականացված:

Գործողություն 9.	ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի վերաբերյալ քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումներ:
Արդյունք	Քրեական վարույթի հանրային մասնակիցները և դատավորները իրազեկված են քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորում-ներին:

2019 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսված էր ընտրել վերապատրաստումների ծրագրերի մշակման և վերապատրաստումների անցկացման համար մասնագետներ,

<sup>33</sup> <https://www.e-draft.am/projects/2085>  
<sup>34</sup> [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11685](http://www.parliament.am/draft_history.php?id=11685)  
<sup>35</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=154763>

մշակել վերապատրաստման ծրագրերի հիմնական ուղղություններ, իսկ 2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում՝ անցկացնել վերապատրաստումներ:

2020 թ. 2-րդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների Հաշվետվությունը նշված գործողության վերաբերյալ պարունակում է հակասական տեղեկատվություն, մի պարբերությամբ նշվում է, որ իրականացվել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումներ և իրազեկման միջոցառումներ, հաջորդ պարբերությամբ նշվում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական նոր օրենսգիրքը դեռևս ամբողջությամբ ընդունված չէ՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի վերաբերյալ քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումների իրականացմանն ուղղված աշխատանքները չեն սկսվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը դեռևս ամբողջությամբ ընդունված չէ:

ԱՆ նշել է, որ Եվրոպայի խորհրդի համագործակցության շրջանակներում 2021 թվականի հունիս ամսին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի արդյունավետ կիրառումն ապահովելու համար գիտագործնական մեկնաբանություններ մշակելու և պրակտիկ աշխատողների, այդ թվում՝ դատավորների, դատախազների, փաստաբանների վերապատրաստման համար: Ըստ այդմ, մրցույթի արդյունքներով կանցկացվեն բուն վերապատրաստումները և առաջնայինը գիտագործնական մեկնաբանություններ մշակելն է, որից հետո նախատեսվում է, որ մինչև ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ուժի մեջ մտնելը (2022 թվականի հուլիսի 1) քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցները և դատավորները պետք է վերապատրաստված լինեն:

Պետք է նկատի ունենալ, որ թե՛ քրեական օրենսգրքի, թե՛ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի վերաբերյալ վերապատրաստումներ իրականացնելու մեկնարկը ըստ Հաշվետվությունների կապվում է նախագծերի ընունման հետ: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը ընդունվել է 30.06.2021 թվականին, իսկ ՀՀ քրեական նոր օրենսգիրքը՝ 05.05.2021 թվականին: Ըստ այդմ, կարիք կա գործողությունների ծրագրում նախատեսել վերապատրաստումների իրականացման նոր ժամկետները, քանի որ նշված 2 գործողությունների կատարման ժամկետները բավականին հետ են այն ժամկետներից, որոնց ընթացքում նախատեսվում էր իրականացնել վերապատրաստումները: Նման պայմաններում պահանջվում է կատարել գործողությունների ծրագրի ժամկետների փոփոխություն:

Գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 10.	Օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն տրամադրել քրեական վարույթն իրականացնող
-------------------	--

	մարմիններին, այդ թվում՝ դատարաններին:
Արդյունք	Քրեական վարույթն իրականացնող մարմինները, այդ թվում՝ դատարանները հազեցված են օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

Ռազմավարության 2-րդ հավելվածով նախատեսված է նույնանուն ևս մեկ գործողություն՝ սույն նպատակի շրջանակներում դիտարկված 5-րդ գործողությունը, որը հաջորդում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունման, հանրային քննարկման և Կառավարություն, ապա ԱԺ ներկայացնելու գործողություններին, ինչից կարելի է ենթադրել, որ գործողությամբ հիշատակված «օրենսդրական փոփոխությունները» ՀՀ քրեական նոր օրենսգրքի փոփոխություններն են, իսկ քննարկվող 2-րդ գործողությունը վերաբերում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի փոփոխություններին: Հաշվետվությունում 2-րդ գործողության կատարման վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Այնուամենայնիվ, հարկ է հստակեցնել նշված 2 գործողություններից յուրաքանչյուրի առարկան և Հաշվետվություններում արտացոլել յուրաքանչյուրի կատարման առանձին վիճակը կամ միավորել մեկ գործողության մեջ՝ ուժը կորցրած ճանաչելով դրանցից մեկը:

Գործողությունը կրկնվող գործողություն է:

Առաջարկություններ.

- «ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի մշակում», «ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի հանրային քննարկման կազմակերպում», «ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարության, ապա՝ ՀՀ ԱԺ քննարկմանը» գործողությունները միավորել մեկ գործողության մեջ:
- Ուժը կորցրած ճանաչել «Օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն տրամադրել քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին» գործողությունը՝ կրկնվող լինելու հիմքով:

Նպատակ 12.	Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում:
Գործողություն 1. <sup>36</sup>	Մշակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ իրավական:

<sup>36</sup> Մշակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված օրենքների նախագծեր: Ներկայումս 1) Հստակեցված չեն ոչ թղթային արժեթղթերի, էլեկտրոնային փողի, կրիպտոակտիվների կարգավիճակը: 2) Արդիականացված չեն պայմանագրային իրավունքի, այդ թվում՝ պայմանագրերի ձևին վերաբերող կարգավորումները, կնքվում է առցանց տիրույթում (էլեկտրոնային հարթակներում)՝ կնքվող պայմանագրերին վերաբերող կարգավորումները: 3) Առկա են շուկայական հարաբերություններին ոչ համահունչ կազմակերպարավական ձև կորպորատիվ իրավահարաբերություններ կարգավորող օրենսդրությունում առկա չեն կորպորատիվ կառավարման ժամանակակից լուծումներ: 4) Ապահովված չէ գնումների վերաբերյալ օրենսդրության և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխանությունը 5) Պայմանագրերի առանձին տեսակները կարգավորող իրավական նորմերը չեն համապատասխանում ոլորտի զարգացումներին (այդ թվում՝ բանկային և ապահովագրական),

	ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված օրենքների նախագծեր:
Արդյունք	Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը և քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը համապատասխանում է շուկայի առկա պահանջներին:

2020 թ. առաջին կիսամյակում նախատեսված է մշակել օրենքի նախագծերը, իսկ 2020 թ. երկրորդ կիսամյակում՝ հաստատել և ներկայացնել ԱԺ:

29.12.2020 թ. հանրային քննարկման է դրվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների [նախագծերը](#): Սակայն Նախագծերում բացակայում են կարգավորումները՝ ուղղված 4-րդ և 8-րդ կետերի կատարմանը:

Հաշվետվությունում նշված է, որ Կատարված է մասնակի: Նախագծերը մշակվել են: Մինևույն ժամանակ մի շարք հարցերի մասով փորձագիտական աջակցություն ստանալու համար ակնկալվում է ԵՄ աջակցությունը. այդ մասով մշակվել է տեխնիկական առաջադրանք և ներկայացվել ԵՄ գործընկերներին: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Հաշվետվությունը, սակայն, չի նախատեսել գործողության ամբողջական իրականացման ենթադրվող ժամկետները:

Ուստի, սույն գործողությունը գնահատվում է որպես մասնակի կատարված:

---

առկա են հակասություններ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և ոլորտի օրենսդրությամբ սահմանված հատուկ կարգավորումներիմիջև: 6) Ապահովված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ արժեթղթերին վերաբերող, կարգավորումների համապատասխանությունհամարժեքությունը ոլորտը կարգավորող օրենսդրության հետ: 7) Հստակ տարանջատված չեն ապահովված իրավունքի և գրավի ինստիտուտները, դրանց կիրառման առանձնահատկությունները:

8) Վերանայման ենթակա են վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների հետ կապված իրավակարգավորումները՝անչափահասների շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ, կյանքին և առողջությանը պատճառած վնասի վերաբերյալ նորմերը:

Գործողություն 2. <sup>37</sup>	Մշակել ՀՀ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի և նշված օրենքներից բխող այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված նախագծեր:
Արդյունք	Օրենսդրությունը համապատասխանում է քաղաքացիաիրավական հարաբերությունների զարգացման արդի միտումներին:

2020 թվականի առաջին կիսամյակում նախատեսված է մշակել օրենքի նախագծերը, իսկ 2020 թվականի երկրորդ կիսամյակում՝ հաստատել և ներկայացնել ԱԺ:

«Սպառողական կրեդիտավորման մասին», «Բանկային ավանդների ներգրավման մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը գտնվում են ԱԺ-ում, իսկ մյուս օրենքների մասով գործողությունը մնում է չկատարված:

2020 թ. 2-րդ կիսամյակի Հաշվետվության համաձայն՝ Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Հաշվետվությունը, սակայն, չի նախատեսել գործողության ամբողջական իրականացման ենթադրվող ժամկետները:

Ուստի, գործողությունը գնահատվում է որպես մասնակի կատարված:

Գործողություն 3.	ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառության ընթացքում ծագած խնդիրների առանձնացում և դրանց լուծման նպատակով փոփոխությունների կատարում:
Արդյունք	Պրակտիկայում նոր ինստիտուտների և նոր կարգավորումների կիրառման արդյունքում ծագած խնդիրների լուծում:

<sup>37</sup> Մշակել ՀՀ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, «Վճարման հանձնարարա-կանով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի և նշված օրենքներից բխող այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված նախագծեր:

2020 թ. առաջին կիսամյակում նախատեսված է մշակել «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառել և ուղարկել ՀՀ վարչապետի աշխատակազմ, իսկ 2020 թվականի երկրորդ կիսամյակում՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության արժանացնել ՀՀ կառավարության կողմից:

2020 թ. 2-րդ կիսամյակի Հաշվետվության համաձայն՝ Նախագծերը գտնվում են մշակման փուլում, քննարկումներ են իրականացվում դատական իշխանության ներկայացուցիչների հետ: Այս մասով ակնկալվում է միջազգային փորձագիտական աջակցություն գերմանական IRZ հիմնադրամի ծրագրով, հանդիպումներ են տեղի ունեցել ծրագրի փորձագետների հետ: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Հաշվետվությունը, սակայն, չի նախատեսել գործողության ամբողջական իրականացման ենթադրվող ժամկետները:

Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառության ընթացքում ծագած խնդիրների առանձնացում և դրանց լուծման նպատակով փոփոխությունների կատարում» գործողությունը անհստակ է, բացի այդ, Ռազմավարության հաստատումից տևական ժամանակ է անցել, որը հնարավորություն է տվել առանձնացնել նշված խնդիրները, ուստի անհրաժեշտ է Ռազմավարության գործողությունների ծրագրում փոփոխություններ իրականացնելիս նաև նշել առանձնացված խնդիրները նշված գործողությանը առավել առարկայական անդրադառնալու համար:

Գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Նպատակ 13.	Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում:
Գործողություն 1.	ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով Վճռաբեկ դատարանի վարչական պալատ:
Արդյունք	Վճռաբեկ դատարանում վարչական պալատի ստեղծման միջոցով դատական պաշտպանության արդյունավետության ապահովում:

2020 թ. 1-ին կիսամյակում նախատեսված էր «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերի մշակումը, սահմանված կարգով շրջանառումը և ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ. 2020 թ. 2-րդ կիսամյակում՝ ՀՀ կառավարության կողմից հաստատումը և ներկայացումը ԱԺ:



«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների [նախագծերը](#) 2021 թվականի ապրիլի 6-ին դրվել են հանրային քննարկման, 17.06.2021 թ. հաստատվել Կառավարության կողմից և [22.06.2021 թվականին ներկայացվել ՀՀ ԱԺ](#):

Գործողությունը գնահատվում է որպես ժամկետների խախտմամբ իրականացված:

Գործողություն 2.	ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ
Արդյունք	Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ենթակայության հարցի և գործի քննության առանձնահատկությունների հստակեցում:

2020 թ. 1-ին կիսամյակում նախատեսված էր «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախագծերի մշակումը, սահմանված կարգով շրջանառումը և ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 թվականի 2-րդ կիսամյակում՝ ՀՀ կառավարության կողմից հաստատումը և ներկայացումը ԱԺ:

Նախատեսվող փոփոխություններով ակնկալվում է կարգավորել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ընդդատության հարցը:

Հարկ է նշել, որ պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ ընդունած ակտի դեմ ներկայացված բողոքները քննելու ընդդատության հետ կապված օրենսդրական [նախագծեր](#) ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և դեռևս 2017 թվականին դրվել են հանրային քննարկման: Նշված նախագծերը թեև մշակվել են մինչև Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի ՄԴՈ-1439 որոշման ընդունումը, այնուամենայնիվ կարգավորում են նույն՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ընդդատության հարցը, ուստի կարելի է եզրակացնել, որ քննարկվող գործողության վերաբերյալ միջոցառումներ նախաձեռնվել են մինչև Ռազմավարության հաստատումը, ուստի նշված գործողությունը թեև իրենից ենթադրում է վարչական արդարադատության բարեփոխում, սակայն առավել վաղ կարգավորման գործընթաց սկսելու ուժով չի կարող հանդիսանալ Ռազմավարության մաս:

Գործողությունը չի բխում Ռազմավարությունից:

Գործողություն 3.	ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով գրավոր և պարզեցված նոր վարույթներ:
Արդյունք	Վերաքննության և վճռաբեկության փուլերի համար գրավոր ընթացակարգի, իսկ կոնկրետ գործերի համար պարզեցված վարույթի նախատեսում:

2020 թ. 1-ին կիսամյակում նախատեսված էր մշակել «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 2-րդ կիսամյակում՝ Նախագիծը հաստատել ՀՀ կառավարության կողմից և ներկայացնել ԱԺ:

Գրավոր և պարզեցված վարույթներ նախատեսող [Նախագիծը](#) 17.12.2019 թ. դրվել է հանրային քննարկման, սակայն դեռ չի ներկայացվել ԱԺ, ուստի գործողությունը գնահատվում է որպես մասնակի կատարված:

Գործողություն 4.	ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով ծանուցումների նոր ընթացակարգեր:
Արդյունք	Վարչական դատավարությունում ծանուցման նոր ընթացակարգերի ներդնում:

2020 1-ին կիսամյակում նախատեսված էր մշակել «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 2-րդ կիսամյակում՝ Նախագիծը հաստատել ՀՀ կառավարության կողմից և ներկայացնել ԱԺ:

17.12.2019 թ. նախագիծը դրվել է հանրային քննարկման, սակայն դեռ չի ներկայացվել ԱԺ, ուստի գործողությունը կատարվել է մասնակի:

Գործողություն 5.	ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ վերանայելով հատուկ վարույթների տեսակները:
Արդյունք	Վարչական դատավարությունում վարույթների տեսակների և դրանց դասակարգման վերանայում:

2020 թ. 1-ին կիսամյակում նախատեսված է մշակել «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, շրջանառել և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 2-րդ կիսամյակում՝ Նախագիծը հաստատել ՀՀ կառավարության կողմից և ներկայացնել ԱԺ:

2020 թ. 2-րդ կիսամյակի Հաշվետվության համաձայն՝ գործողությունը նշվում է որպես մասնակի կատարված, սակայն որպես արդեն իսկ իրականացված գործողություն անորոշ

եղանակով նշվում է, որ «իրականացվում են ուսումնասիրություններ և աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Հաշվետվությունում, սակայն, չեն նշվում գործողության իրականացման նոր ժամկետները:

Գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 6.	ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և «Պետական տուրքի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրք վճարելու պարտականություն:
Արդյունք	Պետական տուրքից ազատված լինելու կարգավորումների վերանայում:

2020 թ. 1-ին կիսամյակում նախատեսված է մշակել «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը, շրջանառել և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 թ. 2-րդ կիսամյակում՝ Նախագծերը հաստատել ՀՀ կառավարության կողմից և ներկայացնել ԱԺ:

2020 թվականի հունիսի 30-ին հանրային քննարկման է դրել [«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:](#)

19.04.2021 թ. «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը ընդունվել է:<sup>38</sup>

Հարկ է նշել, որ սույն գործողությունը վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացման նպատակի շրջանակներում սահմանված գործողություն է, վերաբերում է միայն վարչական արդարադատության շրջանակներում պետական տուրքի փոփոխությանը :

Ռազմավարության 1-ին Հավելվածում նախատեսված է. «Վարչական դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման միջոց է հանդիսանում հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրքից ազատված լինելու վերաբերյալ

<sup>38</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=152129>

կարգավորումների վերանայումը: Հատկանշական է, որ ներկայումս անձինք ազատված են հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրք վճարելու պարտականությունից: Իսկ դատական պրակտիկան զարգացել է այն ուղղությամբ, որ նույնիսկ երբ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելիս դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա, ապա վերջինս պարտավոր չէ պետությանը հատուցել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով: Մտացվում է, որ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը կազմող գրեթե բոլոր գործերով հայցվորները ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից: Ըստ այդմ, անհրաժեշտ է սահմանել պետական տուրք վճարելու պարտականություն, իսկ պետական տուրքի վճարումից ազատելու դեպքերի համար սահմանել հստակ հիմքեր, որը կկիրառվի միայն դատարանի որոշմամբ»:

ՀՔԱՎ գրասենյակն օրենքի նախագծի վերաբերյալ իր դիտարկումներն է ներկայացրել, որի համառոտ նկարագրությունը ներկայացնում ենք ստորև<sup>39</sup>.

«... դրամական պահանջներով դատարան ներկայացվող հայցադիմումի համար նախատեսվել է պետական տուրքի չափ՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 6-ապատիկից, այսինքն՝ գործող կարգավորման համեմատ նվազագույն չափը ավելացվել է 4 անգամ, ինչը խոչընդոտ է հանդիսանում փոքր դրամական հայցապահանջներով հայցադիմումների ներկայացման համար և հետապնդում է նշված հայցապահանջներից «ազատման» նպատակ: Ոչ դրամական պահանջներով դատարան ներկայացվող հայցադիմումի համար նախատեսվել է բազային տուրքի 20-ապատիկի չափով պետական տուրքի վճարման պարտավորություն, ինչը գործող կարգավորման համեմատ ավելացվել է շուրջ 5 անգամ: Նման ավելացումներ նախատեսվել է նաև վերադաս դատարաններ ներկայացվող բողոքների համար վճարվող պետական տուրքի դրույքաչափերի նկատմամբ: Վերադաս դատարանը, վերահսկողություն իրականացնելով դատական ենթադրյալ սխալ պարունակող՝ ստորադաս աստյանի ինքնուրույն դատական ակտի նկատմամբ, կատարում է գործողություն, որն օրենքի իմաստով հանդիսանում է պետական տուրքի գանձման ինքնուրույն օբյեկտ: Մտացվում է, որ համեմատած նախկին կարգավորման, եթե անձը ձեռնամուխ էր լինում երեք աստյաններում իր իրավունքների դատական պաշտպանությանը դրամական պահանջ ներկայացնող հայցապահանջով, ապա պարտավոր էր վճարել հայցապահանջի ընդամենը 8 տոկոսը, իսկ ներկայիս կարգավորումների դեպքում՝ 12 տոկոսը, իսկ Մահմանադրական դատարան դիմելու համար՝ բազային տուրքի տասնապատիկի փոխարեն 30-ապատիկը:

<sup>39</sup> <https://hcav.am/petturq/>

Հնգապատիկ ավելացվել է նաև սնանկության համար ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող դիմումների պետական տուրքի դրույքաչափը և կրկնապատիկ՝ իրավաբանական անձանց համար: Անգամ բարձր կենսաապահովման մակարդակ և սպառողական զամբյուղի բարձր չափ ունեցող երկրներում նախատեսված չէ սնանկության դիմումների այնպիսի պետական տուրքի դրույքաչափեր, ինչպիսիք Նախագծով են սահմանվել: Նախատեսվող կարգավորումներով սահմանվել են միջամտության այնպիսի սահմաններ՝ պետական տուրքի այնպիսի դրույքաչափեր, որոնց խորությունը անհամարժեք է սահմանափակվող հիմնական իրավունքի՝ արդար դատաքննության տարր կազմող դատարանի մատչելիության իրավունքի արժեքանական նշանակությանը և կշռին, ինչի արդյունքում խաթարվում է նշված իրավունքի էությունը՝ հիմքում դնելով չափազանց մեծ դատական վճարները, ի հետևանք որի՝ դատական պաշտպանության իրավունքը կդադարի «գործնական և արդյունավետ» լինելուց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծով սահմանված պետական տուրքի բարձր դրույքաչափերի նախատեսումը այն հիմնավորմամբ, որ պետական տուրքի բարձր դրույքաչափերը, ինչպես նաև պետական տուրքի նվազագույն սահմանաչափերի ավելացումը խախտում են արդարադատության մատչելիության իրավունքը, հետապնդում են դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ և դատական պաշտպանության իրավունքը դարձնում ֆինանսապես «անհասանելի»:

Այսպիսով, Ռազմավարությամբ քաղաքացիական դատավարության շրջանակներում ներկայացվող հայցադիմումների, դիմումների, բողոքների համար վճարվող պետական տուրքի դրույքաչափի բարձրացման անհրաժեշտություն կամ պահանջ չի նախատեսվել, սակայն, ինչպես նշվեց վերը, այն ի հեճուկս Ռազմավարության, իրականացվել է: Կատարված փոփոխությունները չեն բխում դատական և իրավական բարեփոխումների տրամաբանությունից և դատական իշխանության նկատմամբ հանրության վստահության բարձրացման նպատակից:

Անդրադառնալով նաև պետական տուրքից ազատված լինելու կարգավորումներին՝ ՀՔԱՎ գրասենյակը 2021 թվականի ընթացքում ներկայացրել է մի շարք առաջարկություններ<sup>40</sup>, մասնավորապես.

- 🚩 «Պետական տուրքի մասին» օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածներում համապատասխանաբար նոտարական գործողություններ և քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնություն նախատեսել նաև դատապարտյալների համար:
- 🚩 Անձին անգործունակ ճանաչելու, ոչ հոժարակամ հոսպիտալացման և ոչ հոժարակամ հետազոտության և/կամ բուժման ենթարկելու վերաբերյալ վերջնական դատական ակտերն այդ անձի կամ վերջինիս ներկայացուցչի միջոցով

<sup>40</sup> <https://hcav.am/wp-content/uploads/2021/06/%D5%8A%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BF%D5%B8%D6%82%D6%80%D6%84.pdf>

բողոքարկելու իրավունքի պատշաճ իրացման նպատակով այդ ֆիզիկական անձանց վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար ազատել պետական տուրք վճարելու պարտականությունից՝ «Պետական տուրքի մասին» օրենքի 22-րդ հոդվածում արտոնություն նախատեսելով:

Գործողությունը գնահատվում է որպես իրականացված:

Գործողություն 7.	Վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակի ընդլայնումը:
Արդյունք	Վարչարարության արդյունքում խախտված իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովում:

2020 թ. կիսամյակում նախատեսված է մշակել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը, շրջանառել և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 թ. 2-րդ կիսամյակում՝ Նախագծերը հաստատել ՀՀ կառավարության կողմից և ներկայացնել ԱԺ:

2020 թվականի 2-րդ կիսամյակի Հաշվետվության համաձայն՝ գործողությունը նշվում է որպես մասնակի կատարված, սակայն որպես արդեն իսկ իրականացված գործողություն անորոշ եղանակով նշվում է որ «իրականացվում են ուսումնասիրություններ և աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Հաշվետվությունում, սակայն, չեն նշվում գործողության իրականացման նոր ժամկետները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծերը չեն դրվել հանրային քննարկման, ուստի գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 8.	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով վարչական ակտերի պարտադիր բողոքարկման ընթացակարգեր:
Արդյունք	Վարչական դատարանի ծանրաբեռնվածության թեթևացում:

2020 թ. կիսամյակում նախատեսված է մշակել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, շրջանառել և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 թ. 2-րդ կիսամյակում՝ Նախագիծը հաստատել ՀՀ կառավարության կողմից և ներկայացնել ԱԺ:

2020 թ. 2-րդ կիսամյակի Հաշվետվության համաձայն՝ գործողությունը նշվում է որպես մասնակի կատարված, սակայն որպես արդեն իսկ իրականացված գործողություն անորոշ

եղանակով նշվում է որ «իրականացվում են ուսումնասիրություններ և աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Հաշվետվությունում, սակայն, չեն նշվում գործողության իրականացման նոր ժամկետները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծերը չեն դրվել հանրային քննարկման, ուստի գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 9.	Վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման արդյունավետ մեխանիզմների ներդրում:
Արդյունք	Վարչական բողոքարկման ընթացակարգերի կատարելագործում:

2020 թ. առաջին կիսամյակում նախատեսված է մշակել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, սահմանված կարգով շրջանառել և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 թվականի երկրորդ կիսամյակում՝ հաստատել Նախագիծը ՀՀ կառավարության կողմից և ներկայացնել ԱԺ:

ԱՆ 2020 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն գործողությունը կատարված է մասնակի, որպես աշխատանքների նկարագրություն՝ նշվում է. «կատարվում են ուսումնասիրությունների իրականացման աշխատանքներ»: Նաև նշվել է, որ աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Հաշվետվությունում, սակայն, չեն նշվում գործողության իրականացման նոր ժամկետները:

ԱՆ Կազմակերպության՝ 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ գործողությունների կատարման վերաբերյալ հարցմանն ի պատասխան 12.08.2021 թ. հայտնել է, որ պատերազմական իրավիճակի հետևանքով հայտարարված ռազմական դրության, ինչպես նաև կորոնավիրուսային համավարակի հետևանքով հետաձգված նշված գործողությունների կատարման նպատակով ներկայումս ընթանում են մասնագիտական քննարկումներ: Հարկ է նաև նշել, որ նշված գործողությունների կատարումն ակնկալվում է իրականացնել

Միջազգային իրավունքի զարգացման հիմնադրամի (IRZ) և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցության արդյունքում իրականացվող «Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդում» («Consolidation of the Justice System») ծրագրի շրջանակներում՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ: Նշենք նաև, որ այս ծրագրի շրջանակներում իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, որի արդյունքում նախագծի մշակմանն ուղղված առաջարկներ են ներկայացվել: Անհրաժեշտ է նաև նշել, որ ներկայումս «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի (ԵՀՀ) հետ համատեղ իրականացվող «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի

շրջանակներում նախատեսվում է իրականացնել վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման արդյունավետության և պարտադիր բողոքարկման ընթացակարգերի գոյության անհրաժեշտության գնահատում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծերը չեն դրվել հանրային քննարկման, ուստի գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 10.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունում:		
Արդյունք	Վարչական ինստիտուցիոնալ առկայություն:	իրավախախտումների և համապարփակ	վերաբերյալ օրենսդրության

2020 թ. առաջին կիսամյակում նախատեսված էր մշակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ, սահմանված կարգով շրջանառել և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 թ. երկրորդ կիսամյակում՝ հաստատել Նախագիծը ՀՀ կառավարության կողմից և ներկայացնել ԱԾ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը մշակվել և դրվել է հանրային քննարկման 2017 թվականին, սակայն դեռևս չի ներկայացվել ԱԾ:

2020 թ. 1-ին կիսամյակի Հաշվետվության համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքը ներկայումս գտնվում է լրամշակման փուլում: Հարկ է նշել, որ նախագիծը անհրաժեշտ է եղել քննարկել Քրեական նոր օրենսգրքի նախագծի մշակման հետ համատեղ՝ հաշվի առնելով երկու նախագծերում առկա նույնանման իրավական կարգավորումները:

2020 թ. 2-րդ կիսամյակի Հաշվետվության համաձայն Միջազգային իրավունքի զարգացման հիմնադրամի (IRZ) և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցության արդյունքում իրականացվող ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի մշակում՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ:

2020 թ. 1-ին կիսամյակի հաշվետվությունից բխում է, որ աշխատանքները իրականացվելիս են եղել 2017 թվականին հանրային քննարկման դրված օրենսգրքի նախագծի վրա, մինչդեռ 2020 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունում նշվում է, որ «նախատեսվում է նոր օրենսգրքի մշակում»: Այս կապակցությամբ Հաշվետվությունը պետք է պարունակի ավելի հստակ և բովանդակ տեղեկատվություն:

Այսպիսով, 2017 թվականին մշակված օրենսգրքի նախագիծը չի կարող համարվել 2019 թվականին հաստատված Ռազմավարությամբ կատարված գործողություն, ինչ վերաբերում է նոր օրենսգրքի մշակմանը, ապա նման Նախագիծ հանրային քննարկման չի դրվել, ուստի գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:



Նպատակ 14.	Մնանկության համակարգի արդյունավետության բարձրացում:
Գործողություն 1.	Ընդունել սնանկության կառավարիչների որակավորման իրականացման կարգ սահմանող նախարարի նորմատիվ իրավական ակտ:
Արդյունք	Վերանայվել են սնանկության կառավարիչների որակավորման ընթացակարգերը:

2020 թ. առաջին կիսամյակում նախատեսված էր մշակել իրավական ակտի նախագիծը և շրջանառել, իսկ 2020 թ. 2-րդ կիսամյակի ընթացքում՝ ընդունել նախագիծը:

13.03.2020 թ. ընդունվել և 15.04.2020 թ. ուժի մեջ է մտել Արդարադատության նախարարի թիվ 112-Ն հրամանը:

Գործողությունը գնահատվում է որպես իրականացված:

Գործողություն 2.	Նախաձեռնել «Մնանկության մասին» օրենքի գիտագործնական մեկնաբանությունների, ձեռնարկների և (կամ) ուղեցույցների մշակում:
Արդյունք	Շահագրգիռ անձինք ունեն վստահելի աղբյուրներ՝ սնանկության վարույթի վերաբերյալ գիտելիքներ ձեռքբերելու և ծագած գործնական խնդիրներին լուծում տալու համար:

2020 թ. առաջին կիսամյակում նախատեսվել էր կազմել աշխատանքների իրականացման ժամանակացույց, ներգրավել համապատասխան մասնագետներ, նախանշել աշխատությունների հիմնական ուղղությունները: 2020 թ. 2-րդ կիսամյակում՝ նախանշված ուղղությունների հիման վրա մշակել համապատասխան աղբյուրները, աշխատությունները, կազմակերպել խմբագրական աշխատանքները, իրականացնել աշխատանքների փորձաքննություն, ամփոփում, հրապարակում:

2020 թ. 2-րդ կիսամյակային հաշվետվության համաձայն՝ գործողությունը նշված է մասնակի կատարված, սակայն բացակայում են այն աշխատանքները, որոնք իրականացվել են ի կատարումն գործողության: «Այլ նշումներ» դաշտում վերացական կերպով նշվում է, որ «Աշխատանքներ են տարվում ՎՁԵԲ/EBRD-ի հետ՝ վերջինիս աջակցությամբ ուղեցույցները մշակելու համար»: 22.12.2020 թվականին ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Մնանկության մասին» օրենքի ուղեցույց-մեկնաբանությունների մշակման աշխատանքները նախատեսվել էր ավարտին հասցնել 2021թ. գարնանը:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 3.	Բարելավել սնանկության կառավարիչների վերապատրաստման ծրագրերը:
Արդյունք	<p>Բարելավվել է ուսումնական նյութերի արդիականությունը, բազմազանությունը և որակը:</p> <p>Պատասխանատու մարմին՝ ՀՀ արդարադատության նախարարություն, սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություններ (համաձայնությամբ):</p>

2020 թ. 1-ին կիսամյակում նախատեսված էր կազմել աշխատանքների իրականացման ժամանակացույց, ներգրավել համապատասխան մասնագետներ, նախագծել վերապատրաստման ծրագրերի հիմնական ուղղությունները: 2020 թ. 2-րդ կիսամյակում՝ նախանշված ուղղությունների հիման վրա ուսումնասիրություններ իրականացնել, վերապատրաստման նոր ծրագրեր մշակել և հաստատել:

2020 թվականի մարտի 12-ին Արդարադատության նախարարի «Սնանկության գործով կառավարիչների ամենամյա պարտադիր վերապատրաստումներ անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 104-Ն հրամանով սահմանվել է ամենամյա պարտադիր վերապատրաստումներ անցկացնելու կարգը: Հրամանի հիման վրա կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցությամբ մշակվել է վերապատրաստման դասընթացների ծրագիրը և վերապատրաստումները մեկնարկել են 2020 թվականի աշնանը:

ԱՆ կողմից 14.09.2021 թ. տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի համար սնանկության գործերով կառավարիչների վերապատրաստման դասընթացներին համաձայն «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության ներկայացրած գրության 24 ակադեմիական ժամ տևողությամբ մասնակցել են բոլոր կառավարիչները, բացառությամբ Գարեգին Սարգսյանի, ով ընդհանրապես չի մասնակցել և Խաչատուր Պապոյանի, ով մասնակցել է 4 ակադեմիական ժամ տևողությամբ:

ԱՆ նաև հայտնել է, որ վերապատրաստման ծրագրերի մասով պատասխանատու մարմինը «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպությունն է և վերապատրաստման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրել, սակայն հարկ է նշել, որ Ռազմավարությամբ որպես պատասխանատու մարմին նշված է ՀՀ արդարադատության նախարարությունը, իսկ «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» կազմակերպությունը ընդգրկված է համաձայնությամբ: Պատասխանատու մարմնի փոփոխությունը կամ նոր պատասխանատու մարմնի ավելացումը կարող է կատարվել միայն Ռազմավարության համապատասխան փոփոխությամբ և ոչ թե սեփական հայեցողությամբ:

Գործողությունը գնահատվում է որպես մասնակի իրականացված:

Գործողություն 4.	Մշակել գույքի հայտարարագրման ձևանմուշներ, ներդնել գույքագրման և գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ:
Արդյունք	Ներդրվել են գույքագրման և գնահատման հստակ չափանիշներ, պարզ և հստակ ընթացակարգեր, գույքագրման և գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ:

2020 թ. 1-ին կիսամյակի ընթացքում նախատեսված էր «Մնանկության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծ մշակել, սահմանված կարգով շրջանառել և ներկայացնել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, իսկ 2020 թ. 2-րդ կիսամյակում՝ նախագիծը պետք է հավանության արժանանար ՀՀ կառավարության կողմից:

ՀՀ ԱՆ 2020 թ. 2-րդ կիսամյակային հաշվետվության համաձայն՝ գործողությունը նշվում է որպես կատարված, սակայն կրկին ներկայացված չեն այն գործողությունները, որոնք կատարվել են քննարկվող ռազմավարական նպատակին հասնելու տեսանկյունից:

Մասնավորապես, թեև Գործողությունների թիվ 2 հավելվածում նշվում է միայն «Մնանկության մասին» օրենքում փոփոխությունների կատարում, այնուամենայնիվ հայտարարագրերի ձևանմուշները նախատեսվում են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով և այսպիսով, ՀՀ Արդարադատության նախարարի կողմից 12.03.2020 թվականին ընդունված թիվ 102-Ն հրամանով սահմանվել են գույքի հայտարարագրման ձևանմուշները:

Գույքագրման և գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ ներդնելու բաղադրիչի կապակցությամբ ԱՆ հայտնել է, որ 2019 թվականի դեկտեմբերի 12-ին «Մնանկության մասին» օրենքը լրացվել է 27.2-րդ հոդվածով, որը կարգավորում է կառավարիչի կարգապահական պատասխանատվության հարցը: Մասնավորապես, ի թիվս այլնի, իր լիազորություններն իրականացնելիս օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների ակնհայտ խախտում թույլ տալը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, որպիսի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը վերապահված է Արդարադատության նախարարին: Այսինքն, արդարադատության նախարարը, որպես լիազոր մարմին, պարտավոր է վերահսկողություն իրականացնել օրենքի պահանջների պահպանված լինելու նկատմամբ:

Հարկ է նկատի ունենալ, սակայն, որ Ռազմավարությունը որպես վերահսկողական մեխանիզմ դիտում է նաև արտաքին մարմնի (օրինակ՝ Արդարադատության նախարարություն) կողմից աուդիտի (ընտրովի ստուգումներ) իրականացումը, ինչպես նաև ներդնել գույքը գնահատող անձի ընտրության հատուկ ընթացակարգ՝ դատարանի ներգրավմամբ: Այս կապակցությամբ ԱՆ կողմից տեղեկատվություն չի տրամադրվել և մեր ուսումնասիրության արդյունքում իրականացված փոփոխություններ չեն արձանագրվել:

Առաջարկություն.

- ✚ Ներդնել նաև արտաքին մարմնի (օրինակ՝ Արդարադատության նախարարություն) կողմից աուդիտի (ընտրովի ստուգումներ) իրականացումը, ինչպես նաև գույքը գնահատող անձի ընտրության հատուկ ընթացակարգ՝ դատարանի ներգրավմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ իրականացված:

Գործողություն 5.	Մշակել սնանկության վարույթում գույքի վաճառքի իրականացման կարգը սահմանող Կառավարության որոշման նախագիծ:
Արդյունք	Կանոնակարգվել են սնանկության վարույթում պարտապանի գույքի վաճառքի հետ կապված հարաբերությունները:

2020 թ. 1-ին կիսամյակի ընթացքում նախատեսված է մշակել Կառավարության որոշման նախագիծը, շրջանառել և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ, իսկ 2020 թ. 2-րդ կիսամյակում՝ որոշումը պետք է ընդունվի:

Համաձայն ԱՆ հաշվետվության՝ Ռազմավարության ընդունումից հետո «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը, որից բխում էր այս միջոցառման իրականացումը, որոշակի փոփոխությունների է ենթարկվել, որի արդյունքում սահմանվել է, որ Արդարադատության նախարարը ընդունելու է սնանկության վարույթում գույքի վաճառքի իրականացման կարգ, որն արդեն իսկ ընդունվել է և իրացվել է ռազմավարությամբ սահմանված գործողության արդյունքը<sup>41</sup>: Ինչ վերաբերում է Կառավարության կողմից ակտի ընդունմանը, ապա Կառավարությունը սահմանելու է էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը, որի համար վերոնշյալ նախագծով սահմանվել է ժամկետ մինչև 2021 թ. մարտ ամիսը:

Հարկ է նշել, սակայն, որ էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը նույնպես սահմանվել է Արդարադատության նախարարի հրամանով՝ առանց Ռազմավարությունում փոփոխություն կատարելու<sup>42</sup>:

Գործողությունը գնահատվում է որպես իրականացված, սակայն, ինչպես նշվեց վերը, անհրաժեշտություն կա խմբագրել գործողությունը:

Գործողություն 6.	Վերանայել սնանկության դատավորների վերապատրաստման ծրագրերը:
Արդյունք	Իրավական հարցերի վերաբերյալ վերապատրաստումից բացի, իրականացվում են սնանկության դատավորների վերապատրաստումներ նաև ոչ իրավական թեմաներով, ինչպիսիք են՝ տնտեսագիտությունը, բիզնեսը, ֆինանսները, ֆինանսների կառավարումը:

<sup>41</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140258>

<sup>42</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=147753>

2020 թ. 1-ին կիսամյակի ընթացքում նախատեսված է աշխատանքների իրականացման ժամանակացույցի կազմում, համապատասխան մասնագետների ներգրավում, վերապատրաստման ծրագրերի հիմնական ուղղությունների նախագծում, իսկ 2020 թվականի 2-րդ կիսամյակում՝ կազմվել և հաստատվել են դատավորների վերապատրաստման նոր ծրագրեր:

Ըստ նշված գործողության ակնկալվող բովանդակության՝ սնանկության դատավորների վերապատրաստման առարկաները ենթակա են ընդլայնման՝ ներառելով նաև ոչ իրավական բնույթի թեմաներ:

Հարկ է նշել, որ Նպատակ 14-ում նախատեսված էր նաև հետևյալ գործողությունը, որի կատարողականը քննարկեցինք Գործողություն 3-ում՝ «Բարելավել սնանկության կառավարիչների վերապատրաստման ծրագրերը», իսկ արդյունքը՝ *Գործողություն 3-ի արդյունք*. Բարելավվել է ուսումնական նյութերի արդիականությունը, բազմազանությունը և որակը:

Վերապատրաստման ծրագրերի բարելավումը և վերանայումը ըստ էության նույն գործողություններն են և պետք է ներառվել մեկ գործողության մեջ:

Գործողությունը կրկնվող է:

Նպատակ 15.	Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում:
Գործողություն 1.	Մշակել «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ:
Արդյունք	Արբիտրաժին դիմող անձանց իրավունքներն առավել պաշտպանված են, առկա են ներդրումների պաշտպանության խթանմանն ուղղված՝ ներպետական դատարանների կողմից արբիտրաժին աջակցություն ցուցաբերելուն ուղղված կարգավորումներ:

2020 թվականի առաջին կիսամյակում նախատեսված է մշակել «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծի մշակում, շրջանառել և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ:

ԱՆ կողմից 12.08.2021թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ գործողության կատարման ապահովման նպատակով մշակվել է Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման և անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հայեցակարգ: Հարկ է նաև նշել, որ Արբիտրաժային կենտրոնի ստեղծման համար իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների տեխնիկական առաջադրանքը հրապարակված է «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի կայքէջում<sup>43</sup>:

<sup>43</sup> Տե՛ս «Հայաստանում Արբիտրաժային կենտրոնի ստեղծման համար իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների տեխնիկական առաջադրանք» [https://epfarmeria.am/hy/news/establishment-of-the-Arbitration-Center-of-the-Armenia-TOR?\\_cf\\_chl\\_jsc](https://epfarmeria.am/hy/news/establishment-of-the-Arbitration-Center-of-the-Armenia-TOR?_cf_chl_jsc)

Նշված գործողությունը վերաբերում է «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ մշակելուն և հարկ է նկատի ունենալ, որ սույն գործողությամբ ակնկալվող օրենսդրական կարգավորմամբ պետք է կատարելագործել արբիտրաժին աջակցություն ցուցաբերելուն ուղղված կարգավորումները, կատարելագործել արբիտրաժային գործընթացի անկախությունն ու ճկունությունը կարգավորող դրույթները, այդ թվում՝ ընթացակարգի և կիրառվելիք օրենքի ընտրության տեսանկյունից, քննարկել արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման, ճանաչման կամ հարկադիր կատարման դիմումների՝ դատարանի կողմից քննության գործընթացի կոնֆիդենցիալության ապահովման խնդիրը:

ԱՆ 2020 թ. 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն՝ Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Նշված գործողության կատարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագիծը չի մշակվել և չի դրվել հանրային քննարկման, ուստի գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Նպատակ 17.	Փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացում:
Գործողություն 1.	«Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ընդլայնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը:
Արդյունք	Ընդլայնվել է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ինչպես նաև վերանայվել է գույքային պահանջների գործերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար նախատեսված գումարային սահմանափակման շեմը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը նախատեսվել է մշակել, դնել քննարկման և ուղարկել ՀՀ վարչապետի աշխատակազմ 2019 թվականի երկրորդ կիսամյակում: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը նախատեսված էր, որ հավանության է արժանանալու ՀՀ կառավարության կողմից 2020 թվականի առաջին կիսամյակում:

Ռազմավարությամբ նախատեսված են հետևյալ գործողությունները. «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ընդլայնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը: «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով pro-bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգը: Հանրային պաշտպանների

ծանրաբեռնվածության եւ հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության իրականացում, ուսումնասիրության արդյունքներով համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում: Նշված 3 գործողությունների վերաբերյալ Հաշվետվությունը պարունակում է նույնաբովանադակ տեղեկություն, այն է՝ գործողությունները մասնակի են կատարված և մշակվել է անվճար իրավաբանական օգնություն ստանալու մեխանիզմների ընդլայնմանն ուղղված նախագիծ, ինչպես նաև փաստաբանների կողմից անհատույց իրավաբանական օգնության տրամադրման կարգավորումներին ուղղված հայեցակարգ, ներկայումս մշակվում է ոլորտի բարեփոխման հայեցակարգային փաստաթուղթ:

ԱՆ կողմից 12.08.2021թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «մշակվել է փաստաբանության ոլորտի բարեփոխման աշխատանքային բնույթի նոր հայեցակարգային փաստաթուղթ, որում, ի թիվս փաստաբանության ոլորտի այլ բարեփոխումների, հատուկ ուշադրություն է դարձվել անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակի ընդլայնմանը, փաստաբանների կողմից անհատույց կամավոր իրավաբանական օգնության տրամադրմանը (pro bono) խրախուսող կառուցակարգերի ներդրմանը և հանրային պաշտպանի գործունեության արդյունավետության ապահովմանը, փաստաբանների ուսուցման և որակավորման կառուցակարգերի վերաիմաստավորմանը, վարքագծի կանոնների շրջանակի վերանայմանը, փաստաբանների պալատի ներքին կառավարման համակարգերի զարգացմանը: Փաստաթուղթը նախատեսվում է դնել մշակվող օրենսդրական փաթեթի հիմնավորումների հիմքում և դրա բովանդակությանը, ըստ էության, հնարավոր կլինի ծանոթանալ նախագծի հիմնավորումներում այն հանրային քննարկման ներկայացնելուց հետո»:

ԱՆ 2020 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն՝ աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Նախագիծը չի դրվել հանրային քննարկման, ուստի գործողությունը գնահատվում է չիրականացված:

Գործողություն 2.	«Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով pro-bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգ:
Արդյունք	Ներդրվել և գործում է pro-bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը նախատեսվել է մշակել, դնել քննարկման և ուղարկել ՀՀ վարչապետի աշխատակազմ 2019 թ. երկրորդ կիսամյակում: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը նախատեսված էր, որ հավանության է արժանանալու ՀՀ կառավարության կողմից 2020 թվականի առաջին կիսամյակում:

ԱՆ 2020 թ. 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն՝ Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Նշված գործողության կատարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Նախագիծը չի դրվել հանրային քննարկման, ուստի գործողությունը գնահատվում է չիրականացված:

Գործողություն 3.	Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության իրականացում, ուսումնասիրության արդյունքներով համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում:
Արդյունք	Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության թեթևացում, հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխում:

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության իրականացումը, համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակումը, շրջանառումը և ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ ենթակա էր իրականացման 2020 թ. առաջին կիսամյակում, իսկ Նախագծի հաստատում ՀՀ կառավարության կողմից 2020 երկրորդ կիսամյակում:

ԱՆ 2020 թ. 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն՝ Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Նշված գործողության կատարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Նախագիծը չի դրվել հանրային քննարկման, ուստի գործողությունը գնահատվում է չիրականացված:

Գործողություն 4.	Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, որակավորման քննության և փաստաբանների մասնագիտական վերապատրաստման կատարելագործված կարգերի ներդրում:
Արդյունք	Ներդրվել են Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, որակավորման քննության և



փաստաբանների մասնագիտական վերապատրաստման արդիականացված ծրագրեր, որակավորման քննություններն անցկացնելու պարզությունը, օբյեկտիվությունն ու թափանցիկությունն ապահովող կառուցակարգեր:

2020 թ. առաջին կիսամյակում նախատեսված է առաջադեմ փորձի ուսումնասիրության հիման վրա իրականացնել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, փաստաբանների մասնագիտական վերապատրաստման կարիքների գնահատում, որակավորման քննության կատարելագործված կարգերի մշակում: Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, փաստաբանների 2020 թ. 2-րդ կիսամյակում՝ մասնագիտական վերապատրաստման արդիականացված ծրագրերի, ինչպես նաև որակավորման քննության կատարելագործված կարգերի ներդրում:

ԱՆ 2020 թ. 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն՝ գործողությունը նշվել է որպես մասնակի կատարված, որպես իրականացված միջոցառում նշվել է հետևյալը. «ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 21.10.2020 թ. Թիվ 21/9-Լ որոշմամբ հաստատվել է «Որակավորման քննության ընդունման հանձնման կարգի» հավելվածը հանդիսացող «Կարանտինի պայմաններում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգը»: Շարունակվում է համընդհանուր հեռավար վերապատրաստումների կազմակերպումը:

Հարկ է նշել, սակայն, որ նշված գործողության տակ Ռազմավարությունը ամեննին նկատի չունի կարանտինի պայմաններում ուսուցման կազմակերպումը, այլ հետևյալը.

«Առաջնային է փաստաբանական դպրոցում մասնագիտական ուսուցման գործընթացի շարունակական կատարելագործումը, ինչպես նաև որակավորման քննություններն անցկացնելու կառուցակարգերի պարզության, օբյեկտիվության ու թափանցիկության ապահովումը: Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը չպետք է վերածվի սոսկ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալուն ուղղված ձևական գործընթացի, այլ պետք է ապահովի փաստաբանի համար գործնական նշանակություն ու կարևորություն ունեցող հմտությունների և ունակությունների դասավանդումը: Իսկ դրա համար անհրաժեշտ է հետևողականորեն և շարունակական հիմունքներով իրականացնել կրթական ծրագրերի արդիականացում և համապատասխանեցում ժամանակակից պահանջներին և միջազգայնորեն ընդունված չափանիշներին, խստացնել փաստաբանական դպրոցում դասավանդելու նպատակով դասախոսների ընտրությանը ներկայացվող չափանիշները»<sup>44</sup>:

Հաշվետվության համաձայն՝ աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

<sup>44</sup> Ռազմավարություն, Հավելված 1, էջ 67

Գործողություն 5.	Փաստաբանների պալատի հետ համագործակցությամբ բարելավել փաստաբանների վարքագծի կանոնները:
------------------	---

Արդյունք	Փաստաբանների վարքագծի կանոնները բարելավված են:
----------	--

2020 թվականի առաջին կիսամյակում նախատեսված է մշակել և քննարկման դնել Փաստաբանի վարքագծի կանոնների բարելավման նախագիծը, իսկ 2020 թվականի 2-րդ կիսամյակում՝ նախագիծը հաստատել Փաստաբանների պալատի կողմից:

ԱՆ 2020թ. 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն՝ Ներկայումս մշակվում է ոլորտի բարեփոխման հայեցակարգային փաստաթուղթ: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Քանի որ Փաստաբանների վարքագծի կանոնները չեն փոփոխվել և բարելավվել, ուստի Գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 6.	«Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով Փաստաբանների պալատի ինքնակառավարման գործուն կառուցակարգեր:
------------------	---

Արդյունք	Ներդրվել են Փաստաբանների պալատի ինքնակառավարման գործուն կառուցակարգեր:
----------	--

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը նախատեսվել է մշակել, դնել քննարկման և ուղարկել ՀՀ վարչապետի աշխատակազմ 2020 թ. առաջին կիսամյակում:

ԱՆ 2020 թ. 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն՝ Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Նշված գործողության կատարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Նախագիծը չի դրվել հանրային քննարկման, ուստի գործողությունը գնահատվում է չիրականացված:

Հավելված 4-ում սահմանված չկատարված կամ մասնակի կատարված գործողությունները:
--

Նպատակ 1.	Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրում:
-----------	--

Թվային դարաշրջանում առկա էլեկտրոնային համակարգերը արդարադատության ոլորտի համար առաջացնում են նոր մարտահրավերներ և հնարավորություններ: Ներկայումս մշակված են արդարադատության ոլորտի էլեկտրոնային մի շարք համակարգեր և Ռազմավարության այս նպատակը միտված է այդ համակարգերի փոխգործելիության ապահովմանը և այդ համակարգերի արդիականացմանը: Այնուամենայնիվ, Ռազմավարությունը չի սահմանել մի կարևորագույն համակարգի՝

«ԴատաԼԵքս» դատական տեղեկատվական համակարգի արդիականացման և դատական ակտերի ապաստանվորման վերաբերյալ գործողություն<sup>45</sup>:

«ԴատաԼԵքս» դատական տեղեկատվական համակարգում ամեն օր հրապարակվում են հարյուրավոր դատական ակտեր, որոնցով բացահայտվում են անձնական՝ կենսաչափական, հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, անձի անձնական և ընտանեկան կյանքին առնչվող տեղեկություններ: Ընդ որում, նշված տվյալների՝ «ԴատաԼԵքս» դատական տեղեկատվական համակարգում հրապարակվելուց հետո հեռացման կամ ոչնչացման կարգ նախատեսված չէ, ինչը ենթադրում է անձի անձնական տվյալների հասանելիություն այլ անձանց համար: Հատկապես մտահոգիչ է այնպիսի զգայունության անձնական տվյալների հրապարակումը, որոնք առնչվում են անձի ֆիզիկական և հոգեկան առողջությանը, մարդու իմունային անբավարարության հարուցիչով (ՄԻԱՎ) վարակված լինելու հանգամանքին: Հազարավոր դատական ակտերում նշվում են կողմերի անձնագրային տվյալները, հաշվառման հասցեները: Որոշ դեպքերում համակարգում ձևական առումով գործադրվում են միջոցներ անձնական տվյալները «փակելու» ուղղությամբ, սակայն դատական ակտի ուսումնասիրությունից անձի ինքնությունը բացահայտվում է: Մասնավորապես, անձին հարկադիր հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ մի շարք դատական գործերով թեև «Պատասխանող» դաշտը դատարկ է թողնվում, այնուամենայնիվ «Պահանջ» դաշտում և դատական ակտում լրացվում է անձի անուն-ազգանունը, որով բացահայտվում է անձի ինքնությունը:

«ԴատաԼԵքս» դատական տեղեկատվական համակարգի միջոցով որոշակի առումով ապահովվում է դատավորների հաշվետվողականությունը և դատական ակտերը հանրությանը հասանելի դարձնելը երաշխավորում է դատավորների գործունեության թափանցիկությունը, սակայն դատական համակարգի գործունեության հանրային հաշվետվողականության բարձրացումը չի կարող իրականացվել անձի մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության իրավունքների խախտմամբ:

Դատական ակտերի որոնման համակարգում դատավարության մասնակիցների անձնական տվյալների պաշտպանության ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը դեռևս նախատեսված էր ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ծրագրով: Թեև գործողությունը չի կատարվել, սակայն վերջինս ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների 2016 թվականին

<sup>45</sup> «ԴատաԼԵքս» դատական տեղեկատվական համակարգում անձնական տվյալների պաշտպանության և ապաստանվորման խնդրի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը տե՛ս <https://hcav.am/wp-content/uploads/2021/10/%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D4%BC%D5%A5%D6%84%D5%BD-%D5%80%D5%94%D4%B1%D5%8E-%D5%A4%D5%AB%D6%80%D6%84%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8.pdf>

կատարման վիճակի վերաբերյալ հաշվետվությամբ նշվել է որպես ամբողջությամբ կատարված՝ մանրամասնելով, որ «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգում անձնական տվյալները «փակվել» են 2015 թվականի մայիսի 18-ին ընդունված և 2015 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների հիման վրա, որոնք սահմանում են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները:

Ի ապահովումն «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի՝ Բարձրագույն դատական խորհուրդը 2018 թվականի սեպտեմբերի 27-ին կայացված թիվ ԲԴԽ-40-Ո-105 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանել է դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման կարգը և անձնական տվյալների ապանձնավորման այլ դեպքերը:

Բարձրագույն դատական խորհուրդը սահմանել է նաև ապանձնավորման պարտավորություն «դատական համակարգում» հրապարակվող դատական ակտերի հետ կապված՝ պատվիրակելով ներդնել ապանձնավորման ծրագիր և անձնական տվյալների պաշտպանության պարտականությունը յուրաքայտուր գործով դնելով տվյալ գործով նախագահող դատավորի վրա: Դատական ակտերի ապանձնավորման ծրագիրը, սակայն, մինչ օրս ներդրված չէ, իսկ դատավորների ներկայիս ծանրաբեռնվածության և մշակվող անձնական տվյալների ծավալի պայմաններում առանց ծրագրային ապահովման անհնար է իրականացնել դատական ակտերի ապանձնավորումը: Ընդ որում, բացի ապանձնավորման ծրագրի ներդրումից, հարկ է լուծել նաև դատական տեղեկատվական համակարգում արդեն իսկ առկա և հանրությանը հասանելի անձնական տվյալների հեռացման խնդիրը, քանի որ այն նպատակը, որը հետապնդում է «Դատական համակարգում» տվյալների հրապարակումը՝ դատական իշխանության գործունեության թափանցիկությունը և հանրային իրազեկվածությունը, քննված և ավարտված գործերով այլևս առկա չէ, ուստի նման տեղեկատվությունը նույնպես ենթակա է հեռացման:

Այսպիսով, Ռազմավարության Հավելված 4-ում հարկ է նախատեսել «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգի արդիականացման և դատական ակտերի ապանձնավորման վերաբերյալ գործողություն:

- ✚ «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգի արդիականացումը կապահովի դատական գործերի և նիստերի ժամանակացույցերի որոնողական համակարգի արդիականացմանը, «Խելացի որոնման» հնարավորությունը նաև քաղաքացիական և վարչական գործերի համար նախատեսելուն և մի շարք այլ հնարավորությունների զարգացմանը:

«ԴատաԼԵքս» դատական տեղեկատվական համակարգում ներդնել ապաստանավորման ծրագիր՝ այդ թվում ապահովելով արդեն իսկ առկա անձնական տվյալների հեռացումը:

Գործողություն 1.	Իրականացնել արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանների և էլեկտրոնային համակարգերի ուսումնասիրություն:
Արդյունք	Գույքագրվել են արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանները և էլեկտրոնային համակարգերը, վերհանվել են վերոնշյալ մարմիններում ներդրված համակարգերում և տվյալների շտեմարաններում առկա բացերը:

2019 թ. 2-րդ կիսամյակում նախատեսված է Իրականացնել արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանների և էլեկտրոնային համակարգերի ուսումնասիրություն, իսկ 2020 թ. 1-ին կիսամյակում՝ գույքագրել արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանները և էլեկտրոնային համակարգերը, որոնք հասանելի են Փոխգործելիության լուծումների Catis կատալոգում:

ԱՆ 2020 թ. 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն՝ գույքագրվել են արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանները և էլեկտրոնային համակարգերը, որոնք հասանելի են Փոխգործելիության լուծումների Catis կատալոգում: ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը կազմել է արդարադատության ոլորտի էլեկտրոնային համակարգերի ուսումնասիրության արդյունքում ձևավորված տվյալների շտեմարան:

Գործողությունը գնահատվում է որպես իրականացված:

Գործողություն 2.	Մշակել էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ընդհանուր տեխնիկական նկարագիրը:
Արդյունք	Մշակվել է էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ընդհանուր տեխնիկական նկարագիրը:

Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ընդհանուր տեխնիկական նկարագրի մշակումը և ներկայացումը կարծիքի շահագրգիռ մարմիններին նախատեսված է 2020 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում: Տեխնիկական նկարագրի մշակումը դեռևս ավարտված չէ, արտակարգ և ռազմական դրություններով պայմանավորված գործընթացը որոշակի ժամկետով կասեցվել էր, սակայն 2020 թ. դեկտեմբերի 15-ից սկսվել են էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի տեխնիկական նկարագրի մշակման աշխատանքները: ԱՆ կողմից 12.08.2021 թ. տրամադրած տեղեկատվության համաձայն՝ էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ընդհանուր տեխնիկական նկարագիրը

մշակվել է: Համակարգի մշակման և ներդրման աշխատանքները նախատեսվում են ավարտին հասցնել մինչև 2023 թ.:

Գործողությունը գնահատվում է որպես իրականացված:

Գործողություն 3.	ՀՀ վարչական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարել փոփոխություններ՝ վերանայելով էլեկտրոնային եղանակով ծանուցումները:
Արդյունք	«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ:

2020 թ. 1-ին կիսամյակում նախատեսված է մշակել «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը, շրջանառել և ուղարկել ՀՀ վարչապետի աշխատակազմ, իսկ 2020 թ. 2-րդ կիսամյակում՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերի հաստատումը ՀՀ կառավարության կողմից:

Այսպիսով, նշված գործողությունն ունի 2 բաղադրիչ.

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ծանուցման կարգի բարելավումը,
- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ծանուցման կարգի բարելավումը:

Նշենք, որ Նպատակ 13-ը, այն է՝ «Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում» նպատակը նախատեսում է «Վարչական դատավարությունում ծանուցման ընթացակարգերի բարելավում» գործողությունը, որը մեծամասամբ վերաբերում է էլեկտրոնային ծանուցման կարգի ներդրմանը: Նշված գործողության կատարման վիճակի վերաբերյալ գնահատակնը ներկայացրել է վերը:

Այսինքն, սույն բաղադրիչի մասով գործողությունը կրկնվող գործողություն է: Նշվածի մասին է վկայում նաև ԱՆ 2020 թ. 2-րդ կիսամյակային հաշվետվությունը, որում նշվում է, որ Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի օրենքի նախագիծը մշակվել է և ներկայացվել է հանրային քննարկման: Իսկ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերաբերյալ Հաշվետվությունում նշվել է, որ նախատեսված է էլեկտրոնային ծանուցումների հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ գործողությունը մի մասով կրկնվող գործողություն է, իսկ մյուս մասով չի բխում Ռազմավարությունից, քանի որ

Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը էլեկտրոնային ծանուցման հնարավորությունը նախատեսում է դեռ 2018 թ.-ից:

Գործողություն 4.	Արդիականացնել դատարաններում գործող էլեկտրոնային կառավարման համակարգերը, ներդնել և գործարկել էլեկտրոնային դատարանների համապարփակ համակարգ:
Արդյունք	Արդիականացվել են դատարաններում գործող էլեկտրոնային կառավարման համակարգերը, ներդրվել և գործարկվել է էլեկտրոնային դատարանների համապարփակ համակարգը:

2020 թ. 1-ին եռամսյակում նախատեսված էր ներդնել և գործարկել էլեկտրոնային կառավարման միասնական համակարգը, որի շրջանակներում կստեղծվի էլեկտրոնային դատական գործ՝ ապահովելով առցանց եղանակով գործի նյութերին ծանոթանալը, պատճեններ ստանալը, ապացույցներ ներկայացնելը, միջնորդություններ և դատավարական այլ գործողություններ կատարելը. 2020 թ. երկրորդ եռամսյակում՝ գործերի մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյանի դատարան և միևնույն ատյանի դատարանի նստավայրերի միջև փոխանցումների իրականացումը:

ԱՆ-ը Կազմակերպության հարցմանն ի պատասխան հայտնել է. «Էլեկտրոնային դատարանների միասնական համակարգի տեխնիկական առաջադրանքը գտնվում է մշակման փուլում, որի բաղադրատարերը հետևյալներն են.

- Քաղաքացիական գործերով էլեկտրոնային համակարգ- Քաղաքացիական գործերով էլեկտրոնային համակարգը բաղկացած է լինելու չորս մոդուլներից՝ «Ընդհանուր հայցային վարույթ», «Հատուկ հայցային վարույթ», «Հատուկ վարույթ» և «Վճարման կարգադրություն» մոդուլներ: Ներկայումս ներդրվել և գործարկվել է «Վճարման կարգադրություն» մոդուլը ([cabinet.armlex.am](http://cabinet.armlex.am)), որով նախատեսվում է վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի ամբողջական թվայնացումը, մասնավորապես՝ համակարգի միջոցով հնարավոր է էլեկտրոնային եղանակով ներկայացնել վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում, առարկել վճարման կարգադրության դեմ, ներկայացնել ապացույցներ, հետևել գործի ընթացքին, մուտք գործել անձնական գրասենյակ, ստանալ ծանուցումներ, ծանուցվել էլեկտրոնային փոստի կամ հիբրիդ փոստի (Հայփոստ) միջոցով և կատարել այլ դատավարական գործողություններ: Համակարգի մշակման աշխատանքները մնացած մոդուլների մասով գտնվում են ընթացքի մեջ:
- Քրեական գործերով էլեկտրոնային համակարգ- Մշակվել է քրեական գործերով էլեկտրոնային համակարգի մաս կազմող քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի տեխնիկական առաջադրանքը: Ներկայումս ընթանում են համակարգի մշակմանն ու ներդրմանն ուղղված աշխատանքները:
- Սնանկության գործերով էլեկտրոնային համակարգ - Մշակվել է էլեկտրոնային սնանկության համակարգի տեխնիկական նկարագիրը, իսկ ներկայումս

իրականացվում են համակարգի մշակմանն ու ներդրմանն ուղղված աշխատանքներ:

- Վարչական գործերով էլեկտրոնային համակարգ- Վարչական գործերով էլեկտրոնային համակարգի մշակման և ներդրման աշխատանքները դեռևս սկսված չեն:

Այսպիսով, ըստ էության ներդրվել է միայն «վճարման կարգադրությունների մոդուլը», ուստի գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ չիրականացված:

<p>Հավելված 4. Նպատակ 2.</p>	<p>Արդարադատության բնագավառի էլեկտրոնային համակարգերի և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում:</p>
<p>Գործողություն 1. Արդյունք</p>	<p>Էլեկտրոնային նոտարական e-notary համակարգի զարգացում: ««ՀՀ Նոտարիատի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Էլեկտրոնային e-notary համակարգի միջոցով իրականացվում է նոտարի կողմից էլեկտրոնային տեսահաղորդակցության միջոցներով գործարք վավերացում և փաստաթղթեր փոխանակում (փոխանցում):</p>

2020 թ. 2-րդ կիսամյակում նախատեսված էր մշակել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը, սահմանված կարգով շրջանառել և ուղարկել ՀՀ վարչապետի աշխատակազմ:

««Նոտարիատի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծեր չեն դրվել հանրային քննարկման, բացի այդ, որպես գործողության մասնակի կատարված լինելը հավաստող միջոցառումներ ՀՀ արդարադատության նախարարությունը նշել է. «նախարարության կողմից մշակվել և շրջանառվել է նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով կնքված գործարքների վավերացման, անհրաժեշտ փաստաթղթերի փոխանակման էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքը, որի արդյունքում լրամշակված տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Աշխատանքներն ընթանում են ըստ սահմանված ժամանակային գրաֆիկի»:

Այսպիսով, հաշվի առնելով, որ գործողության առաջին բաղադրիչի արդյունքը նախագծերի մշակումն է, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ



կատարելու մասին» օրենքի նախագծերի մշակման, սահմանված կարգով շրջանառելու և ՀՀ վարչապետի աշխատակազմ ուղարկելու բաղադրիչը գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 2.	Նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա էլեկտրոնային պայմանագրերի և փաստաթղթերի փոխանակման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի ներդրում:
Արդյունք	Ներդրվել է էլեկտրոնային կառավարման համակարգ, որն ապահովում էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա էլեկտրոնային պայմանագրերի և փաստաթղթերի փոխանակումը. կատարողական մակագրության թերթի տրամադրումը:

2020 թ. երկրորդ կիսամյակում նախատեսված էր հաստատել էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա պայմանագրերի տիպային ձևերի և դրանց էլեկտրոնային վավերացման կարգը:

ԱՆ կողմից 14.09.2021 թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ մշակվել և շրջանառվել է նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով կնքված գործարքների վավերացման, անհրաժեշտ փաստաթղթերի փոխանակման էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքը, որի արդյունքում լրամշակված տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

Գործողության առաջին բաղադրիչը գնահատվում է որպես իրականացված:

Գործողություն 3.	ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի և անհատական ծանուցումների համակարգի արդիականացում: Անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգի ստեղծում:
Արդյունք	Գործում է անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգը: Պարզեցվել է հրապարակային և անհատական ծանուցումների ոլորի վարչարարությունը:

2020 թ. երկրորդ կիսամյակում նախատեսված էր կազմել անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգի տեխնիկական առաջադրանքը:

ԱՆ-ը Հաշվետվությունում գործողությունը ներկայացրել է որպես կատարված՝ նշելով, որ «Քաղաքացիների պաշտոնական էլեկտրոնային փոստի, ինչպես նաև հրապարակային ծանուցումների միասնական էլեկտրոնային համակարգի ստեղծման նպատակով ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակի հետ համատեղ մշակվել է տեխնիկական բնութագիրը և ներկայացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող

ծրագրերում ներառելու առաջարկ: Մրցույթի արդյունքում հաղթող կազմակերպությունը ներկայացրել է ծրագրի իրականացման պլան: Տարվել են աշխատանքներ 2019 թվականի ընթացքում ծանուցումների ծավալների վերլուծության ուղղությամբ համակարգի պահանջվող հզորությունը հասկանալու նպատակով: Աշխատանքների իրականացման ներկա փուլում կապալառու կազմակերպությունը կատարում է առկա համակարգերի ուսումնասիրություն և վերլուծություն, որը ներկայացվելու է պատվիրատուի հաստատմանը»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գործողությունը գնահատվում է որպես իրականացված:

Գործողություն 4.	Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացում:
Արդյունք	Արդիականացվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգը և համապատասխանում է արդի պահանջներին:

2020 թ. երկրորդ կիսամյակում նախատեսված էր կազմել էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքը:

ԱՆ կողմից 14.09.2021 թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացում» գործողության շրջանակներում փոխվարչապետի գրասենյակ է ուղարկվել e-register.am էլեկտրոնային համակարգի արդիականացման տեխնիկական նկարագրի մշակման վերաբերյալ ծրագիրը, իսկ տեխնիկական նկարագիրը դեռևս մշակված չէ: Այսպիսով, թեև ծրագիրը մշակվել է, սակայն տեխնիկական առաջադրանքը դեռևս կազմված չէ:

Գործողությունը՝ էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքը մշակելու բաղադրիչի մասով գնահատվում է որպես չիրականացված:

Գործողություն 5.	Այլընտրանքային վեճերի լուծման էլեկտրոնային համակարգի ներդրում:
Արդյունք	Այլընտրանքային վեճերի լուծման էլեկտրոնային համակարգի ներդրում:

2020 թ. 2-րդ կիսամյակում նախատեսվել էր իրականացնել օրենսդրական փոփոխություններ, որով կապահովվեր այլընտրանքային վեճերի էլեկտրոնային եղանակով լուծումը: Նույն ժամանակահատվածում նախատեսվել էր մշակել այլընտրանքային վեճերի լուծման էլեկտրոնային համակարգի տեխնիկական նկարագիրը: Նշված գործողության պատասխանատու մարմինները Արդարադատության և Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություններն են և Բարձրագույն դատական խորհուրդը (համաձայնությամբ):

ՀՀ ԱՆ կողմից հրապարակված 2020 թ. 2-րդ կիսամյակային հաշվետվությունում նշված է, որ գործողությունը կատարված չէ, սակայն չկատարելու պատճառների մասին Նախարարությունը որևէ պատճառաբանություն չի ներկայացրել: Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և սույն թվականի մայիսի 14-30-ը ընկած ժամանակահատվածում հանրային քննարկման է դրվել «Հաշտարարության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որով, ի թիվս այլնի, սահմանվել են առցանց հաշտարարության վերաբերյալ իրավակարգավորումները<sup>46</sup>: Ներկայումս նշված օրենսդրական փաթեթի նախագիծը ներկայացված առաջարկների հիման վրա գտնվում է լրամշակման փուլում: Ակնկալվում է նախագծերի լրամշակված տարբերակը Վարչապետի աշխատակազմ ներկայացնել մինչև 2021 թ. երկրորդ կիսամյակի ավարտը:

Այսպիսով, գործողությունն օրենսդրական փոփոխությունների իրականացման և, այլընտրանքային վեճերի լուծման էլեկտրոնային համակարգի տեխնիկական նկարագրի մշակման բաղադրիչների կատարման մասով գնահատվում է որպես չիրականացված:

---

<sup>46</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/3259> :

## Հավելված 1.

Գործողությունները, որոնք չեն կատարվել կամ դրանց կատարումը հետաձգվել է ՀՀ-ում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով հայտարարված ռազմական դրության և նոր կորոնավիրուսային համավարակի հետևանքով:

1. «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով Փաստաբանների պալատի ինքնակառավարման գործուն կառուցակարգեր:
2. Փաստաբանների պալատի հետ համագործակցությամբ բարելավել փաստաբանների վարքագծի կանոնները
3. Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, որակավորման քննության և փաստաբանների մասնագիտական վերապատրաստման կատարելագործված կարգերի ներդնում
4. Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության իրականացում, ուսումնասիրության արդյունքներով համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում:
5. «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով pro-bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգը:
6. «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ընդլայնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը:
7. Վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման արդյունավետ մեխանիզմների ներդնում:
8. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով վարչական ակտերի պարտադիր բողոքարկման ընթացակարգեր:
9. Վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակի ընդլայնումը
10. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով ծանուցումների նոր ընթացակարգեր:
11. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ վերանայելով հատուկ վարույթների տեսակները
12. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառության ընթացքում ծագած խնդիրների առանձնացում և դրանց լուծման նպատակով փոփոխությունների կատարում:
13. Մշակել ՀՀ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի և նշված օրենքներից բխող այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված նախագծեր:
14. Մշակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված օրենքների նախագծեր:
15. Մշակել «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ: